

ՅՈՒ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Լ. ԹԵԼՅԱՆ, Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԴԻ ՆԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

- ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ
- ՆԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Լ. ԹԵԼՅԱՆ, Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

- **ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ**
- **ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ

2020

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.22

Ա 791

Գիրքը հրատարակության է պատրաստվել ՀՀ ԳՊԿ դրամաշնորհով (գիտական թեման՝ «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ»):

Հրատարակության են երաշխավորել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը և հայոց լեզվի ամբիոնը:

Խմբագիր՝ Լ. Ավետիսյան (բ. գ. թ., դրց.)

Գրախոսներ՝ Մ. Ֆելեքյան (բ. գ. թ.), Լ. Մելքոնյան (բ. գ. թ.)

Ա 791 Արդի հայերենի բառապաշարը: Զարգացման միտումներ: Հիմնախնդիրներ / Յու. Ավետիսյան, Լ. Թելյան, Լ. Սարգսյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2020, 174 էջ:

Գիրքն ամփոփում է «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» գիտական թեմայի ծրագրի շրջանակներում կատարված հետազոտական աշխատանքի հիմնական արդյունքները:

Նախատեսված է մասնագետների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են արդի հայերենի բառային կազմի զարգացման ու կանոնարկման խնդիրներով:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.22

ISBN 978-5-8084-2455-5

© ԵՊՀ հրատ., 2020

© Ավետիսյան Յու., Թելյան Լ., Սարգսյան Լ., 2020

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայերենի բառապաշարի ուսումնասիրությունը մըշտապես եղել է առանցքային խնդիր հայ լեզվաբանության մեջ. գրվել են տեսական ու գործնական աշխատանքներ, կազմվել են բառարաններ, կազմակերպվել գիտական քննարկումներ, զանգվածային լրատվամիջոցներում պարբերաբար տեղ է հատկացվել հանրամատչելի հրապարակումների, ստեղծվել են տեղեկատուներ և ուղեցույցներ: Այս բոլորով հանդերձ, սակայն, հարցի ուսումնասիրությունը չի կորցնում իր արդիականությունը, քանի որ լեզվի բառային կազմի փոփոխությունը անընդհատ գործընթաց է, որը մշտապես կարիք ունի մասնագիտական «վերահսկողության» և ուղղորդումների: Այս աշխատանքը այդպիսի վերահսկողության փորձերից է: Այն անդրադառնում է վերջին երկու տասնամյակում արդի հայերենի բառապաշարում կատարվող տարաբնույթ փոփոխությունների: Չարգացման միտումներ, նորմավորման հնարավորություններ, դասակարգում և տերմինային ճշգրտումներ, նորագույն փոխառությունների, հայերեն համարժեքների և նոր բառիմաստների գործառական յուրահատկություններ, բառագործածության ցուցումներ. ահա սրանք են այն խնդիրները, որոնք քննարկվում և ներկայացվում են սույն մենագրության մեջ:

Գիրքը կառուցված չէ սուկ տեսական հանձնարարականներ մատուցելու տրամաբանությամբ. դա բնավ էլ

բավարար պայման չէ բառապաշարի արդյունավետ յուրացման և կամ գրագետ հաղորդակցության: Հաճախ շատ ավելի մեծ արդյունքներ է տալիս լեզվական մեկ փաստի կամ օրինակի հաջող ընտրությունը: Առաջնորդվելով այս համոզմամբ՝ շարադրանքում ընդգրկել ենք հնարավորինս շատ գործնական նյութ:

Բացի այդ՝ գիրքը չի փորձում լսարանին ներկայանալ օրենսդրական առաքելությամբ: Տերմինային ճշգրտումները, լուծման հնարավոր ուղիների փնտրտուքը, տարբերակների նախընտրությունը և գործնական նյութի ընտրությունն ու մատուցումը ունեն առավելապես խորհրդատվական բնույթ և կոչված են լեզվակիրառողին կողմնորոշելու բառապաշարային այնպիսի իրողություններում, որոնք՝

- տարակարծությունների առիթ են տալիս. տարբեր աղբյուրներում տարբեր կերպ են մեկնաբանվում և ներկայացվում,
- տեղաշարժերի ու զարգացումների արգասիք են և տակավին արձանագրված չեն մասնագիտական գրականության մեջ:

Մենագրության մեջ եղած հարցադրումներն ու առաջարկները կարող են ուղեցույց լինել արդի գրական հայերենի բառային կազմի մշակման և զարգացման համար:

Շնորհակալությամբ կընդունենք գրքի մասին արված առողջ դիտողություններն ու առաջարկները:

Մ Ա Ս 1.

ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Բառապաշարը անմիջաբար և շատ արագ է արձագանքում հանրային կյանքի գործընթացներին. համալրվում է նոր բառերով, կրում է իմաստային փոփոխություններ, դրսևորում է բառակազմության ու բառագործածության աննախադեպ կերպեր ու եղանակներ: Դրանք հիմնականում պայմանավորված են հասարակական կյանքի զարգացումներին ակտիվ արձագանքելու լեզվի ներքին ունակությամբ:

Պայմանավորված նաև այլ գործոններով՝ արդի արեվելախայերենի բառապաշարը կրել է ներհամակարգային էական փոփոխություններ, ձեռք է բերել զարգացման աննախընթաց տեմպեր, որոնք հաճախ հախուռն և չհամակարգված դրսևորումներ են ունենում: Էապես անգործության է մատնված այն գործիքակազմը, որով այս ոլորտում պետք է շատ արագ և որոշակի ուղղություններով իրականացվեն զսպողի, ուղղորդողի և կարգավորողի գործառույթները: Բառապաշարի մշակման, նորմավորման ու զարգացման ներկայիս հիմնախնդիրները լուծելու համար պետք է մշակել մասնագիտական որոշակի մոտեցումներ և բանիմաց լեզվաքաղաքականություն:

Ներկայացվող հարցերը, առաջարկվող սկզբունքներն ու ճշգրտումները նպատակ ունեն օգնելու մասնագի-

տական լսարանին և համապատասխան կառույցներին լուծումներ տալու բառապաշարի նորմավորման և զարգացման ոլորտներում կուտակված խնդիրներին:

**1.1. «ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ»-Ի ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ
ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐՄԸ. ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄ**

Քննարկվող տեղեկատուն շատ ուշագրավ որոշումներ է ամփոփում արդի գրական հայերենի բառային կազմի կարգավորման և քերականական իրողությունների նորմավորման վերաբերյալ: Դրանց շնորհիվ հայերեն նոր բառացանկերի հաստատումով մեծապես համալրվել է հայերենի բառապաշարը, ճշգրտվել են հայերենի տերմինակազմության սկզբունքները, հստակեցվել են ձևաբանական կազմություններ և խնդրառական իրողություններ: Այսուհանդերձ, նույն այս իրողությունների առանձին դրսևորումների վերաբերյալ կան տարակարծություններ, որոնք կարիք ունեն հստակեցման, նոր քննարկումների և մոտեցումների:

Այսպես: Հայերենի բառապաշարի հարստացման ուղիները և տերմինակազմության սկզբունքները կարծես թե ճշգրտված են. հիմնական ուղին մեր լեզվի բառաստեղծման հարուստ ու բազմազան միջոցներն են,

օժանդակ աղբյուրներ են գրաբարի և բարբառների բառապաշարը, կատարվող իմաստափոխությունները, ինչպես նաև արևմտահայ լեզվի բառային կազմը: Մյուս կարևոր ուղին այլ լեզուներից կատարված փոխառություններն են՝ օտար բառերն ու բառապատճենումները: «Դարերով վիճել են և շարունակում են վիճել, թե մայրենի բառերի կողքին որտեղ և ինչ չափով կարելի է գործածել օտար բառեր: Քանի կան տարբեր լեզուներ ու լեզվական ազդեցություններ, կլինեն և այս վեճերը: Եթե կան մարդիկ, որոնք այս թեմայի շուրջը գրում են այդ վեճերին վերջ տալու նպատակով, ապա իզուր են գրում»¹:

Դժվարություններ և տարակարծություններ են ծագում մասնավորապես երկրորդ դեպքում՝ փոխառությունների հարցում: Ավելորդ չենք համարում ստորև համառոտ ներկայացնել օտար լեզուներից փոխառություններ կատարելու կամ դրանց հայերեն համարժեքների կազմության ու գործածության սկզբունքները, որոնք ընդհանուր գծերով ներկայացված են տերմինաբանական կոմիտեի որոշումներում²: **ա)** Թույլ չտալ հայերեն այնպիսի բառերի / տերմինների փոխարինումը օտար բառերով / տերմիններով, որոնք մտնում

¹ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 13. այսուհետև շարադրանքում՝ Տեղեկատու, և էջը:

² «Հայոց լեզվի կանոնարկման ընդհանուր սկզբունքները» նախագիծը կազմել է Գ. Սևակը (հաստ. է տերմ. կոմիտեի 1955 թ. հուլիսի նիստում), իսկ «Հայերենի տերմինակազմության սկզբունքները»՝ Գ. Ջահուկյանը (հաստ. է տերմ. կոմիտեի 1986 թ. հունիսի նիստում). վերջինով վերահաստատվում և մասամբ լրացվում են նախորդ նախագծի հիմնադրույթները:

են բառային կազմի գործուն մասի, հատկապես բառային հիմնական ֆոնդի մեջ: **բ)** Փոխառել այնպիսի բառեր, որոնց համարժեքը հայերենում չկա և հայերենի բառակազմական միջոցներով հաջող կազմել հնարավոր չէ: **գ)** Փոխառություններ կատարել՝ դրանց տալով հայերենի արտասանական և ուղղագրական ձև. սակայն եթե հայերենի լեզվական միջոցները հնարավորություն են տալիս, այդ դեպքում բառի հայերեն ձևավորումը հնարավորին պետք է մոտեցնել փոխառու լեզվի արտասանությանը: **դ)** Պատմական ժառանգությունը չխախտելու նպատակով լայն գործածության մեջ գտնվող տերմինները այլ տերմիններով փոխարինել միայն ամենաանհրաժեշտ դեպքերում: **ե)** Գիտությունների մեծ մասում գործածվող միևնույն ծագման օտար տերմինի դիմաց նոր տերմին ստեղծել միայն ամենաանհրաժեշտ դեպքերում, երբ սովյալ գիտության մեջ գործածվող իմաստը խիստ պայմանականորեն է կապվում այլ գիտությունների մեջ գործածվող համապատասխան տերմինի առաջնային / սկզբնական իմաստին:

Իսկ բուն տերմինակազմական տարբերակների հնարավորության դեպքում հանձնարարվում է ընդհանրապես խուսափել խիստ երկար, բազմաբաղադրիչ և դժվարարտասանելի տերմինների ստեղծումից. առավելություն տալ այն տարբերակին, որը մնացած պայմանների հավասարության դեպքում ավելի կարճ է, դյուրահունչ: Խուսափել նաև որևէ տեսակետից առավելություն չունեցող հավելություն ու նույնանիշ տերմինների ստեղծումից (տե՛ս Տեղեկատու, 22-44):

Որպես ելակետ ունենալով հայերենի բառային կազմի մշակման ու զարգացման այս սկզբունքները՝ տերմինաբանական կոմիտեն մեծ գործ է կատարել հայերենի տերմինային համակարգը նորակազմ բառերով ու բառիմաստներով հարստացնելու, ըստ անհրաժեշտության՝ նաև օտար բառեր ու տերմիններ ներմուծելու առումներով. ճշգրտվել ու հաստատվել են ռուսերենում և հայերենում տարբեր գրություն և արտասանություն ունեցող մոտ աշխարհագրական 800 անունների ու պատմական անձանունների տառադարձությունը (1958 թ.), կերակուրների, տարբեր տեսակի ուտելիքների ու մթերային ապրանքների մոտ 750 անուններ (1959 թ.), հաստատել է աշխարհագրական, երկրաբանական և այլ կարգի մասնագիտական մոտ 150 բառ ու բառակապակցություն տերմին, վերացրել է 58 օտար բառերի ու տերմինների և սրանց հայերեն նույնանիշ ձևերի գործածության զուգահեռությունը, հաստատել է 40 ռուսերեն և այլ օտար հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական և մարզական տերմինների հայերեն թարգմանությունը (1961 թ.), ընդունել է մաթեմատիկական տերմիններին վերաբերող վեց որոշում, որոնցում հայերենացված կամ ճշգրտված ու վերահաստատված են 300-ից ավելի բառ ու բառակապակցություն տերմիններ, ճշգրտվել է տեխնիկական ավելի քան 70 բառ ու բառակապակցություն տերմինների հայերեն տառադարձությունը (1974-1987 թթ.): ՀՀ Կառավարությանն առընթեր հայերենի բարձրագույն խորհուրդը 1990-2003 թթ. ընդունել է որոշումներ, որոնցով կարգավորվել են տարբեր գիտաճյուղերի և

ուրտաների վերաբերող մի քանի հարյուր բառեր և տերմիններ և այլն (տե՛ս նույն տեղը): Մակայն, ինչպես տեսնում ենք, շուրջ մեկ տասնամյակից ավելի է՝ այդ ուրտում ակտիվ աշխատանքներ չեն իրականացվում: Վերջին որոշումներն ընդունվել են 2000-ականների սկզբին:

Լեզուների պատմության մեջ լինում են շրջաններ, երբ ազդեցության ավելի մեծ ուրտներ ունեցող լեզուների ներգործության չափը օբյեկտիվորեն ընդլայնվում է, այլ լեզուների համար առանձնապես է անհրաժեշտություն առաջանում դիմելու օտար բառերին: Օրեցօր աճող և աննախադեպ ծավալներ առնող տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումները իրենց հետ բերում են հազարավոր օտար տերմիններ, հազարավոր նոր բառերի ստեղծման անհրաժեշտություն: Վերջին երկու տասնամյակներին էական տեղաշարժեր են կատարվել գրական հայերենի բառային կազմում. այն հարստացել է տասնյակ հազարավոր նոր բառերով ու բառիմաստներով, բառ և բառակապակցություն տերմիններով, առաջացել են գուգաձևություններ, օտար տերմինների համար տարերայնորեն ստեղծվել են և գործածության մեջ են մտել հայերեն համարժեքներ, ձևավորվել են օտար բառերի տառադարձության տարբերակներ և այլն: Նոր բառերն ու տերմինները շատ արագ են տարածվում հանրության մեջ: Լեզվակիրառողի համար առաջանում են լուրջ դժվարություններ դրանք արագ յուրացնելու և ըստ ամենայնի գործադրելու համար:

Տերմինաբանական կոմիտեն / Հայերենի բարձրագույն

խորհուրդը պիտի արձագանքի այս փոփոխություններին ու զարգացումներին: Սա ենթադրում է նախ՝ օտար բառ տերմինների մշակում և ճշգրտում, և երկրորդ՝ տերմինակազմության գիտական սկզբունքների մշակում, ազգային լեզվի բառանյութից նոր բառ և բառակապակցություն տերմինների ստեղծում: Հաջող փոխառությունը անփոխարինելի հարստություն է, բայց հայերեն համարժեքը ունի մի անուրանալի առավելություն. դա հասկանալի լինելն է. եթե **կոնգրուենտ, սպելեոլոգիա, հելիոզ, դերմատիտ** տերմինները ոչինչ չասող լեզվամիավորներ են շատերի համար, ապա դրանց համարժեք **համընկնելի-ն, անձավագիտություն-ը, արևահարություն-ը, մաշկաբորբ-ը** միանգամայն հասկանալի տերմիններ են:

Այսօր խիստ անհրաժեշտություն կա՝

ա) ճշգրտելու և հաստատելու մեր կենցաղ մուտք գործած կերակուրների, տարբեր տեսակի ուտելիքների ու մթերային ապրանքների բազմաթիվ օտար անունների գրությունը և արտասանությունը՝ **բրատֆուրսթ, կարրիֆուրսթ, կորնդոք, համբուրգեր, հոթդոք, շաուրմա, չիգբուրգեր, պիցցա, սենդվիչ, սպագետտի, սուշի, տակո, ֆրի** և այլն, կամ ստեղծելու դրանց հայերեն համարժեքները,

բ) հաստատելու ռազմական, իրավաբանական, մաթեմատիկական, աշխարհագրական, բժշկագիտական, քաղաքագիտական, տեխնիկական և այլ կարգի մասնագիտական հայերեն (**նոնակակոծում, ականակոծում, այլեհավաք, նույնականացում, այլագիր, համա-**

ներում, այլախոհ, համատիրություն, գործարկ և այլն) և օտար բառ ու բառակապակցություն տերմիններ (ակտուար, ատկատ, շոու, կիքս, ինտերիեր, էքստերիեր, շոկ, պունկցիա, ֆլեշմոբ, ֆոտոարխիվ, խարիզմատիկ, տանդեմ, քարտ-բլանշ, օմբուդսմեն, օֆշորային, ֆրուստրացիա, սմարթֆոն, պլանշետ և այլն)՝ հնարավոր համարելով նաև դրանց մի մասի զուգահեռ գործածությունը, ինչպես՝ արխիվ//պահոց, քսենոֆոբիա//օտարամերժություն//օտարատյացություն, ալիմենտ//սննդավճար//ապրուստավճար, էթիկետ//վարվեցողություն, դիզայներ//զեղարար, բիզնես//գործ//գործարարություն, բրենդ//ապրանքանիշ, թելետոն//հեռուստադրամահավաք, ինաուգուրացիա//ձեռնադրում//պաշտոնակալում//երդմնակալություն, ինդեքս//դասիչ//ցուցիչ, ֆիտթերապևտիկ//բուսաբուժական և այլն,

զ) վերացնելու օտար բառերի ու տերմինների և սրանց հայերեն նույնանիշ ձևերի (կամ հայերեն տարբերակների) գործածության զուգահեռությունը. օտար բառ և հայերեն համարժեք՝ էֆթանագիա//բարեսպանություն, ալիբի//այլուրեքություն, կրիմինալոգ//քրեաբան, վերբալ//բանավոր, ագրեման//համաձայնություն, ագրեսիա//նախահարձակում, և այլն, նույնանիշ ձևեր՝ բոնագավթում//բոնատիրում (անէքսիա), վնասապահանջ//բողոքագիր (ռեկլամացիա), իրավարար//հաշտարար (արբիտոր), դիտորդում//դիտարկում//մշտադիտարկում (մոնիթորինգ),

դ) ճշգրտելու և հաստատելու անգլերեն և այլ օտարա-

լեզու հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական, տնտեսագիտական և մարզական տերմինների հայերեն թարգմանությունը (աճուրդավար, ամրագոտի, անվաշղթա, առաջնագիծ, ռազմաբեմ, առևտրատնտեսական, առևտրամիջնորդ, աստիճանաշնորհում, արժեհամակարգ, արտահանձնում, բուժհաստատություն, վարակաբան, վերելակավար, մեծամասնական, համամասնական, իրավապահպան, երկքաղաքացիություն, ինքնագնահատական, ինքնալուծարվել, տոկոսադրույք, սառցուղյակ, սամբիստուհի, սպորտանավորդ, վարժասարք, տեխնոնում, տրնտեսվարող, տեսացույց, տպիչ, տնօրենուհի, րոպեավճար և այլն)³,

ե) ընդունելու ինֆորմատիկային, համակարգչային տերմինաբանությանը և առհասարակ տեխնիկական գիտություններին վերաբերող որոշումներ, որոնցում հայերենացվեն կամ ճշգրտվեն ու վերահաստատվեն նոր բառ ու բառակապակցություն տերմիններ՝ **առցանց/օնլայն, սենսոր (զգիչ), պորտալ, ֆեյսբուք, այվադ, նոութբուք, պլանշետ** և այլն:

Այս ճանապարհին անխուսափելի են նաև սխալներն ու աղավաղումները: Նշված ոլորտներում տերմինաբանական կոմիտեի հաստատած բառացանկերում միշտ չէ, որ տեղ են գտել անհրաժեշտ ու հարմար օտար բառեր և կամ դրանց հայերեն անհրաժեշտ համարժեք-

³ Հայերեն նորաբանությունները վերցված են **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան (Եր., 2002) և «Նոր բառեր. Ա պրակ» (Եր., 2015) գրքերից:

ներ: Առանձին օտար բառեր տարիների ընթացքում արդեն իսկ դուրս են մղվել կենդանի խոսքից, և հակառակը. առանձին համարժեքներ այդպես էլ չեն հաստատվել կենդանի լեզվում՝ իմաստային և գործառական ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված:

Այսպես.

ա) Հայերեն նույնանիշներից կոմիտեն նպատակահարմար է համարում գործածել **շրթներկ** և **շրթաններկ** տարբերակները (Տեղեկատու, 121), մինչդեռ արդի գրական հայերենում հաստատուն գործածություն ունի առաջինը՝ **շրթներկ**-ը: **ԶԼՄ - զանգվածային լրատվության միջոցներ** հապավման փոխարեն առաջարկվում է գործածել **ԶՏՄ՝ զանգվածային տեղեկատվության միջոցներ**: Որոշմանը հաջորդած մեկուկես տասնամյակների ընթացքում այդ հանձնարարականը քաղաքացիության իրավունք չի ստացել:

բ) Մի շարք օտար բառերի համար հանձնարարվում են հայերեն համարժեքներ, որոնք այսօր գործածական չեն: **Տրաս(ա)** բառի համարժեքներ են նշվում՝ 1. **ուղեգիծ**, 2. **ուղի** բառերը (Տեղեկատու, 123): Մինչդեռ այսօր այդ օտար բառի գործածական համարժեքներից է նաև **մայրուղի**-ն, որը առանձին բառարաններում նըշվում է որպես օտար տարբերակի չորս իմաստներից առաջնայինը կամ հիմնականը. «ՏՐԱՍՍԱ. 1. Մայրուղի՝ ճանապարհի, ջրանցքի.....: 2. Ուղեգիծ.....: 3. (ռազմ.) Ուղի, ճանապարհ, ուղեգիծ: 4. Սահուղի»⁴:

⁴ Ա. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Եր., 2011:

Ռահվիրա-ի համար հայերեն տարբերակ է նշվում **նախագնաց**-ը (Տեղեկատու, 127), սակայն այսօր հավասարապես, եթե ոչ ավելի շատ, գործածական է արևմտահայերեն **առաջամարտիկ**-ը. լավագույն տարբերակը առայժմ այդ երեքի գուգահեռությունը հանձնարարելն է՝ **ռահվիրա//առաջամարտիկ//նախագնաց**: **Европейское экономическое сообщество** անվան համար գործածվող տարբերակներից՝ **Եվրոպական տրնտեսական համագործակցություն//Եվրոպական տրնտեսական միավորում (ԵՏՄ)**, առաջարկվում է գործածել երկրորդը, մինչդեռ վերջին տասնամյակում այդ միավորման համար գործածական է դարձել **Եվրոպական տնտեսական միություն** անվանումը⁵: **Բիզնես** բառի համարժեք է առաջարկվում **գործարարություն**-ը, մինչդեռ վերջինս որոշչային կիրառություններում բնավ էլ չունի իր օտար տարբերակի գործառական հնարավորությունները. չեն հնչում, օրինակ, *գործարար(ական) ծրագիր (բիզնես ծրագիր), գործարար(ական) քարտ (բիզնես քարտ), գործարար(ական) փաթեթ (բիզնես փաթեթ)* կամ *գործարարական նախագիծ* արտահայտությունները: Իսկ ինչպե՞ս վերակոչել **Հայբիզնեսբանկ**-ը, մանավանդ եթե **բանկ**-ն էլ փոխարինում ենք **դրամատուն**-ով: Անգլերեն **իմիջ** բառի փոխարեն տերմինաբանականը առաջարկում է գործածել **կերպար**-ը: Սակայն վերջինս ոչ բոլոր գործածություններում կարող է փոխարինել անգլերեն տարբերակին, որն ունի բնագրային 5-ից ավելի իմաստներ՝

⁵ Տե՛ս **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:

համբավ, հեղինակություն, ոճ, գործելակերպ, երկրի համարում, կազմակերպության նկարագիր և այլն:

գ) Առանձին բառերի համար կոմիտեն սահմանում է օտար տարբերակի գործածություն (Տեղեկատու, 123), մինչդեռ դրանց հայերեն համարժեքը ունի եթե ոչ գերիշխող, ապա գուգահեռ (**բալետմայստեր/դերուսույց, դիրիժոր/նվագավար, կոմպոզիտոր/երգահան**), իսկ առանձին դեպքերում՝ ակնհայտորեն գերիշխող գործածություն՝ **աշխատակարգ** (ռեզլամենտ), **մարզադաշտ** (ստադիոն), **համույթ** (երաժշտ.՝ անսամբլ), **գրոսաշրջություն** (տուրիզմ) և այլն:

Այսպիսով. բառային կազմի մշակումը, կարծում ենք, պիտի ընթանա երկու հիմնական ուղղությամբ. 1. չխուսափել անհրաժեշտ փոխառություններից, 2. ըստ ամենայնի օգտագործել ազգային բառակազմական հնարավորությունները: Իսկ հնարավոր սխալներն ու վրիպումները պիտի մղեն ոչ թե օտար անհասկանալի ու անհարմար տերմինը գործածելուն, այլ դրա հայերեն ճիշտ ու անհրաժեշտ համարժեքը ստեղծելուն:

1.2. ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Բառապաշարի զարգացման միտումները համակողմանիորեն դրսևորվում են զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ-ների) լեզվում: Այն լեզվական կենդանի միջավայր է, որտեղ արտահայտվում են ազգային լեզվին բնորոշ գրեթե բոլոր հատկանիշները, երևան են գալիս լեզվական տարբեր մակարդակների փոփոխությունները, նորամուծություններն ու տեղաշարժերը: Ասել է թե, ԶԼՄ-ների լեզվի ուսումնասիրությունը շատ առումներով կարող է վեր հանել որակական անցումների պատճառները և զարգացման իշխող միտումները: Այս նպատակով մամուլի լեզուն պարբերաբար դառնում է լեզվական քննության նյութ: Մեզանում քիչ չեն դրան նվիրված աշխատությունները⁶: Չքննարկելով վերջիններիս անվիճելի օգտակարությունը՝ այսուհանդերձ նշենք, որ դրանցում լեզվական միավորի ուսումնասիրությունները կատարվում են մեկուսացած՝ առանց պատճառների և արտաքին գործոնների «հաշվառման»:

Մինչդեռ լեզվի զարգացման միտումները շատ դեպքե-

⁶ Տե՛ս **Ռ. Շալունց**, Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Եր., 1987: **Յու. Դավթյան**, Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում, Եր., 2006: **Հ. Բալոյան**, Արդի մամուլի հրապարակախոսության լեզուն, Եր., 2009 (ատենախոսություն): **Հ. Դուկասյան**, Արդի հայ մամուլի լեզուն, Եր., 2009 (ատենախոսություն): **Մ. Սողոմոնյան**, Մամուլի դերը հայոց լեզվի բառապաշարի հարստացման գործում, «Լեզու և լեզվաբանություն», Եր., 2008, № 2, էջ 28-31 և այլն:

րում հասկանալի են դառնում, երբ դիտարկվում են հասարակական տեղաշարժերի սերտ առնչություններում: Դրանք առավել ակնհայտ երևում են բառապաշարում: Այդ առնչությունների վերլուծությունը վերստին հաստատում է այն տեսակետը, որ լեզվի բառապաշարի զարգացման հիմքը նախ և առաջ **արտալեզվական գործոններն** են: Հենց դրանցով է բացատրվում, օրինակ, արդի արևելահայերենում քաղաքագիտական կամ իրավաբանական խոսույթի ակտիվացումը. այսօրվա մամուլի գերիշխող թեմատիկ ծավալումները՝ քաղաքական, իրավական (նաև՝ հանրային) և տնտեսական ոլորտների վերաբերյալ աշխույժ անդրադարձները, պայմանավորում են խոսքային նոր որակների ի հայտ գալը, օտար բառերի ակտիվացումը: Ընդ որում, այդ նորը մեծ մասամբ արագորեն է տարածվում և ամրապնդվում լեզվակիրառողների շրջանում, քանի որ ԶԼՄ-ների ներգործման հարթակները բազմազան են ու հասանելի շատ-շատերին: Այլ հարց է, որ այդ նորը միշտ չէ, որ զարգացման ընթացքում միանգամից ընդունվում և ամրապնդվում է լեզվի կառուցվածքում: Միայն վերջին տասնամյակում տեղեկատվական տեխնոլոգիաների և քաղաքագիտական ոլորտներից մեծ քանակությամբ օտար բառերի մուտքը բառապաշար, միջազգային տերմինների, հապավումների ակտիվացումը, պաշտոնական խոսքում խոսակցական տարրերի կամ դիպվածային կազմությունների աշխուժացումը որոշ մասնագետների անհանգստացնում են և ահազանգելու առիթ տալիս: «Լեզուն աղտոտված է / նահանջել է» արտահայտություն-

ները հաճախ դառնում են այդպիսի երևույթների բնորոշման հիմնական միջոց: Սակայն այսօրինակ գնահատականները, կարծում ենք, պետք է լինեն հաշվարկված, առավել զուսպ, նաև ուղեկցվեն որոշակի փաստարկներով. ընթացիկ զարգացման միայն մի հատվածի մակերեսային դիտարկումը չի կարող հիմնավոր լինել, առավել ևս չի կարող կանխել զարգացման արդեն իսկ որոշարկված միտումները:

Ներկայումս արդի արևելահայերենի բառապաշարը թևակոխել է փոփոխությունների հենց անցումային, ինչ-ինչ առումներով նորմին հակասող մի շրջափուլ, որը դրսևորվում է ՋԼՄ-ների լեզվում: Պատճառներից մեկն այն է, որ փոխվել է ոճերի փոխհարաբերությունը: Եթե տասնամյակներ առաջ լեզվի զարգացման և կանոնարկման համար ուղենշային էր գեղարվեստական գրականության լեզուն (գերակա ոճ էր և էապես ազդում էր հրապարակախոսական, խոսակցական ոճերի վրա), ապա այսօր հակառակ պատկերն է: Մեդիադաշտի բազմազանության և գերհասանելիության հետևանքով էապես ընդլայնվել են դրա լեզվի ազդեցության սահմանները: Ավելին՝ գեղարվեստական լեզուն է ինչ-որ չափով սկսել օգտվել ՋԼՄ-ների արտահայտչաձևերից: Այսպես:

1. **Օտար բառերի փոխառումը** բառապաշարի զարգացման առաջնային միտումներից է: Վերջին հինգ տասնամյակները բնորոշվում են համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) գերակտիվ զարգացումներով: Մասնագիտական գրականության մեջ տարբերակ-

վում է համաշխարհայնացման երեք տեսակ՝ քաղաքական, տնտեսական և մշակութային⁷: Տարբերություններով հանդերձ՝ այս երեք տեսակներին միավորում է **հաղորդակցությունը**, որն արտահայտվում է տեխնոլոգիական և մեդիամիջոցներով՝ կյանքի համակարգչայնացում, համացանց, աշխարհի շատ ու շատ հեռուստա- և ռադիոալիքների հասանելիություն: Սրանք զգալի չափով պայմանավորում են հասարակական հարաբերությունները. ձևավորվում են ֆինանսական, քաղաքական, գիտական, հասարակական նույնանման հարաբերություններ, որոնք սրընթաց լուսաբանվում, բացատրվում և ներկայացվում են ՋԼՄ-ների միջոցով: Բնական է, որ հաղորդակցման և իրազեկման լեզուն էապես ազդում է լեզվի ընդհանուր զարգացման ընթացքի վրա: Որքան էլ արտառոց թվա, սա անխուսափելիորեն հանգեցնում է նաև մշակութային համաշխարհայնացման մի ենթատեսակի՝ լեզվի համաշխարհայնացմանը, այն է՝ բառապաշարի միջազգայնացման: **Լեզվի համաշխարհայնացում** տերմինը համեմատաբար նոր է. եթե հետազոտողները համաշխարհայնացման հիմք են ընդունում հասարակության, նրա տնտեսության, քաղաքականության և մշակույթի անգլո-ամերիկյան մոդելը, ապա լեզվի համաշխարհայնացման հարցում գերիշխողը անգլերենն է՝ որպես միջազգային լեզու: Ընդ որում, *լեզվի համաշխարհայնացում* բացատրվում է երկու իմաստով՝ ա)

⁷ Տե՛ս **S. Babones**, «Studying Globalization: Methodological Issues»: in George Ritzer: The Blackwell Companion to Globalization: John Wiley & Sons, 2008, էջ 146:

անգլերենի գործածություն քաղաքական և գիտական ոլորտներում, ք) ազգային լեզուների ամերիկացում⁸: Արձանագրելով դրական բազում հատկանիշներ և գործընթացներ՝ ուսումնասիրողները, սակայն, նշում են, որ մշակութային համաշխարհայնացման զարգացումները սպառնալիք են ազգային/տեղական մշակույթի համար⁹: Խոսքը, կարծում ենք, վերաբերում է նաև լեզվին, մասնավորապես բառապաշարին: Անշուշտ, այս մարտահրավերը առաջին հայացքից առավել վտանգավոր է հայերենի և այն լեզուների համար, որոնցով խոսողների քանակը քիչ է: Բայց մյուս կողմից էլ հենց համաշխարհայնացման ամենօրյա ծավալումներից չեն կարող անմասն մնալ մեր ՋԼՄ-ները, ուստի և անգլերեն բառերի փոխանցումները հայերենի արդի բառապաշար անխուսափելի են: Որքան էլ հայերենը ազգային ինքնության պահպանման միջոց է և որքան էլ կարողացել է հաղթահարել օտար ազդեցությունները, այսուհանդերձ արտաքին ազդակների ճնշմամբ նրա բառապաշարը առավել արագ է համալրվում օտար բառերով: Դրանք մեծ մասամբ տարալորտ միջազգային տերմիններ են, իրեր, երևույթներ անվանող բառեր: Օրինակ՝ տարբեր աղբյուրներից ՋԼՄ-ներ են մուտք գործում և լայնորեն կիրառվում **օլիգարխ, օմբուդսմեն, կազուս, կուրացիա, պարիտետ, կոալիցիա, վեթիինգ, թրոլինգ, ուզուրպացիա,**

⁸ Այս մասին մանրամասն տե՛ս <https://myfilology.ru/154/filologiya-i-yazykovaya-globalizacziya-269/>

⁹ Այս մասին մանրամասն տե՛ս **R. Roland**, Globalization: social theory and global culture, London, 1992, էջ 32-49:

տեխնոկրատիա, բրենդ, ֆլեշմոբ, այֆոն, օֆլայն ֆրանչայզինգ, ակաունտ, չաթ, վայրեր, վայֆայ, վեբինար, էքսպո, դե ֆակտո, դե յուրե, ստատուս քվո, ֆորս մաժոր, ֆիթնես, ֆրակցիա, հեքթոն, սաբատիկա, հեշթեգ, հեթթրիկ, հոլդինգ, մոլ, պիլինգ, լուք, թրենդ, սփրեյ, դիզայներ, սկրաբ, գեյ, պրեսինգ, պրեստրեյապիա, ստարթափ, լայվ, ֆեյք, մեդիա, ֆրանկոֆոնիա և հազարավոր այլ բառեր: Անշուշտ, հայերենի բառապաշարի զարգացման մեկ այլ միտումը՝ նոր բառերի ստեղծումը, զգալի չափով կանխում է օտար բառերի մուտքը, շատ դեպքերում հայերեն համարժեքը հաղթում է օտար՝ միջազգային բառին: Այսուհանդերձ, այս բառերը կան, գործածվում են:

Բառապաշարի այսպիսի համալրումը շարունակվելու է մի պատճառով ևս: Հայաստանը տասնամյակներ շարունակ ոչ միայն չի ունեցել նյութական, արդյունաբերական մշակույթ, այլև զիջող է հատկապես տեխնիկական, բնագիտական գիտությունների զարգացման մեջ: Լայն առումով համաշխարհային արտադրանք ներմուծող երկիր է, և այդ «ներմուծումը» արտահայտվում է նաև բառապաշարում: Իսկ համաշխարհայնացման տեմպերը է՛լ ավելի են արագացնում բառեր փոխառելու գործընթացը: Բացի այդ, ժամանակակից լրագրության մեջ ակնհայտ ձգտում կա «նորաձև և արդիական» երևալու. դա ՋԼՄ-ների լեզվում դրսևորվում է հենց նրանով, որ նախապատվություն է տրվում անգլերենին: Եթե վերը թվարկված բառերի մեծ մասը չունի հայերեն համարժեքներ և առայժմ միակ գոր-

ծածվողն է, ապա շատ դեպքերում հաստատված հայերեն տարբերակները շրջանցվում են, փոխարենը գործածվում են անգլերենից փոխառվածները, ինչպես՝ **սպիքեր** (փոխ.՝ *խոսնակ*), **սամմիթ** (փոխ.՝ *գազաթաժոդով*), **ռեալ** (փոխ.՝ *իրական, իրատեսական*), **պլազիատ** (փոխ.՝ *գրագողություն*), **լեզիտիմ** (փոխ.՝ *օրինավոր/օրինական*), **անլեզալ** (փոխ.՝ *անօրինական, ապօրինի*), **բրիֆինգ** (փոխ.՝ *ճեպագրույց*), **դեբատ** (փոխ.՝ *քանակեճ*), **հաք(ք)եր** (փոխ.՝ *ցանցահեն*) և այլն: Երևույթը գուցե առավելաբար կապվում է թերիմացության, օտարամոլության հետ:

Այլ է հաղորդումների անվանումների պարագան. դրանց մի մասը օտարալեզու է (նաև՝ օտարագիր), ինչպես՝ **Ռեվոլյուցիա**¹⁰, **ԲուժԻնֆո**, **Arm Comedi**, **X Factor**, **X Driv**, **Fashion**, **Womens Club**, **Jazz Time**, **Չելենջ**, **Ֆուլ հաուս** և այլն: Այսպիսի բառընտրությունը ՋԼՄների համար միջոց է ազդելու, մրցակցելու և արդիական լինելու գործառույթներն իրացնելու համար: Մրանք ազատ և բաց գործունեության տարածքում, առավել ևս վիրտուալ աշխարհում դյուրին հասանելիության գրավական են: Ի դեպ, արդի արևելահայերենի բառապաշարի որակական այս փոփոխությունը հոգեբանորեն բացատրելի է մի կարևոր հանգամանքով. թերևս անկախ պետականության և միատարր ու նույն լեզվով հաղորդակցվող ազգաբնակչության պայմաններում, պետական հոգածության ներքո գտնվող

¹⁰ Այս և մյուս դեպքերում պահպանել ենք հաղորդման անվանման ուղղագրությունը:

լեզվի բառապաշարի «այլափոխումը» անհանգստացնող չէ. ուժացման վտանգ չկա: Ուստի արտաքին ազդակներին դիմադրելու մղումն էլ համառ դրսևորում չունի: Համեմատության համար բերենք Սփյուռքի գուգահեռը: Մշակութային օտար միջավայրում, բազմազան կրոնների համակեցության մեջ առաջնային է դառնում **լեզվի ինքնապահպանության** գործառույթը: Այս դեպքում փոխվում է ՋԼՄ-ների լեզվական քաղաքականությունը: Տարաշխարհիկ միջավայրում հայկական ՋԼՄ-ները նախ և առաջ փոքրաթիվ համայնքին ծառայելու, հայախոսությունը պահպանելու նպատակ ունեն, ավելին՝ փորձում են հեռու մնալ լեզվական համաշխարհայնացման ընթացքից, հետևաբար հաղթում է հայերեն բառի ու անվանման ընտրությունը (ՋԼՄ-ների անվանումները մեծ մասամբ հայրենիք խորհրդանշող բառեր են)՝ **«Արարատ», «Զարթօնք», «Ազդակ», «Մեան», «Վանայ ձայն», «Ժամանակ», «Գեղարդ»** և այլն:

Այսպիսով, արդի արևելահայերենի պարագայում այս փուլում դժվար է անվերապահ գնահատել բառապաշարի զարգացման այս միտումի վնասակարության կամ օգտակարության չափը: Թեև նշված ազդակը գորեղ է, սակայն տպավորություն ունենք, որ զարգացման դարավոր ավանդույթներ և կուռ համակարգեր ունեցող լեզվի՝ հայերենի համար էական վտանգ չի ներկայացնում: Շնորհիվ բառակազմական ճկունության, արևմտահայերենի ազդեցության և բառերի արդիականացման՝ հայոց լեզվի բառապաշարը զսպում է օտարամուծությունների քանակը:

2. Երկրորդ միտումը լեզվի **ժողովրդայնացումն** է: Վերջին երեսուն տարիները հայաստանյան մամուլի համար մեծ փոփոխությունների ժամանակաշրջան են: ԶԼՄ-ներն ազատվեցին խորհրդային տարիների վերահսկողությունից շատ առումներով: Ամբողջատիրական հասարակարգի փլուզման հետ աստիճանաբար վերացավ նաև ԶԼՄ-ների խոսքային (նաև թեմատիկ) գապվածությունը: Մա հոգեբանական որոշ առանձնահատկություն ունի. ճնշման և ուժեղ գրաքննության պարտադրանքից հետո անկախության առաջին սերունդը հանկարծ հնարավորություն ստացավ ըստ ամենայնի ինքնարտահայտվելու: Ընդ որում, անկախության առաջին տասնամյակում խորհրդային զրուպող ազդեցությունը դեռևս նկատվում էր. գերակայում էր նորմատիվ բառապաշարը: Մինչդեռ վերջին տասը տասնհինգ տարիներին ԶԼՄ-ների բառապաշարը հատկանշվում է ընդգծված **ժողովրդայնացմամբ**: Հաճախադեպ է խոսակցական, բարբառային ծագում ունեցող բառերի, դարձվածքների և հասարակաբանությունների գործածությունը: Ավելին՝ դրանցից կազմվում են նոր բառեր ու դարձվածքներ: Կարևոր է երևույթի աշխուժացման պատճառահետևանքային կապերի վերհանումը: **Նախ**՝ զգալիորեն շատ են հայկական հեռուստաալիքները (նաև համացանցային հաղորդաշարերը), որով էլ պայմանավորված՝ էապես գերիշխող է դարձել բանավոր խոսքը, **ապա**՝ պայմանավորված ժանրային բազմազանության հիմքով՝ ԶԼՄ-ների լեզվում ակտիվացել են ոճային փոխներթա-

փանցումները, **հետո՝** կենդանի խոսակցական լեզուն օր օրի հաստատում է իր գերակայությունը, **ի վերջո՝** տեղական լրատվամիջոցները յուրացնում են համաշխարհային ՁԼՄ-ների լեզվաքաղաքականության փորձը: (Բառապաշարի ժողովրդայնացման միտումը բնորոշ է աշխարհի շատ լեզուների և տնտեսական ու քաղաքական տեղաշարժերի հետևանք է): Ուսումնասիրողներն այն կարծիքին են, որ Արևելյան Եվրոպայում 20-րդ դարի 70-ական թթ. հասարակական-տնտեսական փոփոխությունները, գիտատեխնիկական աննախադեպ նվաճումները հանգեցրին լեզվական ձևերի փոփոխության: Հենց տեղեկատվական և իմացական մեծ հոսքի ճնշման ներքո մարդը ձգտում է պարզ (նաև՝ պարզունակ), դյուրին ու սեղմ արտահայտամիջոցների: Բացի այդ, հասարակական տեղաշարժերը համընկնում են լրատվական տեխնոլոգիաների հեղափոխությանը, որը, ի դեպ, հաղորդակցման գործընթացներում աննախադեպ թռիչք ապահովեց: Եվ ժամանակակից լրագրությունը քարոզչության, հաղորդման ու ներգործման իր գործառույթները հաճախ իրացնում է հենց այս բառապաշարի միջոցով: Ներկայումս **լեզվի / բառապաշարի ժողովրդայնացում** հասկացության մեջ նկատի են առնվում ոչ միայն գրական-խոսակցական, այլև ժարգոնային, առտնին-խոսակցական բառերը, հասարակաբանությունները, նաև դրանցով կազմված դիպվածային բառերը: Դրանք աննախադեպ առատ են նաև քաղաքական գործիչների խոսքում և հիմնականում անփոփոխ հայտնվում ու տարածվում են ՁԼՄ-ների տարբեր ժանրերում: Հա-

ճախ գործածվում են վերնագրերում, հեռուստա- և
ռադիոէթերում, ինչպես՝ **գոռքա, գոռքայություն, գոռ-
քայավարի, ախպեր, գյադա, գյադայություն, լակոտ,
դուխով, դուխ տալ, ծ(ե)փել պատերին, կատոկել, վիզ
դնել, գլխին սարքել, հաթաթա, մուղամ, մուննաթ,
զահլահան, չոքել, լափ, լափաման** և այլն: Այս օրի-
նակներում ակնհայտ է, որ ցածր ոճի բառապաշարում
մեծ մասամբ բացասական վերաբերմունք արտահայ-
տող բառեր են, որոնք ինչ-որ առումով ագրեսիվ տրա-
մադրություններ են փոխանցում: Դրանք ձևավորում
են խոսքի անսպասելի, անցանկալի որակներ: Բառա-
պաշարի զարգացման այս միտումի վերաբերյալ կար-
ծիքները հակասական են. ոմանք կողմ են դրան և այն
դիտարկում են որպես լեզվի զարգացման շարունա-
կական ընթացք: «...Լեզվի զարգացումը բնորոշվում է
հակասություններով, որոնք ծագում են նրա համա-
կարգերի՝ նորմի՝ որպես գիտակցված համակարգայ-
նության, և ոճերի՝ որպես լեզվագործածության համա-
կարգայնության միջև: Լեզվի զարգացումը արտացոլ-
վում է օրինակելի տեքստերում, և եթե տվյալ դարա-
շրջանում այդպիսի տեքստեր չեն ստեղծվում, ենթա-
դրվում է, թե «լեզուն քանդվում է, փշանում»: Լեզվի այս
անճիշտ, պատրանքային տեսությունը իր պատմա-
կան հեռանկարում շփոթեցնում է բազում խելացի-
ների և զայրացնում մաքրամոլներին: Մինչդեռ լեզվի
պատմության տեսակետից նորմի ժամանակավոր
խախտման մեջ վտանգ չկա: Լեզուն շարունակում է
զարգանալ, սակայն խախտվում է ոճը, քանի որ քանդ-
վում են նրա գործածությանը բնորոշ բազում կանոն-

ներ»¹¹: Ասել է թե, գործառական ոճերում կատարվող փոփոխությունները պետք է դիտարկվեն ոչ թե որպես լեզվի որակների անկում, այլ հավելում եղած իրողություններին, որը հետագայում կա՛մ կմոռացվի, կա՛մ կնորմավորվի: Իսկ գեղագետ պահպանողականները անհանգստանում են. «Ցանկացած հեղափոխություն (նկատի ունի ոչ միայն քաղաքական հեղափոխությունը – Լ. Ս.) թեև խոստանում է մշակույթի ծաղկում, սակայն հանգեցնում է մշակութային այլասերման: Ինչո՞ւ: ...Ինչ-որ սարսափելի բան է կատարվում ցնցում ապրած ժողովրդի հետ»¹²: Մեր տպավորությանը՝ այսպիսի բառընտրությունը պայմանավորված է ոչ միայն աղճատված բարքեր, այլև մտածական ու կրթական ցածր կարողություններ ունեցող հասարակության գոյությամբ: Ակնհայտ է, որ խնդիրը չի սահմանափակվում միայն հայերենով. գիտատեխնիկական հզոր նվաճումների հոսքում և համաշխարհայնացման լարված գործընթացների պարագայում մեկ բառով պահի ազդեցություն թողնելու պարզունակ ձգտումը «մուտքի լիիրավ արտոնագիր» է տվել արտահայտման նմանատիպ միջոցներին նաև ռուսերենում, ֆրանսերենում, անգլերենում և այլն:

3. Բառապաշարի զարգացման երրորդ միտումը **արդիականացումն** ու **հնացումն** են: Սրանք եղել են միշտ: Հնացել են, օրինակ, խորհրդային շրջանին բնորոշ մի շարք հասկացությունների, առարկաների անվանում-

¹¹ В. Колесов, Русская ментальность и развитие русского языка, М., 1995, с. 20, 23.

¹² Эд. Радзинский, Новые люди возьмут страну, «Огонек», 2005, № 3.

ներ, ինչպես՝ **կոլտնտեսություն, կոլխոզ, սովխոզ, կոմունիստ, կենսկոմ, գերագույն խորհուրդ, պիոներ, հոկտեմբերիկ, կոմունիզմ, ԽՍՀՄ, ԲՇՏ, զագու** և այլն: Կամ՝ կենցաղային մի շարք առարկաների չգործածությունը դուրս է մղել նաև դրանք անվանող բառերը, ինչպես՝ **ձայներիզ, պատեֆոն, փեյջեր** և այլն: Ընդ որում, հին և նոր իմաստների անցումները պայմանավորված են ոչ միայն երևույթների հնացմամբ կամ նորացմամբ, այլև հասարակության վերաբերմունքի փոփոխությամբ: Սա էլ իր հերթին գործածության այլ միջավայրում վերակենդանացնում է հնացած միավորը: Օրինակ՝ **կոմունիստ**-ն այսօր ձեռք է բերել **պահպանողական, խստադեմ, խիստ օրինապահ** հարանշանակությունները: Կամ՝ **կոլխոզ** բառը ներկայումս ստացել է բացասական երանգավորում (այդպես են անվանում անկազմակերպ, անփույթ աշխատող հիմնարկները): Այսպես նաև **օլիգարխ**¹³ բառը. եթե մի քանի տարի առաջ այն շատ էր գործածվում **զարտուղի, անազնիվ ճանապարհով հարստացած անձ**-ի հարանշանակությամբ, ապա ներկայումս առավել կայունանում է բառի՝ բուն նշանակությամբ գործածությունը:

Վերջին տասնամյակներում այս երկու միտումներից առավել գործուն է արդիականացումը: Պատճառն այն է, որ գիտության արագ նվաճումները, հասարակական արագ տեղաշարժերը հաճախ անվանվում են ոչ

¹³ Քաղաքական համակարգում գործող մեծահարուստ, ով մեծ ազդեցություն ունի քաղաքական որոշումների վրա (տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/%D5%95%D5%AC%D5%AB%D5%A3%D5%A1%D6%80%D5%AD>)

թե նորակազմ բառով կամ փոխառությամբ, այլ վերա-
խմաստավորված բառով: Նույն՝ քաղաքական ոլոր-
տում գրաբարյան բազում բառեր վերախմաստավոր-
վելով հենց մամուլի շնորհիվ արդիականացվել են և
անցել բառապաշարի գործուն շերտին, ինչպես՝ **պատ-
գամավոր, խոսնակ, նախարար, դեսպան, դեսպանու-
թյուն, բարեգործ, բարեգործություն** և այլն: Այսպես
նաև նկատելի դարձան **դաշտ** (լրատվական / գործու-
նեության դաշտ), **գործիք** (հաղորդակցման / բանակցու-
թյան գործիք), **փաթեթային** (փաթեթային քննարկում),
լողացող (լողացող կուրս), **դոնոր** (դոնոր երկիր), **այ-
ցեքարտ** (երկրի / անձի / ապրանքանիշի ներկայանա-
լիության միջոց), **թվային** (թվային հեռուստատեսությ-
ուն) և բազում այլ բառեր (տե՛ս «Իմաստափոխությ-
ուն» ենթագլուխը):

4. ՋԼՄ-ների լեզվում չորրորդը **նոր բառեր կազմելու**
միտումն է: Այն բավականաչափ գործուն է: Ընդ որում,
ստեղծվում են, այսպես ասած, բուն նորակազմությ-
ուններ, որոնք սոսկ անվանողական արժեք ունեն, և
դիպվածային բառեր, որոնք գործածվում են խոսքը
երանգավորելու նպատակով: Այս միտումը արդի հա-
յերենի բառապաշարը համալրեց բազում բառերով,
ինչպես՝ **եվրաստլանտյան, սփյուռքացում, սփյուռ-
քանալ, ստորագրահավաք, բարձրաձայնել, համաշ-
խարհայնացում, գագաթ(ն)աժողով, ճեպայց, մարգա-
սարք, տեսագանգ, տեսաձայնագրում, տեսաուղերձ,
փոխգործակցություն, արտարժույթ, ճեպագրույց, մըշ-
տադիտարկում, գնաճ, շուկայագիտություն** և այլն:

Դիպլոմատիայի կազմությունների դեպքում կարևորվում է ներագդելու գործառույթը: Տեղեկությի՞ն զուգահեռ՝ դրանք շատ դեպքերում փոխանցում են լրագրողի վերաբերմունքը: Այս առումով դիպլոմատիայի բառերով արտահայտվելու միտումը չափազանց արդիական է: Օրինակ՝ «Արևմուտքն Ուկրաինայում լավ է մշակել տեղացի **«եվրոէներին»**, հավատամ, որ մեր երկրում 190 կազմակերպություններից բաղկացած ազգային պլատֆորմը կտարբերվի ուկրաինական **եվրոէներից»** (<http://www.irates.am/hy/1398410729>), «Ստեփանավանում բնակիչներն ասում էին, որ Դ.-ն կոչ էր արել ձայն չտալ **ընտրասֆալտ** փողոցներին» («Առավոտ», 22.05.1999), «Մի քանի հարյուր **ֆեյսբուքցի** պահանջում են ստուգել Պետդումայի պատգամավորներին» (1-in.am, 15.06.2011), «Նստացույց, **քնացույց, պարացույց**. Բաղրամյանը փակ է» (<https://www.azatutyun.am/a/27091721.html>), «Ժողովուրդն ուր **նախագահացու** ունի» (<https://www.civilnet.am/news/2013/01/12/>), «...ես ավելի անկարևոր եմ իմ երկրում, քան այս կամ այն **«ջիպագիին»** («Իրատես», 04.07. 2016), «Սակայն անհարկի երախտագիտության ցույց անելը կարծես թե մտավ մեր **միտինգասեր** վարքի մեջ» («Առավոտ», 11.06.2016), «...տեսնես բանակում չճառայած, հայրենիքի համար մի կաթիլ արյուն չտված մեր **թրաշամանուկ** պաշտոնյաներից քանի՞սն է «արյուն տվել»» («Հրապարակ», 15.06.2019): Այսպես նաև՝ **ոչնչամետություն, հանրապետքական, ֆեյսբուքահայություն, քոմենթչի, մանդատացու, մուննաթափանչություն, աթոռվել, ԱԺ-իստ, լայվասեր, լայքառատ, միտինգահան,**

բրաբուսավոր, հոգեորսորդ և այլն: Անշուշտ, դիպվածային բառակերտումները արդի հայերենի բառապաշարի հիմնական մաս չեն կազմում և մեկուսացած միավորներ են: Այսուհանդերձ, սրանք դարձել են արտահայտվելու միջոց, որպես ժանրի «խաղարկային» միավորներ՝ հաճախ հայտնվում են վերնագրերում, տպավորվում են իրենց անսպասելիությամբ, բաղադրիչների արտառոց համադրումներով և հուշում կադապարներ, ձևեր, որոնք առօրյա ոճում և կամ մեկ այլ ոլորտում նոր բառ կազմելու հիմք են դառնում:

5. Բառապաշարի զարգացման հինգերորդ միտումը **հապավումների ստեղծումն** է: Այս դեպքում նույնպես գերիշխողը արտալեզվական գործոնն է. թելադրող են լեզվի խնայողությունն ու սեղմությունը: Ստեղծվում են նորանոր երևույթներ, կազմակերպություններ, միավորումներ և այլն, որոնց անվանումները բաղադրյալ կազմություններ են, և լեզվական խնայողության միտումով հարմար միջոց է դառնում հապավելը: Օրինակ՝ **ՄԻՊ** (Մարդու իրավունքների պաշտպան), **ՄԻԵԴ** (Մարդու իրավունքների եվրոպական դատարան), **արտգործնախ** (արտաքին գործերի նախարարություն), **ֆիննախ** (ֆինանսների նախարարություն), **սոցցանց** (սոցիալական ցանց), **սոցհարթակ** (սոցիալական հարթակ), **ԵԱՀԿ** (Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն), **ՀԱՊԿ** (Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն), **ԵԱՏՄ** (Եվրասիական տնտեսական միություն), **ԳԹԿ** (Գնահատման և թեստավորման կենտրոն), **ԿԳՄՄՆ** (կրթության, գիտության, մշակույ-

թի, սպորտի նախարարություն) և այլն: Միաժամանակ փոխառվում են օտար հապավումներ՝ **PR, IQ, TV, VIP, TSF, IT** և այլն:

Այսպիսով, աշխարհաքաղաքական ծավալումները, ազատ տնտեսական հարաբերությունները, ՋԼՄ-ների գործիքակազմի ակտիվացումը ուղղակիորեն ազդում են լեզուների բառապաշարի վրա, ավանդականի կողքին ձևավորում են այնպիսի իրողություններ, որոնք մինչ այս արտառոց էին կամ չկային: Սրանից բացի՝ տեղի են ունենում գործառական ոճերի ոչ միայն փոխներթափանցումներ, այլև «փոխատեղություններ». պաշտոնական խոսքի հրապարակային արտառոց դրսևորումների, գեղարվեստական ոճի նահանջի պայմաններում ՋԼՄ-ները հայտնվել են առաջնային հարթակներում և գերակայություն հաստատել նաև լեզվի որակական անցումների վրա: Ներկայումս բառապաշարի զարգացումն այնպիսի անցումային ընթացք ունի, որի վերաբերյալ դրական կամ բացասական դատողություններից ոչ մեկը ճշմարիտ չի կարող լինել: Հատկապես դժվար է ասել՝ որքան տևական կլինեն օտար բառերի ներթափանցումները, խոսակցական միավորների առատ հավելումները գրական խոսք: Իհարկե, **լեզվի անադարտությունը** առաջնորդող պետք է լինի, սակայն այս դեպքում նույնպես անվերապահ ճշմարտություն չկա. լեզվի որակական անցումները ուղեկցվում են նաև արտառոց իրողությունների հաստատումով:

1.3. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇԵՐՏԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ. ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԶՄ

Լեզվի բառապաշարի շերտերը քննելիս գրեթե բոլոր լեզվաբաններն էլ մեզանում այս կամ այն չափով, այս կամ այն կերպ անդրադառնում են բառապաշարի հիմքը կազմող բառային շերտին: Եվ այդ շերտի բնութագրությունը, հիմնական հատկանիշներով տարբեր չլինելով կամ հիմնականում չտարբերվելով հանդերձ, տարբեր ուսումնասիրություններում անվանվում կամ ձևակերպվում է տարբեր կերպ:

Հասկանալի է, որ լեզվում կա մի բառաշերտ, որը ի սկզբանե՝ գրական լեզվի կազմավորման շրջափուլից սկսած, ձեռք է բերում քաղաքացիության իրավունք և գործածվում է զարգացման հաջորդ փուլերում: Այդ շերտին պատկանող բառերն ունեն բնութագրական ընդգծված հատկանիշներ՝ ծագումնաբանորեն գերազանցապես հիմք լեզվի բառեր են, գործածական տեսակետից՝ ամենից ակտիվը, հասկանալիության առումով՝ հանրահասկանալին, բառակազմորեն բնութագրվում են բարձր արտադրողականությամբ, իմաստային տեսակետից, որպես կանոն, բազմիմաստ են և փոխաբերականությամբ հարուստ:

Այս հատկանիշներով բնութագրվում են բառեր, որոնք հայ լեզվաբանական գրականության մեջ հորջորջվում են «մի խումբ» անվանումներով՝ *ընդհանուր հայերեն բառեր, հիմնական բառաֆոնդ, բառային հիմնական ֆոնդ, հիմք բառապաշար, գործուն բառաշերտ, համա-*

գործածական բառեր, համահայկական բառեր, բառա-
յին հիմնական կազմ և այլն: Այս բոլոր անվանումների
տակ կարելի է գետեղել (և այդպես էլ սովորաբար ար-
վում է) ստորև բերված երեք տասնյակ և դրանց նման
էլի հարյուրավոր կամ նույնիսկ հազարավոր (ըստ մո-
տեցման) բառեր, ինչպես՝ **տուն, ջուր, հաց, քար, լույս,
արև, փողոց, դուռ, պատուհան, ծառ, ծաղիկ, միրգ,
խոտ, մարտ, ապրիլ, տարի, ամիս, շաբաթ, թև, ոտք,
գլուխ, աչք, մազ, հարց, խոսք, պատասխան, զրույց,
երգ, լռել, ասել, բերել, տալ, հարցնել, յոթ, տասը, մենք,
նա, սա, մեծ, բարձր, բայց, իսկ, թե, սակայն, արագ,
դժվար** և այլն:

Հարցին առաջին անդրադարձողներից մեկը **Գ. Մե-
վակն** էր: Նա հայերենի բառապաշարի շերտաբանա-
կան դասակարգումը կատարելիս որպես առաջին և
իր պարունակությամբ խոշորագույն շերտ առանձ-
նացնում է **ընդհանուր հայերեն բառերի շերտը**, որը,
ըստ նրա, «կենդանի և հարաշարժ է եղել հայ ժողո-
վրդի ու հայ լեզվի գոյության նախնական շրջանից
սկսած»¹⁴: Լեզվաբանը անում է մի շատ ուշագրավ դի-
տարկում. բառապաշարի այդ շերտը, ասում է նա, ա-
վելի ու ավելի նվազելու հեռանկար ունի. նվազել է մի-
ջին հայերենում, աշխարհաբարի վաղ շրջանում, բար-
բառներում և այլն, «նվազած վիճակով կենդանի է և
այսօր»: Այդ բառաշերտի մի հատվածը փոխարինվում
է նորաստեղծ բառերով ու բառիմաստներով, ինչպես

¹⁴ **Գ. Մևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 2-րդ վերա-
հրատ., Եր., 2009, էջ 113:

նան փոխառություններով¹⁵: Լեզվաբանի այս դիտարկումները ենթադրել են տալիս, որ **ընդհանուր հայերեն բառեր** տերմինը նա գործածում է նեղ իմաստով (որը, ի դեպ, նույնանում է հետագայում շրջանառության մեջ դրված **բառային հիմնական ֆոնդ** տերմինին)՝ նկատի ունենալով հին հայերենում և գրաբարում գործածված բառապաշարը, որը իր մի զգալի մասով պահպանվեց նաև լեզվի զարգացման հետագա փուլերում: Բազմաթիվ բառեր ու արտահայտություններ հնացել են, դուրս եկել գործածությունից կամ դարձել նվազ գործածական, ինչպես՝ **սեպուհ, տասնապետ, արոր, գութան, մարգպան, մեծ տիկին, աշտե, վաղվադակի, անագան, ուստր, աճապարել** և այլն: Այս տրամաբանությամբ՝ նրա կողմից հայերենի բառապաշարի մյուս շերտերի տարբերակումը ներկայանում է միանգամայն համակարգված ու ամբողջական: Սևակն առանձնացնում է ևս չորս շերտ՝ **գրաբար բառեր, միջին հայերենյան բառեր, բարբառային բառեր, նոր հայերեն բառեր**¹⁶: Վերջին դեպքում նկատի ունի նորակազմ բառերը և փոխառյալ նորաբանությունները:

Բառապաշարի շերտերի նկարագրությանը **Էդ. Աղայանը** անդրադառնում է հայերենի բառային կազմի ծագումնաբանական դասակարգումը կատարելիս: Նա առանձնացնում է ութ շերտ՝ *համահայկական, համագրական, միջինհայերենյան, նոր գրական, մասնավոր*

¹⁵ Տե՛ս **Գ. Մևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 2-րդ վերահրատ., Եր., 2009, էջ 113:

¹⁶ Տե՛ս նույն տեղը:

գրական, աշխարհաբարյան, հին կամ գրաբարյան և բարբառային բառեր: **Համահայկական** է համարում այն բառերը, որոնք գործածվել են հին հայերենում ու գրաբարում և պահպանվել են մեր լեզվի գրական ու խոսակցական տարբերակներում և նույնիսկ բարբառներում կամ դրանց մեծագույն մասում: «Այս կարգին պատկանող բառերը, որոնք հսկայական թիվ են ներկայացնում,- գրում է նա,- մեր աշխարհաբար գրական լեզվի հիմքն են կազմում: Դրանք հայոց լեզվի բառապաշարի այն միջուկն են, որ դարերի ընթացքում ամրացել, հաստատուն կերպով պահպանվել և հայերենի բոլոր դրսևորումների բառապաշարի հիմքը դարձել: Բացի իրենց քանակային մեծությունից, այդ կարգի մեջ մտնող բառերը բնութագրվում են մեծ կենսունակությամբ և, մանավանդ, բառակազմական հսկայական դերով...»¹⁷: Դրանք հայերենի բոլոր տարբերակներում գործածվող ընդհանուր գործածական բառեր են (**ջուր, հաց, եղբայր, աչք, մարդ, գլուխ, տուն, բան, վազել** և այլն), մինչգրաբարյան փոխառություններ (**մանուշակ, հրաման, ձյութ, ոչխար** և այլն), գրաբարի շրջանում կատարված փոխառություններ (**թատրոն, զմուռս, եպիսկոպոս, կիրակի, մեռն** և այլն)¹⁸: Դժվար չէ նկատել, որ Է. Աղայանի կողմից առանձնացված **համահայկական** կոչված բառաշերտը նույնանում է Գ. Սևակի **ընդհանուր հայերեն բառեր**-ին. խնդիրը սոսկ տերմինաբանության մեջ է: Նա, ինչպես և Գ. Սևակը

¹⁷ Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 120:

¹⁸ Տե՛ս նույն տեղը:

չի գործածում **բառային հիմնական ֆոնդ** տերմինը:

Հ. Պետրոսյանի հայերենագիտական բառարանում արդեն տարբերակվում են **ընդհանուրհայերենյան բառեր** և **բառային հիմնական ֆոնդ** հասկացությունները, իսկ նախորդների կողմից գործածված **ընդհանուրհայերենյան** և **համահայկական** տերմինները անուղղակիորեն նույնացվում են, քանի որ հայերենի բառային կազմում բառարանն առանձնացնում է այդ անվանումներով մեկ **ընդհանուր բառաշերտ**: Բայց նախորդների կիրառած տերմինները (**համահայկական//ընդհանուրհայերենյան**) բառարանը գործածում է շատ ավելի լայն նշանակությամբ՝ նրանում նկատի առնելով պատմական տարբեր ժամանակներում և լեզվի տարբերակներում գործառվող բառապաշարի նաև առանձին ենթաշերտերը՝ **գրաբար**, **միջինհայերենյան**, **արևելահայերենյան**, **արևմտահայերենյան** և **բարբառային բառաշերտեր**: Դրանցից յուրաքանչյուրը, ըստ բառարանի, «համապատասխան լեզվավիճակի համար ինքնուրույն, անկախ բառապաշար է»¹⁹: Կարծում ենք՝ տերմինի՝ այս նշանակությամբ գործածությունը առավել համոզիչ է և տրամաբանական: **Նախ**՝ գրաբարյան, միջինհայերենյան և մնացյալ շերտերը իրապես համահայկական են և, ինչպես անվանումն է ենթադրում, գործածվել կամ գործածվում են **ընդհանուր հայության** կողմից: Նույն հաջողությամբ՝ համահայկական կարող են համարվել նաև բառապա-

¹⁹ **Հ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 114:

շարում նախորդների կողմից առանձնացվող մյուս շերտերը՝ **համագրական** (ծաղկավառ, փիլիսոփա, փառահեղ, քերական, գանգրահեր, իդձ, սյուք, տենչ և այլն) կամ **նոր գրական** (օղանավ, ախտահանել, մանրէ, բուրումնավետ, միլիոն և այլն) և կամ **աշխարհաբարյան** (մատղաշ, մուգ, կտրիճ և այլն): **Երկրորդ՝** Է. Աղայանի դասակարգման մեջ թեև պահպանված է դասակարգման սկզբունքի միասնականությունը, սակայն տարբերակվող շերտերը չեն բացառում մեկը մյուսին. տեսակասեռային հարաբերության մեջ են (խախտվում է գիտական դասակարգման կարևոր սկզբունքներից մեկը. առանձնացվող կողմերը կըրկնում-ներառում են միմյանց). բառերի շատ որոշակի քանակ, որը ներկայացվում է որպես **նոր գրական**, հաջողությամբ կարող է միաժամանակ **համագրական** և կամ **մասնավոր գրական** համարվել: Է. Աղայանի այս դասակարգումը կարելի է ընդունել միայն խիստ պայմանականորեն: Եվ, ինչպես ասացինք, հայերենագիտական բառարանը առաջարկում է դասակարգման առավել ընդունելի տարբերակ:

Նշված բառարանում **բառային հիմնական ֆոնդ** հասկացությունը բնորոշվում է խիստ համառոտ. «Բառապաշարի առավել գործուն, կենսունակ շերտը երբեմն կոչվում է **բառային հիմնական ֆոնդ**»²⁰: Այսպես: Չեն բերվում համապատասխան բացատրություններ և օրինակներ, չեն նշվում այլ հատկանիշներ: *Գործուն, կենսունակ* բնութագրումները ենթադրել են տալիս, որ

²⁰ Տե՛ս նույն տեղը:

գործ ունենք բառապաշարի այդ շերտի դասական լայն ըմբռնման հետ:

Ուսումնասիրողներից **Ա. Մարգարյանը** հետևում է Գ. Սևակի շերտաբանական դասակարգմանը՝ ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում առանձնացնելով հինգ շերտ՝ **ա)** ընդհանուր հայերեն բառեր, **բ)** գրաբարյան (գրաբար) բառեր, **գ)** միջին հայերեն բառեր, **դ)** բարբառային բառեր, **ե)** նոր հայերեն բառեր: Մեզ հետաքրքրող շերտի (իր բնութագրմամբ՝ **ընդհանուր հայերեն բառեր**) վերաբերյալ լեզվաբանը տալիս է շատ համառոտ, բայց ճշգրիտ բնութագրումներ: Դրանք, ըստ լեզվաբանի, կազմում են ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի հիմնական ու առանցքային շերտը, ամենակարևոր դերն են կատարում մարդկանց հաղորդակցական գործընթացում և բնութագրվում են երեք հիմնական հատկանիշներով՝ «**ա)** սերում են ավելի վաղ ժամանակներից և առավել հարուստ կենսագրություն ունեն, **բ)** արտացոլում են արտաքին աշխարհի և մարդկային կյանքի առավել կարևոր երևույթներն ու իրողությունները, **գ)** շատ ավելի մեծ չափով են մասնակցում բաղադրյալ բառերի կազմությանը և հիմք են ծառայում նրանց համար»²¹: Սկզբունքորեն պաշտպանելով Գ. Սևակի մոտեցումը և առաջնորդվելով նրա դասակարգմամբ՝ **Ա. Մարգարյանը**, սակայն, չի անդրադառնում այդ բառապաշարի զարգացման ու փոփոխության խնդիրներին: Ամենայն հավանականությամբ, **Ա. Մարգարյանը** կարծես

²¹ **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993, էջ 177:

հակված չէ պաշտպանելու **ընդհանուր հայերեն բառեր** հասկացության այդ ըմբռնումը և այդ բառաշերտը կայուն գործածական է համարում լեզվի զարգացման բոլոր փուլերում ու բոլոր տարբերակներում՝ առանց նվազման կամ հավելումի և զարգացումների: Այդ մասին նա թեև ուղղակիորեն չի արտահայտվում, սակայն բառաշերտի ընդհանուր բնութագրության մեջ ըստ էության պաշտպանում է այդ մոտեցումը: Ա. Մարգարյանը գրում է. «Այդ շերտին են պատկանում բոլոր այն բառերը, որոնք ընդհանուր են հայոց լեզվի բոլոր փուլերի ու հատվածների՝ թե՛ գրաբարի, թե՛ միջին հայերենի, թե՛ բարբառների և թե՛ արևմտահայ ու արևելահայ աշխարհաբարների համար, ինչպես՝ **քիթ, մարդ, քույր, եղբայր, սիրտ, աչք, ձեռք, գլուխ, ...աշխատել, ուտել, սիրել գալ, ...ես, դու, մի//մեկ, երկու, երեք...**»²²: **Ընդհանուր հայերեն բառեր** տերմինը գործածվում է նեղ ըմբռնմամբ և ըստ էության նույնացվում է **բառային հիմնական ֆոնդ** հասկացության նույնպիսի ըմբռնմանը, որը հասկացության բովանդակությունից դուրս է թողնում տևական ժամանակի մեջ փոփոխությունների ենթարկվող շերտը:

Ժամանակակից հայոց լեզվի ակադեմիական հրատարակությունը գրեթե նույն հատկանիշներով բնութագրվող բառաշերտը կոչում է **բառային հիմնական ֆոնդ**: Ըստ այդմ՝ բառային հիմնական ֆոնդը բառային կազմի կենսականորեն անհրաժեշտ շերտն է, մեր լեզ-

²² Տե՛ս **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993, էջ 177:

վի բառային կազմի հիմքը, փոփոխության ենթարկվում է դանդաղ: Այն դարերի պատմություն ունի, «գոյություն է ունեցել հազարավոր տարիներ առաջ և ժառանգաբար պահպանվել ու հասել է մեզ»²³: Այստեղ, ինչպես տեսնում ենք, հստակորեն պաշտպանվում է հայերենի բառային կազմի այդ շերտի պատմական զարգացման՝ փոփոխության գաղափարը: Ըստ հետազոտողի՝ այդ շերտի բառերից շատերը անփոփոխ պահպանվել են (քար, հող, լեռ, ջուր, մայր, եղբայր, ծառ, խմել, գնալ, քնել և այլն), շատերը դուրս են ընկել (արոր, վահան, սաղավարտ, քյոխվա, նիզակ, ոստիկան և այլն), դրան հակառակ՝ մարդու հասարակական գործունեության փոփոխությամբ պայմանավորված՝ բառային հիմնական ֆոնդ են մուտք գործել այլ բառեր (կոլտնտեսական, սովետ, կենտկոմ, հարվածային, հեռուստացույց, տիեզերագնաց և այլն): Այլ կերպ ասած՝ «ժամանակակից հայերենի բառային հիմնական ֆոնդի մեջ մտնում են այնպիսի բառեր, որոնք արտահայտում են այսօրվա և վաղ անցյալի մարդու համար ընդհանուր հասկացություններ...»²⁴: Փաստորեն **բառային հիմնական ֆոնդ** բնորոշմամբ նկատի են առնվում և՛ լեզվի պատմական զարգացման բոլոր շրջափուլերում գործածվող ընդհանուր հայերեն բառերը, և՛ տվյալ շրջափուլում որոշակի փոփոխություններ կրած գործածական բառաշերտը:

²³ «Ժամանակակից հայոց լեզու», հ. 1, Եր., 1979, էջ 221:

²⁴ Նույն տեղում, էջ 221-222:

Համեմատաբար նոր ժամանակներում իր բուհական ձեռնարկում, անդրադառնալով հարցին, **Ֆ. Խլղաթյանը** հայերենի բառապաշարում (նա առավել նպատակային և ճշգրիտ է համարում **բառային կազմ** տերմինը) առանձնացնում է գործառական ակտիվություն ունեցող բառաշերտ, որը և անվանում է **բառային հիմնական ֆոնդ**: Ոլորտային սահմանափակություններ չունենալու պատճառով բառային հիմնական ֆոնդի բառերը նա համարում է **համագործածական** կամ **չեզոք**²⁵: Դասակարգման ելակետ և սկզբունք է ընտրվում փաստորեն ֆոնդի բառապաշարի գործառական ակտիվությունը: Ապա հայերենի բառապաշարի կամ բառային կազմի համար իբրև **ծագումնաբանական խումբեր** է տարբերակում հետևյալները՝ **բնիկ հայերեն բառեր**, **բնաձայնական բառեր**, **ոչ հնդեվրոպական բնիկ հայերեն բառեր**, **աշխարհաբարյան գրական հայերեն բառեր**, **բարբառային և արևմտահայերեն բառեր**: Փոխառյալ և օտար բառերը լեզվաբանը ներկայացնում է այս տարբերակումներից դուրս՝ առանձին խորագրով²⁶: Ի դեպ, լեզվաբանը բառապաշարը դասակարգում է նաև **ըստ գործածության** (հավանաբար նկատի ունի գործածության հաճախականությունը) և **ըստ գործածության ոլորտների**՝ վերջինում առանձնացնելով նաև **համագործածական** բառերի խումբը: Մոտեցումը կարծես համակարգված չէ. հստակ չեն համակարգման սկզբունքները, ամբողջական չեն դասակարգ-

²⁵ Տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, Ժամանակակից հայոց լեզու, Ա մաս, Եր., 2009, էջ 177:

²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 179-200:

ված խմբերը: Օրինակ՝ ծագումնաբանական խմբերում չեն նշվում նորակազմությունները՝ նոր բառերի շերտը, չեն ճշգրտվում **համագործածական բառեր** և **բառային ֆոնդ** հասկացությունները, չեն մատնանշվում դրանց փոփոխության հնարավոր սահմանները: Այս հարցերը հիմնավոր քննարկման չեն ենթարկվում՝ թեևս աշխատանքի բնույթով պայմանավորված:

Մի շարք այլ աշխատանքներում թեև չի խոսվում համահայկական բառապաշարի կամ բառային հիմնական ֆոնդի մասին, բայց այս կամ այն սկզբունքով դասակարգումներում անուղղակիորեն նկարագրվում է նաև այդ բառապաշարը: Այսպես. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի և դրա զարգացման խնդիրներով զբաղվող լեզվաբաններից **Հ. Օհանյանը** չի անդրադարձնում բառապաշարի ծագումնաբանական կամ շերտաբանական դասակարգմանը և բառապաշարը ըստ գործածության ակտիվության ու տարածվածության դասակարգելիս առանձնացնում է երեք շերտ՝ **ա**) ակտիվ կիրառություն և լայն տարածվածություն ունեցող բառեր, **բ**) գործածության սահմանափակություն և ոչ մեծ ընդգրկում ունեցող բառեր, **գ**) գործածության սովորական կամ միջին հաճախականություն ունեցող բառեր: Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ իրապես շատ դժվար է գործածության սովորական կամ միջին հաճախականություն ունեցող բառերը տարբերակել մյուս երկու շերտերից, մի բան, որ, մեր կարծիքով, չի հաջողվել նաև ուսումնասիրողին: Առավել կարևոր և ուշագրավ են նրա կողմից ակտիվ բառապաշարին տված բնութագրությունը և դրանում բառային

շատ որոշակի խմբեր առանձնացնելը: Այդ տասնհինգ խմբերը (հեղինակը հավելում է նաև շատ գործածական բայերի մի մեծ խումբ՝ առանց բնութագրման) ըստ էության հայերենի բառային հիմնական ֆոնդը կազմող բառերն են կամ, այլ ձևակերպմամբ, **համահայկական բառապաշարը**, ինչպես՝ **ա)** անձնական, ցուցական դերանունները չնչին բացառությամբ, հարցահարաբերական և որոշյալ մի շարք դերանուններ, **բ)** մարդու մարմնի մասերի անվանումները, **գ)** ընտանիք, գերդաստան անվանող բառերը, **դ)** տարվա եղանակների, ամիսների, շաբաթվա օրերի անվանումները, **ե)** կենդանիների և բույսերի տեսակները նշող բառեր, **զ)** թվականները, առանձնապես մեկից տասը, տասնավորները, հազարն ու միլիոնը, **է)** աշխատանքի, արտադրության հետ կապված հասկացությունների անվանումներ, **ը)** շարժում ցույց տվող բառերի մեծ մասը և այլն²⁷:

Սակայն դասակարգումը ունի ձևակերպումներ և ներկայացվող լեզվական նյութի առանձին հաստատումներ, որոնք այնքան էլ համոզիչ չեն: Օրինակ՝ որքանո՞վ է հիմնավոր այն պնդումը, որ ակտիվ բառապաշարի մաս է կազմում միայն հարցահարաբերական ու որոշյալ դերանունների մի մասը. այդ բառապաշարից դուրս են թողնվում, օրինակ, ժխտական, փոխադարձ կամ անորոշ դերանունները կամ դրանց մի մասը (**ոչինչ, ոչ մեկը, իրար, միմյանց, ինչ-որ, մի քանի, ուրիշ,**

²⁷ Տե՛ս **Հ. Օհանյան**, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման ուղիները, Եր., 1982, էջ 33-35:

այլ և **այլն**): Կա ևս մի հետաքրքիր հանգամանք: Քրննարկվող գիրքը շարադրվել է մոտ չորս տասնամյակ առաջ: Հասկանալի պատճառներով (հասարակական կյանքի առաջընթաց, քաղաքական և տնտեսական զարգացումներ և այլն) էական փոփոխություններ կան բառապաշարի այն շերտերում, որոնք ուղղակիորեն առնչվում են այդ պատճառներին: Ակտիվ բառապաշարի մաս համարվող մի խումբ բառեր դուրս են մղվել, հնացել են, դարձել օտարաբանություններ կամ պարզապես քիչ գործածական բառեր են, ինչպես՝ **բրիգադ, հաստոց, կոլտնտեսություն, սովետ, դիրեկտոր, պրոցես, պրոբլեմ, մուրաբա** և այլն: Եվ հակառակը, նույն պատճառներով այդ բառապաշարում չեն արձանագրված բազմաթիվ բառեր, որոնք ակտիվ գործածություն ունեն այսօր և առնչվում են համակարգչային տեխնիկային (համացանց, սոցցանց, օգտատեր, լայվ, համակարգիչ, կայք), ռազմական կյանքին (գորակոչ, զինձառայող, ռազմական, հրետակոծում, գորք, խոցում), քաղաքական ու դիվանագիտական ոլորտին (ԵԱՏՄ, Եվրախորհուրդ, ՀԱՊԿ, հանրահավաք, ժողովրդավարություն), սննդի տեսակներ (չիպս, սուշի, սթեյք, համբուրգեր), գործիքներ ու սարքավորումներ, մասնագիտություն, կոչում, աստիճան, պաշտոն, դիրք կամ այլինչ նշանակող կամ դրանց առնչվող բառեր են (տնօրեն, վարչապետ, ինքնանկար, նախարար, խոսնակ, փոխխոսնակ, փոխարտգործնախարար, տնտեսվարող, գրասենյակ, պարգևավճար, դրամաշնորհ, ԱԶ, ՀՀՎ, ԱԱԾ, ԱՊՊԱ, ՊԵԿ) և այլն:

Քննարկվող հարցը անհամեմատ համակարգված և հստակ է ներկայացվում «Ժամանակակից հայոց լեզու» բուհական դասագրքում: Այստեղ ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում առանձնացվում է երկու հիմնական շերտ՝ **բառային հիմնական ֆոնդ** (որը անվանվում է նաև **բառագանձ**) և **բառային կազմ**: «Բառային հիմնական ֆոնդը,- կարդում ենք այդ դասագրքում,- բառապաշարի հիմքն է, նրա բազան, ամենակայուն շերտը, որի մեջ առաջին հերթին մտնում են նախասկզբնական և նախնական ամենակարևոր և ամենաանհրաժեշտ այն բառերը, որոնք հաստատապես մուտք են գործել այդ լեզվով խոսող ժողովրդի կյանքում: Դրանք ընդհանուր գործածական այն բառերն են, որոնք անվանում են օբյեկտիվ իրականության առարկաները, երևույթները, գործընթացները, հատկանիշները և այլն: Այդ բառերը տարբեր դարաշրջանների և տարբեր ժողովուրդների լեզուների համար կարող են բնույթով տարբեր լինել»²⁸: Ըստ այդմ՝ բառային հիմնական ֆոնդի մեջ են մտնում այն բառերը, որոնք հանրահասկանալի են տվյալ լեզվով հաղորդակցվողներին և գործածվում են հանրության բոլոր շերտերի կողմից՝ անկախ կրթությունից, մասնագիտությունից և բնակության վայրից: **Բառային կազմը**, ըստ նույն տեսակետի, ներառում է լեզվի ամբողջ բառապաշարը, այդ թվում նաև հիմնական բառաֆոնդը²⁹. նրա մեջ են մտնում նոր բառերն ու բառիմաստները, որևէ բնա-

²⁸ Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2017, էջ 163:

²⁹ Տե՛ս նույն տեղը:

զավառում՝ գեղարվեստական գրականություն, ՋԼՄ-ներ, գիտություն և այլուր, գործածվող բառերը և այլն: «Լեզվի բառային կազմը հիմնական բառաֆոնդի համեմատությամբ քանակապես շատ ավելի ընդարձակ և ավելի փոփոխական է, նրա սահմաններն ավելի շարժուն են»³⁰: Այս տեսակետում, ինչպես և Գ. Մևակի դիտարկումներում, հատուկ անդրադարձ է կատարվում բառային հիմնական ֆոնդի հարաբերականորեն կայուն լինելուն. այդ բառապաշարը ներքին և արտաքին գործոնների ազդեցության տակ տևական ժամանակի մեջ մասամբ ենթարկվում է փոփոխությունների. դուրս են ընկնում հնացած բառերն ու բառիմաստները, նոր բառերի և բառիմաստների մի որոշակի մաս մուտք է գործում հիմնական բառաֆոնդ: Սկզբունքորեն համաձայնելով այս մոտեցմանը՝ դժվար է, սակայն, համաձայնել այն կարծիքին, որ բառաֆոնդի փոփոխությունը կատարվում «հավասար արագությամբ», և որ «յուրաքանչյուր հազարամյակի ընթացքում դուրս է ընկնում այդ բառերի 15%-ը»³¹, պահպանվում է 85%-ը: Հետաքրքիր է, որ օտարազգի լեզվաբանի (Սվոդեշ) այս դիտարկումները միջնորդավորված հղումով բերվում են Գ. Ջահուկյանի աշխատությունից և բերվում են առանց վերապահության, երբ ինքը՝ Ջահուկյանը, խիստ վերապահությամբ է ընդունում բառաֆոնդի փոփոխության այդ վիճակագրությունը: Միանգամայն արդարացի է հայ լեզվաբանի այն պըն-

³⁰ Ա. Սուքիասյան, Զ. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2017, էջ 166:

³¹ Տե՛ս նույն տեղը:

դումը, որը վերաբերում է Սվոդեշի լեզվաժամանակագրական մեթոդի հիմքում ընկած ենթադրության «խիստ մոտավոր բնույթին». «Հիմնական բառաֆոնդի փոփոխությունը, - գրում է Գ. Ջահուկյանը, - խիստ հեռու է հավասարաչափությունից և կարող է տալ տարբեր լեզուների և լեզուների տարբեր շրջանների համար մինչև 2-3 տասնյակ տոկոսի տատանում»³²: Ակնհայտ է, օրինակ, որ վերջին հարյուրամյակում և առավել ևս վերջին հիսուն տարիներին հայերենի բառային հիմնական ֆոնդը էական փոփոխություններ է կրել. միջուկը հիմնականում պահպանվել է, բայց և ընդհանուր ֆոնդը հարստացել է բազմաթիվ նոր բառերով ու բառիմաստներով:

Այսպիսով: Դժվար չէ նկատել, որ մեզանում միասնական կարծիք և մոտեցում չկա ընդհանուր հայերեն (ընդհանուրհայերենյան) բառաշերտ, ընդհանուր բառային ֆոնդ, բառային հիմնական ֆոնդ, համահայկական բառապաշար, բառային հիմնական կազմ, բառային կազմ և նման հասկացությունների վերաբերյալ: Իսկ երբեմն էլ հստակ չեն նշվում դասակարգման սկզբունքները: Ըստ էության, նույն հատկանիշներով բնութագրվող բառաշերտը մասնագիտական գրականության մեջ տարբեր կերպ է ընկալվում կամ անվանվում:

Ընդհանուր և միասնական մոտեցում ձևավորելու համար, կարծում ենք, պետք է ճշգրտել երկու կարևոր

³² Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 219:

հարց՝ 1. տերմինաբանությունը, 2. երևույթի ընդգրկման և փոփոխությունների շրջանակը:

Մեր մոտեցումը հետևյալն է. բառապաշարի քննարկվող շերտը անվանելու համար շրջանավոր տերմիններից նախընտրելի է **բառային հիմնական կազմ** կամ **հիմնական բառակազմ** անվանումը: **Ընդհանուրհայերենյան, համահայկական** և նման տերմինները, ինչպես վերը նկատեցինք, շփոթություն են ստեղծում և ճշգրիտ չեն բնութագրում երևույթը: **Բառային հիմնական կազմ** անվանումը հստակ է և բովանդակությամբ նույնանում է **բառային հիմնական ֆոնդ** կամ **հիմնական բառաֆոնդ** հասկացությանը: Առաջինը նախընտրելի է՝ պարզապես հայերեն (ոչ օտար տերմին) լինելու հանգամանքով պայմանավորված:

«Բառաշերտը (пласть слов) բառային կազմի այն մասն է, որը որոշակի հատկանիշով (բառամթերքով և գործառությամբ) առանձնանում և ինքնուրույն խումբ է կազմում»³³: Ասել է թե, շերտաբանական դասակարգում կատարելիս պետք է առանձնացնել բառապաշարի այն շերտերը, որոնք իրարից տարբերվում են բառային ընդհանուր կազմով (բառամթերքով) և գործառական, կիրառական յուրահատկություններով, նաև այն հատկանիշով, թե որքանով են առանձնացվող շերտերը կենսունակությամբ ու գործածականությամբ տարբերվում իրարից: Ռուսերեն լեզվաբանական տերմինների բառարանում հասկացությունը բնութագրվում է հետևյալ կերպ. բառային հիմնական ֆոնդը

³³ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 114:

լեզվի հիմնական (սկզբնատիպ) բառերի ամբողջությունն է, նրա բառապաշարի առավել կայուն մասը³⁴: Մեկ այլ բնորոշմամբ՝ բառային հիմնական ֆոնդը լեզվի բառապաշարային հիմքն է, բառապաշարի առավել կայուն շերտը, որը ընդգրկում է ամենից առաջ սկզբնատիպ, առավել կարևոր և անհրաժեշտ ընդհանուր գործածական անվանումները այն առարկաների, երևույթների, գործընթացների, որոնք կապված են ռեալ իրականության հետ և ամուր մտած են ժողովրդի կյանքի մեջ³⁵: Այս բնորոշումները ցույց են տալիս, որ լեզվի բառային հիմնական կազմը ունի որոշակիորեն ընդգծված և առանձնացող հասկանիշներ:

Փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել դրանք:

1. Ընդգրկման կամ, այսպես կոչված, **տարածական-իմաստային առումով** բառային հիմնական կազմը վերաբերում է մարդկային կյանքի առավել կարևոր երևույթներին և իրողություններին՝

Ա) մեզ անմիջականորեն շրջապատող առարկաների, երևույթների, կենցաղային իրերի ու առարկաների անվանումներ՝ **տուն, հաց, ջուր, աղ, սեղան, աթոռ, հող, օդ, մարդ, քամի, լույս, այգի, փողոց, դանակ, պատառաքաղ, ափսե, գդալ,**

Բ) ազգակցություն, բարեկամություն և դրանց մոտ իմաստներ նշանակող բառեր՝ **քույր, որդի, եղբայր, քե-**

³⁴ Տե՛ս Օ. Աхманова, Словарь лингвистических терминов, М., 2013:

³⁵ Տե՛ս Э. Азимов, А. Щукин, Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам), М., 2009:

ռի, ընկեր, ընկերուհի, աներ, հորաքույր, մորաքույր, հարևան, բարեկամ, ազգական, հարազատ,

Գ) զանազան զգացմունք, սպրում, տպավորություն արտահայտող բառեր՝ սեր, ուրախություն, ցավ, անտարբերություն, վիշտ, մեղք, լավություն, չարություն, տրամադրություն, ավստասանք, հանգստություն,

Դ) առարկաների և երևույթների անմիջական հատկանիշ անվանող բառեր՝ լավ, վատ, հիմար, անմիտ, հետաքրքիր, պարզ, հասարակ, անհիմաստ, ուշադիր, ի միջի այլոց, հպարտ, լուրջ, վստահ,

Ե) մարդու մարմնի մասերի անվանումներ՝ թև, գլուխ, աչք, ձեռք, սիրտ, մատ, լեզու, ոտք, թիկունք, պարանոց, մազ, հոնք, փոքր, եղունգ, ծունկ,

Զ) շաբաթվա օրերի անվանումներ և ամսանուններ՝ կիրակի, երկուշաբթի, մայիս, մարտ, հունվար, ապրիլ,

Է) ամենօրյա գործողությունների և վիճակների անվանումներ՝ ասել, խոսել, վազել, քնել, լսել, աշխատել, երգել, գնալ, նկարել, հիշել, ապրել, անել, փորձել, ելնել, աղմկել, զրուցել, նայել, հավանել, դնել, տանել, թողնել, դառնալ,

Ը) սննդի տեսակ, խմիչք, հագուստ և դրանց հետ առնչվող հասկացություններ անվանող բառեր՝ հաց, ջուր, ճաշ, թեյ, զինի, հյութ, միս, լոլիկ, վարունգ, պանիր, կարագ, կարտոֆիլ, խնձոր, սուրճ, կոշիկ, վերնաշապիկ, գլխարկ, ակնոց, մատանի,

Թ) բնակության վայրերի և դրանց առնչվող իրողությունների անվանումներ՝ **քաղաք, գյուղ, մարզ, ավան, փողոց, տուն, դուռ, պատուհան, տանիք, հատակ, աթոռ,**

Ժ) կենդանական և բուսական աշխարհի հետ կապված անվանումներ՝ **մարդ, ձի, կով, ոչխար, հավ, գայլ, աղվես, մեղու, ծաղիկ, վարդ, տերև, թթենի, խնձոր, խոտ, դեղձ, նուռ:**

2. Բառային հիմնական կազմը **խոսքի մասային պատկանելությամբ** ներառում է բոլոր խոսքի մասերը առավել կամ պակաս չափով. առավել մեծ թիվ են կազմում **գոյական, ածական, բայ** համարվող բառերը, իսկ մյուս խոսքի մասերից առանձնանում են որոշակի խմբեր, որոնք թեև քանակով մեծ չեն, բայց աչքի են ընկնում գործածության մեծ հաճախականությամբ, ինչպես՝ **ա**) թվականներից (հատկապես քանակականները)՝ **մեկից տասը, տասնավորները, հարյուր, հազար, միլիոն, միլիարդ** և այլն, **բ**) դերանուններից՝ **ես, դու, իրար, ոչ մի, մի քանի, ոչ ոք, բոլոր, ամեն մի, յուրաքանչյուր, երբ, ուր, ինչքան, այստեղ, սա, դա, այսքան, այլ և այլն,** **գ**) ձայնարկություն, վերաբերական, մակբայ, կապ և շաղկապ խոսքի մասերից՝ **վա՛յ, ա՛խ, է՛, ի՛, է՛յ, ա՛, իհարկե, երևի, հավանաբար, անշուշտ, ո՛չ/չէ՛, այո՛, դժվար թե, միգուցե, արագ, շուտ, դանդաղ, միշտ, ուշ, երեկ, վաղը, հիմա, անընդհատ, համար, նման, պես, մասին, վրա, տակ, բացի, առանց, մոտ, ու, իսկ, բայց, սակայն, կամ, նաև, թե, որ, թեև, եթե, մինչև և այլն:**

3. Բառակազմական տեսակետից և ծագումնաբանորեն բառային հիմնական կազմը լեզվի ընդհանուր բառային կազմի և նրա պատմական զարգացման բառակազմական հիմքն է. «Հիմնական բառային կազմը ազդում է լեզվի ընդհանուր բառային կազմի ձևերի և միջոցների հարստացման վրա, որոշում է նրա պատմական զարգացման ներքին օրինաչափությունները»³⁶: Այդ երկուսի միջև առկա է կառուցվածքային ամուր կապ: Ծագումնաբանորեն լինելով առավելապես պարզ բառեր՝ հիմնական կազմի բառերը բաղադրական հիմքեր են դառնում ընդհանուր բառապաշարի, այդ թվում՝ նորակազմությունների համար, ինչպես՝ **արև** > *արևային, արևմուտք, արևկող, արևափայլ, անարև, արևառ, ԱՐԵՎԱԿ, արևահամ* և տասնյակ ու հարյուրավոր բառեր: Կամ՝ **սիրտ** > *սրտակից, սրտային, սրտոտ, անսիրտ, սրտացավ, սրտագիր, սրտագրող, սրտագրություն, սրտաբան, սրտաբաց, սրտաբեկ, սրտագին, սրտակեղեք* և այլն:

4. Լեզվի բառային հիմնական կազմը լեզվի ընդհանուր բառապաշարի նաև իմաստաբանական հիմքն է: Արդի հայերենի բառային բազմիմաստությունը ձևավորվել և զարգացել է՝ հիմքում ունենալով առավելապես հիմնական բառային կազմի իմաստաբանական կառուցվածքն ու շերտերը: **Թ՛ն** բառի իմաստային հեն-

³⁶ Տե՛ս **В. Виноградов**, Избранные труды. Лексикология и лексикография, М., 1977 (<https://scicenter.online/leksikografiya-frazeologiya-leksikologiya-scicenter/izbrannyye-trudyi-leksikologiya.html>):

քի վրա են, օրինակ, ձևավորվել նրա երկու տասնյակից ավելի իմաստները, **կառավարել**-ը իր բոլոր նոր՝ աշխարհաբարյան իմաստներով սերում է գրաբարյան սկզբնական իմաստից՝ կառք՝ առարկա, միավոր, կառույց, համակարգ կամ այլինչ ղեկավարելը, ուղղություն տալը: **Կայք** բառի նոր՝ համակարգչային **սայթ** իմաստը (իմաստային նորաբանություն) ածանցյալ է գրաբարի **կայ** բայական իմաստից և այլն: Մրանք հնից ածանցված նոր իմաստներ են, որ համալրում են բառային ընդհանուր կազմի իմաստաբանությունը: Ըստ որում, բազմիմաստ բառի ոչ բոլոր իմաստները կարող են համարվել հիմնական բառակազմի իմաստային միավոր կամ մուտք գործել բառային հիմնական կազմ³⁷: Օրինակ՝ հենց **կայք** բառի՝ աշխարհաբարում առաջացած իմաստներից մեկը (ունեցվածք, հարըստություն, կարողություն, ինչք, գույք, կալվածք. մյուս՝ **հանգրվան** իմաստը հնացած է) այսօր չի կարող համարվել բառային հիմնական կազմի միավոր, քանի որ այն համագործածական բառ չէ: Կամ՝ **նախարար** բառի երկու հիմնական իմաստներից (1. Հին Հայաստանում որևէ նահանգի՝ գավառի՝ երկրամասի տեր հանդիսացող իշխան, 2. Մինիստր)³⁸ արդի հայերենի բառային հիմնական կազմ անցավ երկրորդը՝ **մինիստր** իմաստը: Կա նաև մի ուրիշ հետաքրքիր իրողություն՝ կապված բառիմաստի կամ ավելի ճիշտ՝ բառի հոմանշային

³⁷ Տե՛ս **А. Реформатский**, Введения в языкознание (<http://www.bibliotekar.ru/yazikovvedenie-1/27.htm>)

³⁸ Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

տարբերակների հետ: Ակնհայտ է, որ բառային հիմնական կազմում գրեթե առանց բացառության «հաշվառվում են» բառի ոճականորեն չեզոք իմաստները կամ հոմանշային չեզոք՝ համագործածական տարբերակները, ինչպես ցույց են տալիս վերը նշված օրինակները: Մեկ այլ օրինակ՝ գույն անվանող **սպիտակ** բառի հոմանշային երկու տասնյակից ավելի տարբերակներից (ճերմակ, ձյունաթույր, սպիտակավուն, ձյունաճերմակ, ձյունափրփուր, ճերմակափառ, սպիտակափառ, ձյունասպիտակ, կաթնաթույր, ձյուներանգ, ճերմակորակ, շուշանաթույր և այլն) արևելահայերենում հիմնական կազմի բառ է **սպիտակ**-ը, արևմտահայերենում՝ **ճերմակ**-ը: Հնարավոր է նաև, որ ի սկզբանե հիմնական բառակազմում «հաշվառվող» բառի հոմանշային չեզոք տարբերակներից մեկը, աստիճանաբար ոճական երանգավորվածությունն ձեռք բերելով, դուրս մղվի գործածությունից (բառային հիմնական կազմից)՝ իր տեղը զիջելով հոմանշային չեզոք այլ տարբերակի, ինչպես, օրինակ՝ **ուստր** / տղա, **ատոք** / լիքը, **ունկն** / ականջ, **ակաղձուն** / առատ, լեփլեցուն, **վասն** / համար, մասին, **հանգույն** / նման, **արտորալ** / շտապել, **ի հեճուկս** / հակառակ, **ի տրիտուր** / որպես հատուցում, պատասխան, **զի** / քանի որ և նման այլ տարբերակներից առաջինները:

Հետաքրքիր է նաև հետևյալ հանգամանքը. ժամանակի ընթացքում բառային հիմնական կազմում կարող է հաստատվել նաև բառի ոչ թե հիմնական, այլ երկրորդական կամ փոխաբերական և կամ հետագայում ձեռք բերված իմաստներից մեկը կամ մյուսը: Օրինակ՝ **հավ**

(թոչուն / ընտանի թոչուն), **կաղ** (հաշմանդամ / ոտքից հաշմանդամ), **պատարագ** (նվեր / գոհ / եկեղեցական արարողություն), **պարապել** (պարապ լինել / զբաղվել), **խնդրել** (որոնել, փնտրել / ուզել, աղերսել), **վերարկու** (վրան գցելու զգեստ / ձմեռային վերնագգեստ), **ապրել** (փրկվել / կյանք վարել), **աշխատել** (հոգնել, ներդրություն կրել / աշխատանք կատարել, վաստակել), **սիրուն** (սեր ունեցող / գեղեցիկ) բառերի՝ փակագծերում նշված առաջին իմաստները հնացած են. հիմնական բառային կազմ են մտել դրանց նոր՝ աշխարհաբարյան՝ երկրորդ իմաստները. հիմնական կազմ է անցել, օրինակ, **աթոռ** բառի նաև փոխաբերական՝ **պաշտոն** իմաստը: Հիմնական կազմի բառերը հանրահասկանալի են:

5. Գործառական տեսակետից բառային հիմնական կազմը ամենից ակտիվ բառաշերտն է, գործուն է, կենսունակ: Հայտնի է, որ ըստ գործածականության՝ բառերը լինում են **գործուն** և **ոչ գործուն**: Առաջինները այն բառերն են, որոնք լեզվակիրառողի համար ոչ միայն հասկանալի են, այլև գործածվում են նրա կողմից: Երկրորդները լեզվակիրառողը հասկանում է, սակայն ինքը, որպես կանոն, չի կիրառում³⁹: Հասկանալի է, որ գործուն բառապաշարի հիմքը բառային հիմնական կազմն է: Այսինքն՝ բառային հիմնական կազմի բառերը ամենից գործածականներն են: Բայց այս դեպքում պետք է նկատի առնել նաև մեկ ուրիշ հանգամանք.

³⁹ Տե՛ս <https://studopedia.org/8-226370.html>

բառային հիմնական կազմի բաղադրիչներ լինելով հանդերձ՝ բառերի որոշակի քանակ կարող է նույն գործածականությամբ չբնորոշվել տարբեր խմբի լեզվակիրառողների համար: Օրինակ՝ **գիտություն, հողված, փաստ, զեկուցում, հիմնավորում, տերմին** բառերը գործուն են գիտությամբ զբաղվող լեզվակիրառողների միջավայրում, բայց բնավ գործածական չեն, ասենք, օրինակ, գյուղատնտեսությամբ զբաղվողների համար, և հակառակը. երկրորդների համար գործածական **արտ, բահ, գոմ, կով, ցանք, բերք, տրակտոր, մարգ, ակոս, էտել, խոտհունձ** բառերը քիչ գործածական են առաջինների միջավայրում: Երկուսն էլ բառային հիմնական կազմի բառեր են՝ տարբեր լեզվակիրառողների կողմից առավել կամ պակաս գործածականությամբ:

6. Լեզվի բառային հիմնական կազմը կայուն է. այս շերտի բառերը շատ ավելի «երկար են ապրում», քան ընդհանուր կազմինը: Հայոց լեզվի բառային հիմնական կազմը բառապաշարի միջուկն է և դարերի ընթացքում ամրապնդվել է հայերենի բոլոր դրսևորումներում՝ գրաբար, միջին հայերեն, արևելահայերեն և արևմտահայերեն, բարբառներ: Սակայն դրանից չի հետևում, որ գրաբարից փոխանցված բառաշերտը իր մշտապես կայուն և անփոփոխ տեղն ունի հիմնական կազմում: Հիմնական շերտը՝ միջուկը, իհարկե, պահպանվում է, ինչպես՝ **հայր, մայր, տուն, հող, քար, ջուր, արև, հաց, լույս, տարի, ամիս, շաբաթ, ժամ** և այլն,

բայց մի շատ որոշակի շերտ նաև դուրս է մնում կամ կրում է իմաստային փոփոխություններ, ինչպես վերը տեսանք: Լեզվի պատմական զարգացման ընթացքում հիմնական բառակազմը նաև համալրվում է: Եվ դա բնական գործընթաց է:

Բառային հիմնական կազմի բնութագրության կարևոր կողմերից մեկը նրա սահմանների, ավելի ստույգ՝ նրանում կատարվող փոփոխությունների հստակեցումն է: Ընդունված մոտեցմամբ, որը սովորաբար անուղղակիորեն մատուցվում է մասնագիտական գրականության մեջ, բառային հիմնական կազմի ենթաշերտեր կամ բաղադրիչներ են համարվում նաև այն բառերը, որոնք լեզվի պատմական զարգացման ընթացքում կրում են որոշակի տեղաշարժեր: Բնութագրվելով զգալի կայունությամբ՝ բառային հիմնական կազմը, այնուամենայնիվ, կրում է փոփոխություններ: Առավել կայուն է բառային կազմի այն հատվածը, որը կապվում է սկզբնատիպ բառապաշարի հետ, գալիս է հնից, անվանում է մեզ անմիջականորեն շրջապատող իրողություններ ու երևույթներ: Փոփոխական է այն ենթաշերտը, որը կապվում է հասարակական կյանքի տեղաշարժերի հետ:

Տվյալ ժամանակաշրջանի համար գործուն և կենսունակ բառաշերտը հնանում, դուրս է ընկնում կամ դառնում սակավ գործածական, և հակառակը. ժամանակի ընթացքում ձևավորվում, ստեղծվում են բառեր կամ բառաշերտեր, որոնք լեզվի զարգացման այս կամ այն հատվածում դառնում են կենսունակ ու գործուն: Տևա-

կան ժամանակի մեջ փոփոխություններն ակնառու են: Այսպես. հին հայերենում, գրաբարում կամ միջին հայերենում բառային հիմնական կազմի շատ միավորներ դուրս են ընկել կամ անցել ոչ գործուն բառաշերտի մեջ, ինչպես՝ **ազատանի, տասնապետ, թագաժառանգ, պայլ, պանդուխտ, անագան, ակադձուն, ազագուն, վաղվաղակի** և այլն: Մոտ անցյալում (նկատի ունենք Խորհրդային Միության տարիները) բառային հիմնական կազմում գործառվող բառեր էին՝ **սովետ, կոլտնտեսություն, շրջկոմ, շրջգործկոմ, պիոներ, հոկտեմբերիկ, պրոսպեկտ, կոմերիտական, շինջոկատ, բրիգադիր, ջոկատավար, գյուղխորհուրդ, գյուղսովետ** և այլն:

Նոր ժամանակներում (նկատի ունենք անկախության երեք տասնամյակները) հայերենի բառային հիմնական կազմը համալրվեց բազմաթիվ նոր բառերով, որոնք հարստացրին հայերենի բառային կազմի ակտիվ ենթաշերտը: Դրանց առաջացման աղբյուրները տարբեր են՝ ա) արդեն իսկ մեր բառապաշարում կիրառվող բառեր՝ (**վարկ, վարկառու, տոկոս, հեղափոխություն, իշխանափոխություն, հակահեղափոխություն, բանակ, զինվոր, զինակոչ, հրամանատար, զորամաս, ավտոմեքենա, քաղաքականություն, ներդրում, խոստում** և այլն), բ) նորակազմություններ՝ **հրետակոծում, օգտատեր, համակարգիչ, տարածաշրջան, հանրահավաք, ցանցահեն, գ)** նախկինում գործածվող բառերի՝ նոր իմաստով կիրառություններ (իմաստային նորաբանություններ)՝ **մարզ, նախագահ, հավանում (լայք), խոցում, նախարար, քայլել, թիրախ, լուում, ոս-**

տիկան, մկնիկ և այլն, դ) փոխառյալ նորաբանություններ՝ **հիփոթեք, մոթել, հոլդինգ, ֆիթնես, կոլաժ, սերիալ, սելֆի, ռոումինգ, շոու բիզնես, կարաոկե, պիցցա** և այլն:

Տեղաշարժերը երբեմն անխուսափելի են դառնում ժամանակի ավելի փոքր հատվածներում՝ հասարակական առավել ազդեցիկ և կտրուկ փոփոխություններով պայմանավորված: Եվ հաճախ այդ փոփոխությունները երկար կյանք չեն ունենում, ուստի առավել տրամաբանական է, կարծում ենք, այդքան ակտիվ տեղաշարժերի ենթարկվող բառաշերտերը չներառել բառալին հիմնական կազմ: Հասարակական կյանքի փոփոխությունները կարճ ժամանակից կարող են դրանք դուրս մղել լեզվից կամ վերածվել քիչ գործածական բառամթերքի: Դրանք գրականության մեջ պարզապես կարող են դիտարկվել որպես ժամանակի գործուն բառապաշարի ենթաշերտեր: Այդպես է, օրինակ, վերջին տարիներին հայերենի գործուն շերտի մեջ «ներխուժած» բազմաթիվ բառերի պարագան՝ **դուխով, լայվ, վեթթինգ, ծեփել, փռել, լայքել, պատժել, թիրախավորել, փողոց փակել, ֆեյք** և այլն:

Ինչ վերաբերում է իմաստային հնաբանություններին (իմաստով հնացած բառեր՝ **բարեկամ, բանավոր, իմաստակ, պարապել** և այլն) և մի շարք բառերի հոմանշային հնացած տարբերակներին (**ուստր, ունկ, անագան, ապաժամ, ազագուն, ակաղձուն, շուրջանակի** և այլն), ապա ակնհայտ է, որ դրանք կենսունակ են եղել լեզվի պատմական զարգացման որոշակի շրջափուլում (առավելապես գրաբարում), հետագայում

դուրս են մղվել կենդանի լեզվից, անցել անգործածական կամ քիչ գործածական բառապաշար և որպես բառային հիմնական կազմի տարրեր կարող են ներառվել միայն տվյալ շրջափուլի բառային կազմում: Լեզվի բառային հիմնական կազմ ասելով՝ պետք է նկատի ունենալ բառապաշարի այն շերտը, որը հիմնականում գործադրվել է գրական հայերենի զարգացման բոլոր շրջափուլերում և չի ընդգրկում այս կամ այն շրջափուլում հասարակական կյանքի զարգացմամբ ներառված հնարավոր բառապաշարը, որը արագ է փոփոխության ենթարկվում:

Լայն իմաստով՝ բառային հիմնական կազմը ներառում է նաև տվյալ շրջափուլում հավելված և գործածական մեծ ակտիվություն ունեցող բառերը: Դրանք իսկապես գրական լեզվի տվյալ շրջափուլի հիմնական բառակազմի անբաժանելի բաղադրիչ են: Այդպիսի ընդհանուր բառային կազմ են ունեցել և՛ գրաբարը, և՛ աշխարհաբարը կամ նոր գրական հայերենը: Վերջինիս համար, օրինակ, այդպիսի բառեր են՝ **բիզնես, սուրճ, սառնարան, հեռուստացույց, համակարգիչ, բջջային, վարկ, համացանց, բենզին, ավտոբուս, մեքենա, հեռախոս, ինստիտուտ, համայնք, թաղապետ, քաղաքապետ, վարչապետ, մարզ** և այլն: Ի վերջո, պայմանական են նաև լեզվի բառային հիմնական կազմի և լեզվի բառային կազմի սահմանները. ժամանակի ընթացքում փոխներթափանցումները անխուսափելի են:

Եվ վերջապես, ամբողջացնելու համար բառային հիմնական կազմի նկարագրությունը պետք է ընդգծել ևս մի կարևոր հանգամանք. բառապաշարի այդ շերտը որոշակի տարբերություններ է դրսևորում ոչ միայն նույն լեզվի զարգացման տարբեր փուլերում, այլև տարբեր լեզուներում: Խոսքը այս դեպքում առավելապես վերաբերում է, այսպես կոչված, էկզոտիզմներին, որոնք բնորոշում են տվյալ ժողովրդի ազգային նկարագիրը՝ կյանքը, կենցաղը, հոգեբանությունը, և որոնք, որպես կանոն, չեն ունենում համարժեքներ այլ լեզուներում⁴⁰: Օրինակ՝ բառային հիմնական կազմի միավորներ են՝ հայերենում՝ **լավաշ, տոլմա, դուդուկ, քոչարի, դրամ**, վրացերենում՝ **սացիվի, խալի** (կերակրատեսակներ), **բաղդադուրի, կինտաուրի** (պարատեսակներ), **դիպլիպսո** (երաժշտական գործիք), **լարի** (դրամական միավոր), ռուսերենում՝ **судак, щука, лещ** (ձկնատեսակներ), **береза** (ծառատեսակ), **блини** (կերակրատեսակ), **чагушка, барыня, калинка** (պարատեսակներ), ճապոներենում՝ **գեյշա** (պարուհի), **իեն** (դրամական միավոր) և այլն: Արաբերենում, օրինակ, **խմել** գաղափարի համար կա 153 բառ, գլխի պատռվածքի համար՝ 14 բառ, էսկիմոսերենում՝ 4 բառ **ձյուն** գաղափարի համար՝ նստած ձյուն՝ **aput**, վերևից թափվող ձյուն՝ **qana**, քամիների հոսանքով քշված ձյուն՝ **pigsirpoq**, ձնախառն բուրբը՝ **qimuqsuq**: Հասկանալի է, որ այս բառերի մի զգալի մասը նշված լեզուներում

⁴⁰ Տե՛ս **Ա. Քամայան**, Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ, «ԲԵՆ. բանասիրություն», Եր., 2015, № 2, էջ 72-73:

բառային հիմնական կազմի՝ բառաֆոնդի միավոր է⁴¹։ Կարելի է հավելել հատուկ անուններ՝ տեղանուններ, անձնանուններ, աշխարհագրական անուններ, դիմելաձևեր, հասարակական-քաղաքական իրակություններ և այլն։

Այս բոլորը միասին ձևավորում են սովյալ լեզվի **բառային հիմնական կազմը** (բառային հիմնական ֆոնդը)։

Այսպիսով, հայերենի բառային հիմնական կազմի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա տարակարծությունները դժվարություններ են ստեղծում դրանց բնութագրման և ընդգրկման շրջանակները գիտականորեն նկարագրելու համար։ Ընդունված մոտեցմամբ՝ երբեմն հանիրավի ընդլայնվում են այդ շերտի շրջանակները։ Մեր համոզմամբ՝ հայերենի բառային հիմնական կազմը (բառային հիմնական ֆոնդը) բնութագրվում է շատ որոշակի հատկանիշներով՝ ծագումնաբանորեն հիմնականում բնիկ հայերեն բառեր են կամ հին փոխառություններ և դրանցով բաղադրված կազմություններ, ձևավորվել են հիմնականում հին հայերենում և գրաբարում, լեզվի պատմական զարգացման ընթացքում քիչ փոփոխությունների են ենթարկվել, բառակազմորեն մի զգալի մասը պարզ կամ արմատական բառեր են, հասարակական հաղորդակցման տեսակետից կենսականորեն անհրաժեշտ են, ամենից գործածականն են,

⁴¹ Տե՛ս Ն. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Եր., 2005, էջ 123։

առանձնանում են բազմիմաստությամբ, հնչյունափոխական և արտասանական այլևայլ տարբերակներով պահպանվել են հայերենի բոլոր դրսևորումներում և այլն: Պայմանավորված հասարակական կյանքի տեղաշարժերով կամ այլ գործոններով՝ բառապաշարային ակտիվ փոփոխությունները կարող են ներառվել բառային հիմնական կազմի մեջ պայմանականորեն և որոշակի շրջանակներով: Լեզվի բառային հիմնական կազմը և բառային ընդհանուր կազմը չունեն խստորեն գծված սահմաններ:

1.4. ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԸ ԵՎ ԿԱՊԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվական նորմը (կանոնը) սահմանվում է որպես լեզվական համակարգի առավել կայուն, հանրայնորեն ընդունված տարրերի, իրակությունների, դրանց հարաբերությունների դրսևորման օրինաչափությունների ամբողջություն: Լեզվական տվյալ միավորը կամ իրողությունը որպես նորմատիվ (կանոնական) գնահատվելու համար պետք է բավարարի առնվազն հետևյալ երեք պահանջներին. **ա)** համապատասխանի տվյալ լեզվի կառուցվածքին, **բ)** հանրային հաղորդակցման ընթացքում զանգվածաբար և պարբերաբար վերարտադրվի, **գ)** լեզվակիր հանրության կողմից հա-

վանության արժանանա և ընկալվի որպես կանոնավոր⁴²: Հատկապես այս վերջին պարագայում լեզվակիրառողին կարող են անհրաժեշտ լինել կողմնորոշիչ ուղղորդում և հանձնարարականներ՝ հիմնված մասնագիտական գնահատականների վրա: Մրանք էլ հենց կանոնարկման հիմնական նպատակն են:

Լեզվական (խոսքային) տարբերակները հանդես են գալիս լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակների միավորների դրսևորումներում՝ հնչյունականից մինչև շարահյուսական: Հայերենի կանոնարկմանը նվիրված աշխատանքներն ու օրինասահման մարմինների՝ տարբեր ժամանակներում ընդունած որոշումները առավելաբար վերաբերում են բառապաշարային (մասնավորապես տերմինաբանության), ուղղագրության, ուղղախոսության խնդիրներին: Ակնհայտ է, սակայն, որ խոսքի ճշտությանն ու ճշգրտությանը ներկայացվող պահանջները չեն կարող շրջանցել լեզվի քերականական կառուցվածքի՝ ձևաբանական և շարահյուսական միավորների գործածության, լեզվական նորմի դիրքերից դրանց գնահատության հարցերը:

Շարահյուսական մակարդակում լեզվական նորմի քննությունը բնականաբար պետք է ներառի կապակցության եղանակների՝ համաձայնության, խնդրառության, առդրության, դրանց իրացման միջոցների՝ կապերի, շաղկապների, շարադասության, հնչերանգի,

⁴² Տե՛ս «Лингвистический энциклопедический словарь», М., 1990, էջ 338:

նան կետադրության հարցերը, դրանց կիրարկման ընդունված կանոնները, առկա տարբերակային ձևերի, փոխառյալ և օտարաբան կառույցների գնահատությունն այդ կանոնների դիրքերից: Ստորև կփորձենք այդ հայեցակետով դիտարկել արդի հայերենի մի շարք կապերի կիրառությունը:

Արդի հայերենի կապերի, դրանց ծագման, իմաստային և գործառական դասակարգումների, հոլովառության և գործածության հարցերը բավականաչափ հանգամանորեն լուսաբանված են ոչ միայն առանձին մենագրական ուսումնասիրություններում, այլև հայոց լեզվի քերականության դպրոցական ու բուհական դասագրքերում, ձեռնարկներում⁴³: Մենք կփորձենք անդրադառնալ այսօրվա կենդանի խոսքում կապերի, դրանցով ձևավորվող շարահյուսական միավորների կիրարկության որոշ յուրահատկությունների, ներկայացնել որոշակի նկատառումներ ու գնահատականներ առկա գուգաձևերի, շեղումների ու սխալների վերաբերյալ: Քննության առիթը նաև մտահոգությունն է մեր զանգվածային լրատվամիջոցների, հատկապես հեռուստատեսության լեզվի մաքրության հանդեպ. դիտարկվող լեզվական փաստերի զգալի մասը մեր լեզվի կիրարկման հենց այդ ոլորտին է վերաբերում:

⁴³ Տե՛ս, օրինակ, **Ա. Մարգարյան**, Արդի հայերենի կապերը, Եր., 1955: **Ս. Աբրահամյան**, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965: **Նույնի՝** Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1980: **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր, հ. 1, Եր., 1970 և այլն:

Կապերի ոչ կանոնական կիրառությունները կարող են պայմանավորված լինել մի քանի գործոններով: Նախ՝ քանի որ կապերի ամենասովորական գործառույթը բայական լրացումները բայ-լրացյալի հետ կապակցելն է, ուստի հանդիպող գուգաձևությունների ու շեղումների զգալի մասը առնչվում է հենց բայի խընդրառությանը: Այս առումով առանձին գնահատության կարիք ունեն հոլովական և գուգահեռ կապային կառույցները (**գրոհել քաղաքը / քաղաքի վրա, ծանրանալ սրտին / սրտի վրա, միջնորդել հանձնաժողովի առջև / հանձնաժողովին, մտահոգվել մի բանով / մի բանի համար / մի բանի մասին** և այլն): Այնուհետև՝ հաճախ են հանդիպում կապի և կապվող բառի (կապի խնդրի) ներքին խնդրառությամբ պայմանավորված գուգահեռ կամ սխալակազմ ձևեր (**ըստ էության / ըստ էությամբ, բացառությամբ նշվածի / բացառությամբ նշվածից, բացի Հակոբը / Հակոբից բացի, առանց ծաղիկ / առանց ծաղկի** և այլն): Խնդրառական կանոնից բացի՝ շեղումներն այս պարագայում կարող են պայմանավորված լինել նաև այլ կարգի գործոններով, որոնցից կարելի է նշել կապվող բառի դասանշային պատկանելությունը՝ իրանշություն, անձնանշություն և այլն (օրինակ՝ **հետևանքով, համաձայն, շուրջը (մասին)** կապերը, որպես կանոն, գործածվում են ոչ անձնանիշ բառերի հետ), կապվող բառի առկայացական հատկությունը՝ որոշյալ կամ անորոշ (օրինակ՝ **ըստ** կապի հետ սխալ է գործածել որոշյալ, **կից** կապի հետ՝ անորոշ առումով բառեր և այլն), որոշ դեպքերում էլ՝ կապի ստուգաբանական իմաստի ոչ ճիշտ ընկալումը (**հան-**

ձինս, ի դեմս, առ և այլն):

Կապերի գործածության մասնագիտական գնահատումներում նշվում են նաև օտար կառույցների պատճենումով կազմված ձևեր, որոնք գրեթե առանց խըտրության հայերենի նորմի համար մերժելի և անհանձնարարելի են համարվում:

Այժմ մի փոքր ավելի հանգամանորեն՝ վերոնշյալ և նման կարգի իրողությունների մասնավոր դրսևորումների մասին:

Երևի պետք է մեկ անգամ ևս անդրադառնալ Արեղյանի կողմից «անխսկական» կոչված այն կապերին, որոնք առանձնանում են իրենց խնդրառական յուրահատկությամբ՝ առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների հետ գործածվելիս պահանջելով տրական, իսկ գոյականների հետ՝ սեռական հոլովով խընդիրներ՝ **մոտ, վրա, հետ, պես, չափ, համար, հոգուտ, հանձին(ս), ի դեմս, հանուն**: Սրանցից խոսակցական հայերենում տարածվածները ազատորեն գործածվում են նաև նշված դերանունների սեռականի հետ՝ **իմ վրա, քո հետ, մեր պես, իմ համար** և այլն: Այս կիրառությունները, թեև գեղարվեստական գրականության լեզվում ևս հանդիպում են, այսօրվա գրական նորմի տեսակետից առայժմ անընդունելի են համարվում: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ **մոտ, վրա**, մասամբ՝ **հետ** կապերը նաև հոլովվում են, և սրանց թեքված ձևերի կողքին նշված անձնական դերանունները կանոնավորապես դրվում են սեռական հոլովով՝ **իմ մոտից, քո վրայով** և այլն (հոլովված բառերի մոտ դեր-

անունները, ըստ էության, հատկացուցչի դեր են կատարում):

ՄՈՏ կապի հիմնական իմաստը տարածական, երկրորդաբար նաև՝ ժամանակային մերձավորություն արտահայտելն է: Կանոնական է համարվում տարածական իմաստով սեռական-տրականի անորոշ (**գյուղի մոտ**), ժամանակային իմաստով՝ որոշյալ (**կեսօրին մոտ**) ձևերի հետ զուգորդումը: Առաջին դեպքում կապվող բառի որոշյալ կիրառությունը ևս հնարավոր է (**գյուղին մոտ**), սակայն այստեղ կապն ավելի շատ նախնական բառային իմաստն է դրսևորում (մոտիկ, մերձ): **Մոտ** կապի հետ ժամանականիշ բառի անհոդ գործածության դեպքերը (**լուսաբացի մոտ** և այլն), որ խոսակցական լեզվում հանդիպում են հավանաբար նաև **կողմ** հոմանիշ կապի (**առավոտովս կողմ** և այլն) գործածության համաբանությամբ, գրական լեզվի համար կանոնական չեն: Տարածական նույն իմաստն արտահայտող **կից, առընթեր** կապերի խնդիրներն արդեն կանոնավորապես պետք է դրվեն տրականի որոշյալ տարբերակով⁴⁴. սրանց անհոդ կիրառությունները գրական լեզվի նորմից շեղումներ են, ինչպես՝ «**Հուշարձանի կից** տարածքը բարեկարգվում է», «**Գործկոմի առընթեր կառույցը** լուծարվեց» և այլն:

Մոտ կապով ձևավորվող որոշ կառույցներ էլ, բավականաչափ տարածված լինելով հատկապես չվերահսկվող բանավոր խոսքում և նաև զանգվածային լրատ-

⁴⁴ Հմմտ. **Գ. Զահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 434:

վամիջոցներում, այնուամենայնիվ խորթ են մնում գրական լեզվի կանոնին և ընկալվում են որպես օտարաբանություններ: Սրանք ուղղագիծ պատճենումներ են ռուսերեն «**у**» նախդրով կապակցությունների՝ «*Он у себя*» – Նա **իր մոտ է**», «*У меня грипп*» – **Ինձ մոտ** (*/մոտրս*) գրիպ է», «*У тебя все получается*» – **Քեզ մոտ ամեն ինչ ստացվում է**» և այլն: Օտար այս կառույցներն առանց ճիգի կարող են փոխարինվել հայերեն համարժեքներով՝ «*Նա իր սենյակում է*», «*Գրիպ եմ / Գրիպով հիվանդ եմ*», «*Քեզ ամեն ինչ հաջողվում է*» և այլն:

Տարածական (երբեմն նաև այլ կարգի) հարաբերությունն արտահայտող ՎՐԱ կապի օտարաբան կիրառություններից կարելի է նշել, օրինակ, **փողոցի վրա**, **հրապարակի վրա** և նմանատիպ կառույցները, որոնք անհանձնարարելի են գրական խոսքում (կանոնական են **փողոցում**, **հրապարակում** և այլն): Մի շարք բայերի համար կանոնական է **վրա** կապով և գուգահեռաբար նաև տրական (ինչպես **հսկել**, **իշխել**, **ազդել**, **բռնանալ**, **թագավորել**, **ներգործել**, **ուշադրություն դարձնել** և այլն) որոշ բայերի համար էլ ուղղական հոլովով խնդիրներ առնելը (**գրոհել**, **ողբալ**, **սգալ** և այլն)⁴⁵: Գրական նորմի շրջանակից դուրս՝ օտարաբան են որոշ բայերի՝ **վրա** կապով խնդիրները՝ **սիրահարվել**, **ավանդել**, **կտակել**, **նվազել**⁴⁶ և այլն: Ընդհանրապես պետք է նշել, որ պատճենված կապային կա-

⁴⁵ Տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 478:

⁴⁶ Ավելորդ չէ նկատել, որ Ս. Աբրահամյանը **նվազել** բայի համար սովորական է համարում նաև **վրա** կապով խնդիրը. տե՛ս

ռույցները գրական լեզվի համար անխտիր մերժելի և խոտելի համարելն էլ միակ ճիշտ մոտեցումը չէ (թեև տարածում գտած): Այս դեպքում նկատի ունենք, օրինակ, **աշխատել** բայի՝ **վրա** կապով խնդրառությունը՝ **աշխատում է նոր վեպի** (նկարի և այլն) վրա, որ հաճախ անթույլատրելի ռուսաբանություն է դիտվում: Առաջարկվող թարգմանությունները (*նկար է նկարում, նոր վեպ է գրում* և այլն) կարող են և ճշգրիտ չարտահայտել կապակցության իմաստը, ուստի կապի այդպիսի կիրառությունը գրական նորմի հանդեպ մեղանշում համարելու կարիք, կարծում ենք, չկա:

Հիմնականում տարածական հարաբերություն է արտահայտում **ՏԱԿ** կապը, որի ոչ կանոնական կիրառությունները կապվում են օտար՝ հիմնականում թարգմանական տեքստերում հանդիպող կառույցների հետ: Առավել տարածվածը **մերձ** իմաստով կիրառությունն է որևէ տեղանվան (հիմնականում քաղաքի անվան) հետ՝ **Մոսկվայի տակ, Կուրսկի տակ** և այլն: Հատկանշական է, որ այս կառույցի կիրառության սովորական «միջավայրը» ռուսերենից թարգմանված բնագրերն են. ոչ ռուսական տեղանունների հետ (*Երևանի տակ* և այլն) այս կապը գրեթե չի հանդիպում, թարգմանություններում էլ այսօր առավել հաճախ նախապատիվ են համարում **մերձ** բաղադրիչով հայալակազմությունները՝ *под Москвой* – **Մոսկվայի մերձակայքում, подмосковный – **մերձմոսկովյան, Подмос-****

Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965, էջ 315:

ковье – **Մոսկվայի մերձակայք** և այլն (նույն **մերձ** բաղադրիչով են թարգմանվում ռուսերեն **при-** նախածանցով կազմությունները՝ *Приамурье* – **Ամուրի մերձակայք**, *пригородный* – **քաղաքամերձ**, իսկ **за-** նախածանցով կազմությունները՝ **անդր-** նախածանցով՝ *Закавказье* – **Անդրկովկաս** և այլն): Ուրեմն՝ **Մոսկվայի տակ** կարգի կապակցություններն այդպես էլ չեն մերվում արդի հայերենի լեզվական կանոնին և գիտակցվում են որպես օտարաբանություններ: **Տակ** կապով մի շարք այլ կապակցություններ էլ, որոնք թերևս նույնպես օտար կաղապարների պատճենման արգասիք են, մեր պատկերացմամբ բոլորովին խորթ չեն հայերեն լեզվամտածողությանը՝ *երածշտության տակ պարել, գտնվել տպավորության (ազդեցության) տակ, բանի տակ հասկանալ ինչ-որ բան* և այլն:

ՀԵՏ կապը արտահայտում է միասնության՝ միասին լինելու, մի բան անելու հարաբերության իմաստ, որը «դրսևորվում է մեծ մասամբ տեղի ու ժամանակի ընդհանրության հողի վրա»⁴⁷: Կապվող բառը, ստորադասվելով հանդերձ, տրամաբանական նույն հարաբերության մեջ է բայի հետ, ինչ որ ենթական, և այս հանգամանքը հաճախ պատճառ է դառնում ենթականի և ստորոգյալի համաձայնության քերականական կանոնի խախտման «*Մայրը դասեր հետ գնացին* (փոխ.՝ **գնաց**) *թատրոն*» տիպի նախադասություններում: Այս կապի կիրառությունների հետ կապված՝

⁴⁷ Մ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965, էջ 338:

պետք է նկատի ունենալ, որ դրանք շատ հաճախ պայմանավորված են լինում լրացյալ բայի իմաստով կամ քերականական հատկանիշով, հարաբերվող եզրերի տրամաբանական առնչության բնույթով: Որոշ բայեր իրենց իմաստով ցույց են տալիս ենթակայի և կապվող բառի փոխադարձ գործողություններ, և դրանց խնդիրը միանշանակորեն ձևավորվում է **հետ** կապով՝ **վիճել, կովել, ամուսնանալ, հաշտվել, համբուրվել** և այլն: Խնդրառական տարբերակներ՝ կապով և առանց կապի՝ տրական հոլովով, առաջանում են այն դեպքերում, երբ բայի ցույց տված գործողությունը կա՛մ փոխադարձորեն վերաբերում է ենթակային և խնդրին, կա՛մ միակողմանիորեն ուղղված է ենթակայից խընդրին (սա կապված է նաև հարաբերվող եզրերի դասային պատկանելության և համատեքստի հետ): Տրամաբանական այս առնչությունը հաճախ պատշաճ ուշադրության չի արժանանում, սակայն կանոնավոր գրական խոսքում հարկ է նկատի ունենալ խնդրառական այս նրբությունը: Ս. Աբրահամյանն այս հայեցակետից հատուկ անդրադարձ է անում **ճանոթանալ, հանդիպել, տեսնել** բայերի խնդրառությանը. առաջին երկուսը, կախված տվյալ համատեքստում միակողմանի^օ, թե՞ փոխադարձ հարաբերություն արտահայտելուց, պահանջում են կա՛մ տրականով հանգման խնդիր (*ճանոթանալ ձեռագրին, հանդիպել դժվարություններին*), կա՛մ **հետ** կապով միասնության խնդիր (*ճանոթանալ Արամի հետ, հանդիպել գրողների հետ*), իսկ **տեսնել** բայը փոխադարձություն արտահայտելու դեպքում փոխում է սեռը (տեսնել մեկին և տեսնվել

մեկի հետ)⁴⁸: Այս կարգի կրկնակ խնդրառություն ունեն նաև մի շարք այլ բայեր՝ **հավասարվել**, **համագործակցել**, **հակադր(վ)ել**, **համարվել**, **գուգորդվել**, **ձայնակցել**, **միանալ**, **ձուլվել**, **համապատասխանել մեկին**, **մի բանի կամ մեկի**, **մի բանի հետ** և այլն: Ասվածը կարող է վերաբերել նաև ածականների ու մակբայների խընդիրներին՝ **մեկի**, **մի բանի կամ մեկի**, **մի բանի հետ գուգահետ**, **համաչափ**, **ներդաշնակ**, **համաքայլ** և այլն: Այս վերջին դեպքում կապվող բառերի դասային նշանակությունը անձ կամ իր ցույց տալը, վճռորոշ դեր չունի. տարբերակների իմաստային տարբերությունը թերևս հանգում է հետևյալին. **հետ**-ով կառույցների մեջ ընդգծվում է հարաբերվող եզրերի տրամաբանական համարժեքությունը, տրականաձև խնդիրների դեպքում էլ կարծես կախման հարաբերությունն է կարևորվում⁴⁹:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ վերը ներկայացված կառույցների ճիշտ ընտրությունն ու կիրառությունը խոսքի հանդեպ որոշակի վերահսկում են ենթադրում: Մասնավորապես պետք է խուսափել **հետ** կապի ավելորդ գործածություններից՝ *ճանոթանալ փաստաթղթերի հետ*, *բախվել դժվարությունների հետ* և այլն: Այս հարցում, ըստ երևույթին, բացառված չէ

⁴⁸ Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965, էջ 340:

⁴⁹ Այս մասին տե՛ս նաև **Լ. Թեյան**, Շարահյուսական նորմ. գուգաձևեր և շեղումներ, «Հայագիտության հարցեր», Եր., 2017, № 1, էջ 143:

նան ռուսերենի ազդեցությունը, որտեղ հիշյալ կարգի բայերի խնդիրը միայն **с** նախդրով է ձևավորվում:

Միասնությունն ցույց տվող մյուս կապը **ՀԱՆԴԵՐՁ**-ն է, որն իր այդ կիրառությամբ հնաբանությունների շարքն է անցել. **ընտանյոք հանդերձ**-ը փաստորեն քարացած ձև է: **Հանդերձ** կապի միասնության իմաստն արդի հայերենում, կարելի է ասել, լիովին տեղի է տվել զիջման (հակառակ հիմունքի) իմաստի առջև, որն էլ, որպես կանոն, դրսևորվում է կապի և անորոշ դերբայի գործիական հոլովի գուգորդումով. *«Վտանգը զգալով հանդերձ՝ մոտենում էր թշնամու դիրքին»*: Այս դեպքում էլ գրական նորմից շեղում պետք է համարել **հանդերձ** կապի այս զիջական իմաստի անտեսումը և ըստ էության հավելուրդային գործածումը հիմունքի պարագայի հետ: Ահա օրինակներ **ԶԼՄ**-ներից. *«Գյուլբենկյանը հասել է իր նպատակին, մենք էլ, նրա անվան դպրոցի սաներ լինելով **հանդերձ**, կհասնենք մեր նպատակին»* («Հ 1»), *«Դու, այդ երեխայի մայրը լինելով **հանդերձ**, պիտի ժամանակին մտածեիր նրա դաստիարակության մասին»* («Շանթ») և այլն:

Վերաբերության իմաստ արտահայտող **ՄԱՄԻՆ, ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** և նման կապերի գործածությունը նույնպես գրական կանոնին ներդաշնակելու առումով որոշակի շեղումներ է արձանագրում: Բանն այն է, որ նշված կապերով խնդիր կարող են պահանջել ասացական, մտածական՝ հաղորդման իմաստային դաշտին վերաբերող բայերը՝ **ասել, հայտնել, խոսել, ճանել, պատմել, մտածել, խորհել** և այլն, որոնցից ներգործականները, բնականաբար, ուղիղ խնդիր առնելու

հատկություն ունեն: Սրանց մասին Գ. Ջահուկյանը գրում է. «*Հաղորդում* արտահայտող որոշ կարգի անցողական բայերի ուղիղ խնդիրը կարող է փոխարինվել **մասին** կապով խնդրով...՝ զեկուցել հարցը մեկին – զեկուցել մեկին հարցի մասին. այսպես նաև ասել, հաղորդել, հայտնել, տեղեկացնել և այլն»⁵⁰: Այսպիսով, իմաստային այս խումբը ներկայացնող շատ բայերի հատուկ է կրկնակ խնդրառություն՝ ուղղական հոլովով և «սեռական–տրական+մասին» կապային կառույցով՝ **գրել, պատմել, հաղորդել, նշել, վկայել, գիտենալ (իմանալ)** և այլն: Նույն իմաստային դաշտին վերաբերող զգալի թվով բայեր էլ կան, որոնց համար կանոնական է ուղղականով խնդիրը, և ոչ կանոնական՝ **մասին** կապով ձևավորվածը: Այդպիսի բայերից են՝ **քննել, ուսումնասիրել, բացատրել, ապացուցել, քննարկել, ներկայացնել** և այլն: Սրանց խնդրատական բնույթի ոչ ճիշտ ընկալումն էլ ծնում է խոսքային վրթարներ առօրյա հաղորդակցման մեջ, հաճախ նաև լրատվամիջոցների լեզվում: Ահա վերջինների մեջ հանդիպած մի քանի օրինակ. «*Սա ապացուցում է այն մասին, որ ես, իրոք, պատմական վայրում եմ*» («ATV»), «*Շատ հակիրճ կուզեի ներկայացնել մեր հիմնադրամի գործունեության մասին*» (Հանրային ոռոգիո), «*Ինչի՞ մասին է մեկնաբանում առողջապահության նախարարը*» (համացանց), «*Մենք ես կմասնակցենք երթին և կներկայացնենք նրա ընթացքի մասին*» («Շանթ»), «*Սա հենց ապացուցում է այն մասին, որ Արցախի հարցում*

⁵⁰ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 474:

ինչ-որ բան այն չէ» («5-րդ ալիք»), «Խոսքը վերաբերում է կանանց ծաղիկներ նվիրելու մասին» («ATV») և այլն:

ՓՈԽԱՐԵՆ, ՓՈԽԱՆԱԿ կապերի գործածության կանոնների մասին հաճախ գրվել է մասնագիտական և ուսումնական հրապարակումներում⁵¹, սակայն այսօրվա լրատվամիջոցներում և առօրյա հաղորդակցման մեջ սակավադեպ չեն դրանց կիրառության անճշտությունները: **Փոխարեն**-ը գուտ կապային կիրառություն ունի, մինչդեռ **փոխանակ** բառը ն՛ կապ է, ն՛ շաղկապ (*չնայած, մինչև, նախքան* բառերի նման): Մրանք տարբեր են նաև կապվող միավորի հանդեպ գրաված դիրքով. **փոխարեն**-ը հետադրություն է, **փոխանակ**-ը՝ նախադրություն, հետևաբար չեն կարող փոխարինել իրար միևնույն խոսքաշարում: Շարահյուսական նորմի, ինչպես նաև բառագործածության ակնհայտ խախտման օրինակներ են այն նախադասությունները, որոնցում **փոխարեն** բառը որպես շաղկապ է կիրառվում՝ երբեմն էլ օժտվելով **ը** որոշիչ հոդով. *«Իմ գործընկեր լրագրողները, փոխարենը կանգնեն իմ կողքին, ոչ մի խոսք չասացին» («Հ 2»)*, *«Լավ է ժամանակ ծախսեն խոհանոցում, փոխարենը ուտեն այդ կուբիկները» («Հ 1»)*, *«Փոխարենը իրենք ընկնեն քո ոտքերը, դու ես իրենց հետևից քարշ գալիս» («Հ 1»)*, *«Փոխարենը պաշտպանի հաշմանդամին, մայրը մյուս որդուն է պաշտպանում» («ATV»)* և այլն: Առայժմ թերևս միայն խոսակցական լեզվի մակարդակում նկատ-

⁵¹ Տե՛ս, օրինակ, **Պ. Բեդիրյան**, Հայ լեզուն և մեր խոսքը, Եր., 1999, էջ 80-81:

վում է **փոխանակ** շաղկապի գործառույթով **գոնե** վերաբերականի (ավելի հազվադեպ՝ *քան (թե)* կապի) կիրառումը. «Ուղևորները **գոնե** իրար օգնեին, շուտ դուրս գային, ճամպրուկներն էին վերցնում» («Շանթ»), «**Քան թե** ասի «հայրիկ», ասում է «պապա»» և այլն:

ՀԱՆՁԻՆ(Ս), Ի ԴԵՄՍ. գլխավորապես գրական լեզվին հատուկ այս կապերի գործածության կանոնը հետևյալն է. **հանձին**-ը պահանջում է եզակի թվով խընդիր, **հանձինս**-ը՝ հոգնակի (ստուգաբանական իմաստը հաշվի առնելով՝ սրանց հետ բնական կլինի անձ ցույց տվող բառերի գուգորդումը), **ի դեմս**-ի դեպքում թվային կամ դասային սահմանափակում չկա: Առաջին երկուսի (սրանցից առավել գործածականը **հանձինս**-ն է) կիրառության սխալները թվային նշված համապատասխանության անտեսման հետևանք են, ինչպես՝ «**Հանձինս Գաբրիելի՝ ունենք բարձրակարգ շախմատիստ**» (ռադիո): Ավելորդ չենք համարում մի նկատում ևս ներկայացնել. խոսքի մեջ ստեպ-ստեպ հանդիպում է **հանձինս** բառի անհարկի՝ հավելուրդային գործածություն՝ հավանաբար խոսքին գրական երանգ հաղորդելու միտումով (գուցե և **անձամբ** մակբայի հետ շփոթելու հետևանքով): Մա սպրդում է երբեմն լրատվամիջոցների լեզու, օրինակ. «Ես **հանձինս չեմ հավատում աստղագուշակությանը**» («Հ 1»), «Մենք՝ **հայերս, շատ ենք սիրում Կուրան և կուրացի պարուհիներին. հանձինս ես**» («Արմենիա») և այլն:

Լրատվության միջոցների լեզվում կապերի կիրառության որոշ անկանոնություններ, ինչպես նշվել է, կապ-

ված են լինում կապերի, մանավանդ հնաբանությունների նախնական ստուգաբանական նշանակությունների անստույգ ընկալման հետ, ինչը պատճառ կարող է դառնալ, օրինակ, նույնիմաստ երկու կապերի համատեղ կիրառման, ինչպես՝ *«Ես հաղորդումը պատրաստում եմ իմ մի քանի աշխատողների հետ հանդերձ»* («Հ 2»), *«Ինձ ընդունիր ինչպես կամ՝ իմ կյանքի հետ հանդերձ»* («Արմենիա»), *«1990-ից մինչև առ այսօր նրանից ոչ մի տեղեկություն չունենք»* («Հ 1»), *«Որտեղից գտաք այդ սերը դեպի թատրոնի նկատմամբ»* («Արմնյուզ»), *«Միշտ էլ պայքարել է հանուն իր նպատակի իրագործման համար»* («5-րդ ալիք») և այլն: Երբեմն էլ նախորդիվ կազմությունների (**ի դեմս**, **ի փառս**, **ի տրիտուր** և այլն) համաբանական տպավորությամբ ստեղծվում և գործածվում են սխալ ձևեր (**ի շնորհիվ**, **ի դեմ** և այլն): Օրինակ՝ *«Մենք հաղթեցինք ի շնորհիվ հայ զինվորի և Արցախի այցելած (՞) ազատամարտիկների»* («Հ 1»), *«Մեր հարևան երկիրը ոչինչ չի խնայում ի դեմ Արցախի»* («Հ 2») և այլն: Հետևյալ օրինակն էլ (որի հեղինակը, ի դեպ, մշակույթի հայտնի պաշտոնյա է) կապի՝ սխալ նշանակությամբ կիրառելու ոլորտից է. *«Ի փառս նրա, որ մենք ունենք տաղանդավոր կոմպոզիտորներ, մենք կարողանում ենք համերգներ տալ արտերկրում»* («Հ 2»):

Կապերի հարանունությունը (օր.՝ **մեջ – միջև**) նույնպես առիթ կարող է լինել կիրառության անճշտության. *«Ոչ մի տարբերություն ՀՀՇ-ի, ՀՀԿ-ի, ՔՊ-ի մեջ»* («Հ 2»), *«Խմբագրի և լրագրողի մեջ վեճ է առաջացել»* (ռադիո),

«Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ճամփորդություն տարվա եղանակների **միջև**» (փոխ.՝ **միջով**) («Շանթ») և այլն:

Հայերեն խոսքում այսօր ևս սակավադեպ չեն տարածված որոշ կապերի հոլովառության ընդունված կանոններից կատարվող շեղումները: Այսպես, **առանց** կապի խնդիրը օրինաչափորեն պետք է ձևավորվի սեռական-տրական հոլովով (բացի **այս, այդ, այն** դերանուններից, որոնք չեն հոլովվում), սակայն բանավոր հաղորդակցման ընթացքում, նաև հեռու-տահաղորդումներում այս կապի հետ հաճախ դնում են ուղղականով կապվող բառ, մի բան, որ «առհասարակ բնորոշ չէ հայերենին...», խիստ բարբառային է **առանց** կապի գործածությունը անորոշ դերբայի հայցականի հետ, ինչպես՝ «**Առանց կարդալ (փոխանակ առանց կարդալու) պատմեց դասը**»⁵²: Նաև՝ «**Առանց բրինձ այստեղ՝ Վիետնամում, հնարավոր չէ**» («ATV»), «**Այդ ո՞ւր առանց ծաղիկ**» (գովազդ) և այլն: Առավել խոտելի են **առանց** կապի հետ գործիական հոլովի կիրառման դեպքերը, որոնք թերևս բացատրելի են գործիականով լրացումների հոգեբանական ազդեցությամբ. «**Ստեղծվել է մի ստեղնաշար, որ կարելի է դեկավարել առանց կաշելով ստեղներին**» («Հ 2»), «**Կարո՞ղ եմ առանց դատարանի միջնորդությամբ ամուսնալուծվել**» («Հ 3»), «**Արձանագրվել է հրազենային վնասվածք՝ առանց թոքի վնասումով**» («Շանթ»), «**Աննան**

⁵² Մ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965, էջ 353:

դերը խաղում է մենակ՝ **առանց** ամուսնու **օգնութ-
յամբ**» (Հանրային ռադիո) և այլն:

Նմանատիպ շեղումներ են նաև **բացի** կապի հետ ուղ-
ղական հոլովի («**Բացի** եղանակային **պայմանները**,
շատ այլ պատճառներ էլ կան»), առավել ևս՝ բացառա-
կանի փոխարեն տրականի կիրառումը՝ «Գիտելիքնե-
րի ի՞նչ պաշար պիտի ունենա երեխան՝ **բացի** անգլե-
րենի **խնացություն**» («Արմենիա»), **ըստ** կապի հետ՝
տրականի փոխարեն գործիականով խնդիրը՝ «**Ամեն**
ինչ արված է ըստ օրենքի տառով» («Շանթ»), «**Ըստ**
**Փաշինյանի հայտարարությամբ՝ սահմանադրույթ-
յունը կարված է Սերժ Սարգսյանի հագով**» («Կենտ-
րոն»), «**Ըստ ճաշակով ավելացնում ենք համեմունք-
ներ**» («Շանթ»), «**Չկարողանալով աշխատել ըստ մաս-
նագիտությամբ՝ զբաղվում էր առևտրով** (Հանրային
ռադիո) և այլն:

Կապերի հոլովառության կանոնից շեղումները, ինչ-
պես նշել ենք, կարող են կապված լինել նաև կապվող
բառի առկայացական տարբերակի, մասնավորաբար
դրա որոշյալ կամ անորոշ ձևի ճիշտ ընտրության հետ:
Որոշիչ հոդը, ինչպես հայտնի է, հայերենում կցվում է
ուղղական և տրական հոլովներին: Ուղղական հոլով
պահանջող որոշ կապերի հետ կապվող բառը կարող
է գործածվել և՛ որոշյալ, և՛ անորոշ առումներով՝ ա-
ռանց հոլովական իմաստների տարբերակման՝ *դեպի*
գյուղ(ը), *մինչև ամառ(ը)*, *ինչպես (որպես) արծիվ(ը)* և
այլն, դրանց մի մասն էլ պահանջում է կա՛մ միայն
որոշյալ (*նախքան գնալը*, *ձորն ի վար*), կա՛մ անորոշ
(*օրեր անց*, *տարիներ հետո*, *ի գիտություն*) առումներով

խնդիրներ: Երբեմն էլ կապվող բառի առումը կախված է բառիմաստից՝ *սարն ի վեր* և *տարիներ ի վեր*: Սեռական-տրական հոլով պահանջող կապերի հետ որոշյալ կամ անորոշ առումով բառերի գործածության հարցն ըստ էության հանգում է առանձին սեռական և տրական հոլովների տարբերակման՝ ցայսօր բանավիճային համարվող խնդրին, որին անդրադառնալը, բնականաբար, դուրս է մեր քննության շրջանակից: Նշենք միայն, որ այսպես կոչված բուն տրական հոլով պահանջող կապերի հետ գոյականները որպես կանոն կիրառվում են որոշյալ առումով՝ *տոներին ընդատաջ, դասերին զուգրնթաց, կառավարությանն առընթեր, գետնին հավասար, պայմաններին համապատասխան* և այլն. սրանց անորոշ առումը կարող է պայմանավորված լինել կապակցական այլ գործոններով՝ *ինչ-որ տոնի ընդատաջ, որոշակի դասերի զուգրնթաց* և այլն: Բուն տրական հոլով պահանջող որոշ կապերի խնդիրը կարող է նաև անորոշ առումով դրվել (*համաձայն, հակառակ, նայած* և այլն): Առկայացական տարբերությունները երբեմն պայմանավորում են կապվող բառի տարբեր գործառույթներ՝ *որոշման(ը) դեմ, սեղանի(ն) մոտ* և այլն: **Պես** կապը որոշյալ առումով խնդրի հետ ժամանակային նշանակություն է արտահայտում (*տեսնելուն պես*), անորոշ առումով խնդրի հետ՝ ձևի (*չսիրելու պես*):

Շարահյուսական նորմից յուրատեսակ շեղում է նաև կապի շարահյուսական դիրքում նույնանշանակ, սակայն կապային կիրառություն չունեցող շաղկապի գործածությունը: Վերջին շրջանում, օրինակ, հաճախ

է այսպէս կիրառվում **թէն (թեպետ)** շաղկապը՝ **չնայած** կապի փոխարեն. *«**Թէն մարդաշատությանը՝ ոստիկանությունը հատուկ խստություն չի ցուցաբերում**»* («Ազատություն»), *«**Թէն արտասահմանյան հրավերներին՝ նա ցուցահանդեսներ է բացում Հայաստանում**»* («Հ 1»), *«**Մեր շրջապատում կան երիտասարդներ, որոնք, **թեպետ** տարիքին, լուրջ բիզնեսներ ունեն**»* («Հ 1») և այլն: Նույն կերպ հանդիպում են *մինչև, մինչդեռ, քանի դեռ* շաղկապների անսովոր կիրառության դեպքեր՝ թերևս ոչ հայեցի լեզվամտածողությամբ պայմանավորված. *«**Մինչև մենք հավատում ենք հրաշքներին, մենք ողջ ենք և առողջ**»* («Շանթ»), *«**Մինչև Եվրադատարանը քննում է Լապշինի հարցը, նա որպէս զրոսաշրջիկ գտնվում է Հայաստանում**»* («Հ 1»), *«**Քննարկումներ առայժմ չեն կարող լինել, **մինչդեռ** կառավարությունից նախագծեր չբերեն**»* («Հ 2»), *«**Մինչև Գլումովը ողջ-առողջ է, դուք պետք է խրթխրթաք**»* («Շանթ»):

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ կենդանի խոսքում կապերի կիրառությունների դիտարկումը, դրանց՝ լեզվական նորմի հայեցակետից գնահատումներն ու տրվող հանձնարարականները որոշակի նպաստ կարող են բերել հայերենի կանոնարկման գործին:

Մ Ա Ս 2.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Բառապաշարը արագ փոփոխվող համակարգ է: Նրա հարստացման ուղիներն ու միջոցները բազմազան են: Հիմնական միջոցներից են փոխառությունները: Լեզվի բառային կազմը մշտապես է համալրվում այլ լեզուներից փոխառված բառերով: Դա անխուսափելի ու բնական գործընթաց է և ինչ-որ առումով նաև անհրաժեշտ: Շատ այլ լեզուների համեմատությամբ, ինչպես նշել ենք, հայերենը քիչ է դիմում փոխառությունների: Պատճառները տարբեր են: **Նախ**՝ գիտակցությունը, որ լեզուն ազգային գոյության ու ինքնության պահպանման հզոր գործիք է, և այն հնարավորության սահմաններում պետք է հեռու պահել օտար ազդեցություններից, մեզանում ձևավորել և ձևավորում է որոշակի լեզվաքաղաքականություն, որում ակնհայտ վերապահ վերաբերմունք կա օտար բառերի նկատմամբ: **Հետո**՝ հայերենը հարուստ է բառակազմական միջոցներով. դա հնարավորություն է տալիս ստեղծելու օտար բառերի հաջողված համարժեքներ: **Այս**՝ օտարամուտ բառերը հայերենացնելու գործում չափազանց մեծ է արևմտահայերենի դերը. այն հարուստ աղբյուր է արևելահայերենի բառապաշարը համալրելու: Այսուհանդերձ, օտար բառերի մուտքը հայերենի բառապաշար ամենօրյա և անընդհատ գործընթաց է, որն էլ

բնականաբար առիթ է տալիս պարբերական քննարկումների⁵³: Արդյունավետ ուղիներից մեկը, մեր կարծիքով, այն է, որ բառապաշարի զարգացման միտումները դիտարկվեն գրական լեզվի բառագիտական նորմերի տեսանկյունից: Դա հնարավորություն կտա խուսափելու օտար բառերի անհարկի ներխուժումներից հայերենի բառապաշար:

Բացի այդ, բառապաշարը մշակվում է նաև իմաստային տարատեսակ փոխանցումների շնորհիվ, որոնք հետևանք են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին զործոնների: Եվ եթե նկատի առնենք կյանքի տարբեր ոլորտների աննախադեպ արագ զարգացումները մեր օրերում, ապա ակնհայտ է դառնում, որ միայն նորակազմություններն ի զորու չեն բավարարելու հանրության, այսպես կոչված, հաղորդակցական անընդհատ աճող «պահանջները»: Դրանք մեծ չափով բավարարվում են նաև բառային կազմի իմաստային տեղաշարժերով:

⁵³ Տե՛ս **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984: **Չ. Օհանյան**, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման ուղիները, Եր., 1982: **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, Եր., 2004: **Ա. Մարտիրոսյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Եր., 2007: **Ն. Հովհաննիսյան**, **Ս. Տիոյան**, **Ա. Գալստյան**, Արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերի քննություն, Եր., 2014: **Լ. Մելքոնյան**, Բառապաշարային տեղաշարժերը արդի հայերենում (ատենախոս.), Եր., 2014: **Ս. Տիոյան**, Հայերենի տերմինագիտության հարցեր, Եր., 2016 և այլն:

2.1. ՕՏԱՐ ԲԱՌԵՐ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Յուրաքանչյուր լեզվի բառային կազմի հարստացման հիմնական ուղիներից մեկը օտար բառերն են և դրանց ընտրողաբար յուրացումը փոխառությունների տեսքով: Բայց նաև յուրաքանչյուր լեզու, այնուամենայնիվ, իր դռները լայն չի բացում օտար բառերի առջև և փորձում է դրանք փոխարինել սեփական բառային կազմի նոր (նորակազմություններ) կամ նախկին (իմաստային նորաբանություններ) միավորներով: Հաջողում է այնքանով, որքանով կա կամք և հետևողական աշխատանք, և որքանով որ ճկուն են սեփական բառակազմական հնարավորությունները, բառային կազմի իմաստաբանությունը: Մեզանում լեզվաքաղաքականությունը այս հարցում ունեցել է շատ որոշակի ուղղվածություն. ազգային կյանքի յուրահատկություններով պայմանավորված (օտար երկրների տիրապետության տակ գտնվելը, ուժացման վտանգը, փոքր ժողովուրդներին հատուկ հոգեբանական նկարագիրը՝ կառչած մնալը ավանդական արժեքներին, ազգային նկարագրի որակները պահպանելը և այլն)՝ մշտապես ձգտում է եղել հնարավորինս քիչ տուրք տալու օտարաբանություններին, հեռու մնալու օտար բառերի «ճառայություններից»: Սա մի կողմից: Մյուս կողմից՝ հայերենը իր բառակազմական միջոցներով հարուստ և ճկուն իմաստաբանությամբ լայն հնարավորություններ է տալիս սեփական միջոցներով հարստացնելու լեզուն՝ խուսափելով օտար բառերի անհարկ կիրառություններից:

Օտար բառեր, փոխառություններ և օտարաբանություններ տերմինները բառային մակարդակում հստակորեն սահմանված են: Առաջինները օտար լեզուներից մեկ այլ լեզվի կամ լեզուների անցած բառերն են՝ որպես օտարաբանություններ կամ փոխառություններ: Փոխառությունները փոխառու լեզվում յուրացված օտար բառերն են, որոնք իրենց համարժեքը չունեն այդ լեզվում: Օտարաբանությունները բառային մակարդակում օտարալեզու՝ այլալեզու բառ, դարձվածք, արտահայտություն են, որ գործածվում են մայրենի լեզվում, և որոնց օտարամուտ լինելը խոսող հանրության կողմից գիտակցվում է, և կամ որոնց համարժեք բնիկ միավորները առկա են մայրենի լեզվում. սրանք գործող նորմից շեղվող և խորթ ձևեր են⁵⁴:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում փոխառությունների մի զգալի մասը փոխարինվում է ազգային համարժեքներով. դրանք աստիճանաբար դադարում են գրական լեզվում գործածվելուց և վերածվում են օտարաբանությունների: Վերջին տասնամյակներին բազմաթիվ օտար բառեր հայերենում գտել են իրենց համարժեքները, փոխարինվելով նորակազմություններով և իմաստային նորաբանություններով՝ վերածվել են օտարաբանությունների, ինչպես՝ **միտինգ** – հանրահավաք, **ռեզիոն** – տարածաշրջան, **մինիստր** – նախարար, **ռեկլամ** – գովազդ, **իդենտիֆիկացիա** – նույնականացում, **էքստրադիցիա** – արտահանձնում, **պարիտետ** – հավասարիքավորություն, **էքսպրոպրիա-**

⁵⁴ Տե՛ս «Լեզվաբանական բառարան», Եր., 1975, էջ 313:

ցիա – ունեզրկում, **միլիցիա** – ոստիկանություն, **աու-
դիո** – հաշվեատուգում, **ռեզլամենտ** – աշխատակարգ
և այլն:

Իհարկե, միշտ չէ, որ հնարավոր է ստեղծել հաջողված
համարժեք, և միշտ չէ, որ հայերեն տարբերակը ի գո-
րու է լինում դուրս մղելու օտար բառը և դառնալու հա-
մագործաձական: Այս գործընթացը ունի որոշ դժվա-
րություններ: Նշվում են տարբեր պատճառներ⁵⁵.

- Հայերեն բառը փոխառյալի համեմատ երկար է կամ
անբարեհունչ (ալիբի – **այլուրեքություն**, ռելիեֆ – **ու-
ռուցկանկար**, դիվերսիա – **խափանարարություն**, տեխ-
նոլոգիա – **արտադրաբանություն**):

- Հայերեն տարբերակը չունի իմաստային ճշգրտու-
թյուն կամ ամբողջությամբ չի արտահայտում հասկա-
ցության իմաստը. օրինակ՝ **թրաֆիքինգ**-ը մարդկանց՝
ստրկական, սեռական ապօրինի (կամ չնչին վարձա-
տրությամբ) շահագործումն է, մինչդեռ շրջանառվող
հայերեն տարբերակը՝ **մարդավաճառք**, արտահայ-
տում է օտար բառի իմաստներից ընդամենը մեկը:
Կամ՝ **ֆուրշեթ** օտար բառի շրջանառվող հայերեն տար-
բերակը **ընդունելություն**-ն է, սակայն օտար տար-

⁵⁵ Տե՛ս «Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտու-
թյան և տերմինաբանության», Եր., 1982, էջ 5-41: **Հ. Օհանյան**,
Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստաց-
ման ուղիները, Եր., 1982, էջ 18: **Յու. Ավետիսյան, Ա. Մարգարյան**
և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 32-38: **Ա.
Քամայան**, Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ, «ԲԵՀ.
բանասիրություն», Եր., 2015, № 2, էջ 66-80: |

բերակը նշանակում է ընդունելության առանձին՝ յուրահատուկ տեսակ, որի ժամանակ ներկաները սեղանից օգտվում են հոտնկայս:

- Օտար բառի դիմաց ստեղծվում են մեկից ավելի հայերեն տարբերակներ (**ինասուգուրացիա** – պաշտոնակալում, պաշտոնակալություն, երդմնակալում, երդմնակալություն, ձեռնադրում, ձեռնադրություն, **հոնորար** – աշխատագին, պատվագին, պատվավճար, գրավարձ, **ինտենսիվ** – բուռն, լարված, եռանդագին, եռուն, արդյունավետ, արտադրողական, **կոլաժ** – կցոն, կցապատկեր, կցակերտվածք), որոնք տևական ժամանակ մնում են գործածության մեջ՝ առավել կամ պակաս հաճախականությամբ, և դանդաղեցնում են եղած տարբերակներից մեկի կամ այլ տարբերակի հաստատման ընթացքը:

- Հայերեն բառը չունի օտար բառի բառակերտման ճկունությունն ու արտադրողականությունը. **ա**) օտար տարբերակով հեշտությամբ նոր բառեր են կազմվում (**սենսոր** – սենսորային. հայերեն **զգիչ** համարժեքը չունի այդ ճկունությունը), **բ**) օտար տարբերակը ակտիվ է բառակապացկան տեսակետից (**բիզնես** – բիզնես ծրագիր, բիզնես համաժողով, բիզնես նախագիծ. **գործարարություն**-ը երկար և անարտադրողական միավոր է) և այլն:

- Տարածված է փոխառյալ բառը, մինչդեռ հայերենը նվազ տարածվածություն ունի, լավ ծանոթ չէ լեզվակիրառողին (**բիլիարդ** – **գնդախաղ**, սկան(եր) – **ծրիչ** (պատկերամուտ), սոմատիկ – **մարմնական**, պացիենտ –

բուժառու (բուժեկ, խնամառու), ջենտլմեն – **ագնվայր**, կոնսպիրոլոգիա – **դավադրապաշտություն**):

- Հայերենը փոխարինում է օտար բառի ոչ բոլոր իմաստներին, ուստի իր լրացական իմաստ(ներ)ով գործածության մեջ է մնում նաև օտար բառը՝ որպես փոխառություն: Օրինակ՝ **ռացիոնալ** բառի երեք իմաստները փոխարինվում են հայերեն իմաստային համարժեքներով՝ **բանական** (տրամաբանական), **հիմնավոր**, **նպատակային**, իսկ դրա տերմինային իմաստը չունի համարժեք. **ռացիոնալ**-ը մաթեմատիկայում գործածվում է որպես փոխառյալ բառ՝ **ռացիոնալ / իռացիոնալ թվեր**: Կամ՝ **օպերատոր** օտար բառը երկրորդ և երրորդ իմաստներով՝ **հեռախոսավար** և **գործավար** (գրասենյակում համակարգչային աշխատանք իրականացնող անձ), իր համարժեքները, ինչպես տեսնում ենք, ունի, բայց ահա առաջին իմաստով չունի համարժեքը և գործածվում է որպես տերմինային փոխառություն՝ **օպերատոր**՝ որևէ բան նկարահանող մասնագետ:

- Հայերեն համարժեքը երբեմն երկրորդական պլան է մղվում՝ պայմանավորված օտար բառի, այսպես կոչված, միջազգայնացված լինելու հանգամանքով. օտար **էպիլյացիա** բառը առանձին կիրառություններում մրցության մեջ է հայերեն **մազահեռացում** բառի հետ, և այդ մրցությունը տևում է տասնամյակներ օտար տարբերակի միջազգային լայն կիրառության և տարածվածության շնորհիվ: Նույն պատճառով՝ **լեզիտիմ**-ը, որը արդեն երեք տասնամյակ է՝ ունի իր հայերեն համարժեքը (**օրինական / օրինավոր**), կիրառու-

թյամբ ակնհայտորեն գերազանցում է հայերեն տարբերակին:

- Օտար բառի տարածվածության պատճառներից մեկը **ավանդույթի ուժն է**. դա գործում է հատկապես տերմինային համակարգերում. մասնագետները նախընտրում են գործածել կիրառության փորձություններ անցած օտար բառը, նույնիսկ եթե դրա դիմաց երբեմն դրվում է հայերեն հաջող համարժեքը՝ **մանիպուլյացիա** – նենգափոխում / մեքենայություն, **մեդիա** – լրատվամիջոց, **մանժետ** – թեզանիք, **տատու** – դաշվածք:

- Օտար տարբերակը նոր է, և տակավին չի ստեղծվել հայերենը՝ **պարկուր** – մարզաձև, որի հաղթահարման օբյեկտ են տանիքները, պատերը, պարիսպները և այլն, **վեթթինգ** – պաշտոնատար անձին ստուգման ենթարկելը, **մոփեդ** – փոքր մոտոցիկլետ, **ռեմիքս** – երաժրշտական ստեղծագործության վերամշակված տարբերակ՝ առավել ժամանակակից գործիքավորմամբ և համեմատաբար արագ տեմպով:

Այս բոլորով հանդերձ՝ նույն վերջին տասնամյակներին հայերենում ստեղծվել են օտար բառերի հազարավոր հաջող համարժեքներ, որոնց գործառական հարուստ կենսագրությունը վկայում է դրանց կենսունակության և ճիշտ ընտրության մասին: Հայերեն համարժեքները օտար բառերի համեմատությամբ ունեն մի մեծ առավելություն. հասկանալի են լեզվակիրառողին: Գրական լեզվի բնականոն զարգացումը ենթադրում է բառապաշարի մշակում և կատարելագործում, որի համար խթանիչ ուժ է ինչպես լեզվի օրինաչափ

զարգացման ներքին տրամաբանությունը, այնպես էլ հանրության, այդ թվում՝ մասնագետների, քաղաքացիական ակտիվ կեցվածքը:

Հայերեն համարժեքների ստեղծման ճանապարհները հիմնականում երկուսն են՝ 1. **նորակազմություններ**, 2. **իմաստային նորաբանություններ**: Նախ առաջինների մասին:

Նորակազմություններ (բառակազմական համարժեքներ): «Փոխառյալ բառերի փոխարինումը հայերեն համապատասխաններով մեր լեզվի բառապաշարը կատարելագործում է ոչ միայն նրանով, որ անհարկի փոխառությունները դուրս են մղվում մեր լեզվից, այլև նրանով, որ նպաստում են մեր լեզվի բառակազմական հնարավորությունների օգտագործմանը, այդ հնարավորությունների ծավալմանը»⁵⁶: Հայերենի բառակազմական միջոցները հայտնի են՝ բառաբարդում, ածանցում, հապավում: Ինչպես միշտ, լեզվի զարգացման այս շրջանում նույնպես առավել ակտիվություն է դրսևորում **բառաբարդումը**: Գերիշխում են հոդակապով իսկական բարդությունները (նկատի ունենք նաև բարդածանցավոր կազմությունները)՝ տարբեր կաղապարներով: Գործուն են **գոյ. + գոյ., բայ կամ բայար-մաստ + գոյ.** կաղապարները, որոնք բաղադրում են գերազանցապես գոյական խոսքի մասեր: Ասել է թե՛ նորակազմությունների հիմնական մասը գոյականներ են, քանի որ կոչված են անվանելու նոր իրողություններ,

⁵⁶ **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 188:

առարկաներ, երևույթներ և գործողություններ: Օրինակ՝ **արժեթուղթ** – վաուչեր, **երակաբորբ** – ֆլեբիտ, **ձևաչափ** – ֆորմատ, **անվանաթերթ** / **անվանաքարտ** – փեյջ, **շնաբան** – կինոլոգ, **կարծրամաշկություն** – պախիդերմիա, **ունեզրկում** / **սեփականազրկում** – էքսպրոպրիացիա, **ձևաբար** / **ռճաբան** – մոդելյոր, **ցանցահեն** – հաքեր և այլն:

Բառաբարդման մի տեսակ է **հապավումը**: Վերջին տարիներին քաղաքական և հասարակական նոր իրադրությամբ պայմանավորված ստեղծվել և գործավում են բազմաթիվ նոր հապավումներ, որոնց մի մասը օտար հապավումների համարժեքներն են՝ հայերենի օրինաչափություններով ձևավորված կամ պատճենված, ինչպես՝ **Еvrabank** – **Եվրաբանկ**, **Еврасуд** – **Եվրադատարան**, **СНГ** – **ԱՊՀ**, **ОБСЕ** – **ՀԱՊԿ** և այլն:

Համեմատաբար շատ չեն ածանցական նորակազմությունները: Բնականաբար այս դեպքում ակտիվ են գործուն ածանցները՝ • **-իչ** (ջնջիչ / շտկիչ (շտրիխ), **կարիչ** (ստեպլեր), **կրիչ** (ֆլեշ)), • **-ում** (փոխզիջում (կոմպրոմիս), **փոխհատուցում** (կոմպենսացիա), **համակործանում** (կատակլիզմ)), • **-անի** (վարչանի (կոլեգիա)), • **-ություն** (համադաշնություն (կոնֆեդերացիա)), • **-ույթ** (հանրույթ (սոցիում), **խոսույթ** (դիսկուրս), **համույթ** (անսամբլ)) և այլն:

Բառակազմական համարժեքների կարգին կարելի է դասել նաև բառային **պատճենումները** (իմաստային և կառուցվածքային-իմաստային) ու **կիսապատճենում-**

ները⁵⁷ (բառերի, բառակապակցությունների կաղապարների թարգմանությունը և ընդօրինակումը⁵⁸), ինչպես՝ **մեծավարպետ** – grosmeister (գերմ.՝ groß – մեծ + **meister** – վարպետ), **կենսաքրեագիտություն** – биокриминология (հուն.՝ **bios** – կյանք + լատ. **crimen** – հանցագործություն + հուն. **logos** – գիտություն), **բիզնես փաթեթ** – бизнес–пакет, **ֆոտոթակարդ** – фотоловушка և այլն: Պատճենումները, ինչպես ասվեց, ոչ միայն առանձին բառեր են, այլև **բառակապակցություններ** (**բուֆերային գոտի** – буферная зона, **բանակցային գործընթաց** – переговорный процесс, **ուժային նախարարություն** – силовое министерство), **դարձվածքներ**

⁵⁷ Սովորույթի ուժով ընդունված կարծիքն այն է, որ պատճենումը (դրսևոգրման իր բոլոր ձևերով) փոխառության տեսակ է: Սակայն մեր խորին համոզմամբ՝ պատճենումները ավելի շատ ընդհանրություններ ունեն ազգային բառակազմական համարժեքների հետ, քան օտար բառերի, ինչի մասին վկայում են հենց հակառակ տեսակետը պաշտպանողների փաստարկումները. «Թեև բառապատճենումները լեզվական փոխառությունների ձևերից մեկն են հանդիսանում, - կարդում ենք ուսումնասիրություններից մեկում, - բայց վերջիններիս հետ ունեն ընդհանուր միայն մեկ բան՝ երկուսն էլ ունեն օտար ծագում: Սակայն տարբերությունը այդ երկու հասկացությունների միջև ավելի մեծ է, քան նմանությունը: ...Բառապատճենումների մեջ չկա ոչ մի օտարազգի տարր, և նրանք միայն իրենց ստեղծման եղանակով են կապված իրենց նախորդող օտարազգի բառի հետ: Բառապատճենման ելակետը օտար բառի մեջ նրա ստեղծման պատճառաբանվածության անկայությունն է, որի վրա հենվելով, կարելի է ստեղծել նոր բառ՝ սեփական միջոցներով» (տե՛ս «Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության», Եր., 1982, էջ 236-237):

⁵⁸ «Ժամանակակից հայոց լեզու», հ. 1, Եր., 1979, էջ 225:

(**խաղի մեջ մտնել** – войти в игру, **երրորդ աշխարհի երկրներ** – страны третьего мира, **լողացող կուրս** – плавающий курс), **հապավումներ**, ինչպես վերը տեսանք (**ԵԱՏՄ** – ЕЭС, **ՀԱՊԿ** – ОДКБ) և այլն:

Իմաստային նորաբանություններ (իմաստային համարժեքներ): Օտար բառերի փոխարինության ընդունված ճանապարհներից մեկը դրա փոխարեն ազգային լեզվում արդեն գոյություն ունեցող բառի՝ նոր իմաստով գործածությունն է: «Իմաստային նորաբանությունները լեզվում գոյություն ունեցող բառերի ձեռք բերած նոր, թարմ իմաստներն են»⁵⁹: Ըստ որում, այդ փոխարինության հիմքում ընկած է փոխարինվող միավորների իմաստային ընդհանրությունը կամ առնչակցությունը: Օրինակ՝ **կայք** բառի՝ տիրույթ, ունեցվածք, ինչք, կարողություն, գույք, կալվածք և այլ իմաստներին հավելվել է նաև **կայքէջ**՝ սայթ (անգլ.՝ website: web – «ոստայն, ցանց» և site – «տեղ». բառացիորեն՝ տեղ, մաս, բաժին ցանցում), իմաստը, որը ակնհայտորեն իմաստային առնչակցության մեջ է օտարալեզու տարբերակի հետ: Նմանապես՝ **հավանում**. **հավանել** բայի անկատարի ձևը գործածվում է նաև օտար՝ **լայք** բառի նշանակությամբ, **հավանել-ը**՝ **լայքել**: Այսպես նաև՝ **օրինավոր / օրինական** ← լեզիտիմ, **զրուցարան** (առցանց) ← չաթ, **զրանցում** ← ռեզիստրացիա, **պատիժ / ճնշում** ← ռեպրեսիա, **կտտացնել** ← քլիք անել և այլն:

⁵⁹ Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 187:

Մասնակի և լիակատար համարժեքներ, բառակապակցական համարժեքներ, անհամարժեքներ: Օտար բառի փոխարինումը հայերեն համապատասխանով նպաստում է նաև հայերենի բառային կազմի իմաստային կառուցվածքի կատարելագործմանը. դա ի վերջո հանգում է օտար բառի տարբեր իմաստների տարբերակման ու ճշգրտման⁶⁰: Դրա արտահայտություններից մեկն այն է, որ երբեմն օտար բառը իր այս կամ այն իմաստով (հիմնականում տերմինաբանական) շարունակում է մնալ գործածության մեջ՝ որպես փոխառություն, իսկ այլ իմաստ(ներ)ով՝ փոխարինվում է հայերեն համարժեքով՝ բառակազմական կամ իմաստային: Այս դեպքում գործ ունենք **մասնակի համարժեքության** հետ: Օրինակ՝ **իրիս** օտար բառի (հուն.՝ ծիածան) բուսաբանական նշանակությամբ հայերենը ունի **հիրիկ** գեղեցիկ համարժեքը, ինչպես՝ «...ստացել են որդան կարմրից, լայքայից, տորոնից, աղբրաց արյուն ծաղկից, քրքումից կամ դրանց խառնուրդներից, մանուշակագույնը՝ որդան կարմրից և այլն, կանաչը՝ շուշան և **հիրիկ** ծաղիկներից, կապույտը՝ ինդիգոյից» (համացանց): Նույն բառի բժշկագիտական նշանակության համար գոյություն ունի **ծիածանաթաղանթ** համարժեքը, որը, սակայն, գործածության հաճախականությամբ գրեթե զիջում է փոխառյալ տարբերակին. «Բժիշկը լուսավորում է ձեր աչքը ճեղքված լամպի լույսով և մեծացնելով նախ զննում է աչքի առջևի մասը (կոպեր, կոնյուկտիվա, եղջերաթա-

⁶⁰ Տե՛ս **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 189:

ղանթ, **իրիս**, ոսպնյակ)» (համացանց): Իսկ **իրիս** օտար բառը հայերենում պահպանվել և գործածվում է հրուշակագործության մեջ. «Այս **իրիս** տորթը շատ նման է շերտավոր մեղրով տորթին, ուղղակի այն ավելի հարուստ է մեղրի համով ու **իրիս** կոնֆետի նման....» (համացանց): Կամ՝ **ինքերտը** քիմիական տերմին է, հայերենում չունենք համարժեքը, բայց ահա դրա փոխաբերական նշանակությամբ գործածությունը փոխարինվում է հայերեն համագործածական **անգործունյա, անտարբեր, չեզոք** բառերով: Եվ կամ՝ **դուբլ** – 1. (կինոարվեստ) միննույն տեսարանի մեկից ավելի նկարահանում, 2. նկարահանված տարբերակներից յուրաքանչյուրը, 3. → (մարզ.) **կրկնագուլ**: Այլ օրինակներ՝ **պրոֆիլ** – 1. **կիսադեմ**, 2. ← մասնագիտական ուղղություն, 3. անհատական էջ սոցցանցում, **թեզ** – 1. → դրույթ, հիմնադրույթ, 2. ← գիտական աշխատանք, 3. → ատենախոսություն, **անալիզ** – 1. բուժզննման տեսակ, 2. → ուսումնասիրություն, վերլուծություն, հետազոտություն և այլն:

Երբեմն օտար բառի այս կամ այն իմաստը արտահայտելու համար հայերեն համապատասխանները կիրառվում են որպես զուգահեռ տարբերակներ: Օրինակ՝ **կոլապս** բառի բժշկագիտական իմաստը (սրտի գործունեության հանկարծակի անկում) արտահայտվում է օտար բառով (փոխառությամբ), **ձախողում** իմաստը՝ հայերենով, իսկ աստղագիտական **մահացում** իմաստը՝ զուգահեռ տարբերակներով՝ **կոլապս//մահացում**: Կամ՝ **գուֆ** բառը՝ որպես **գնդախաղի տեսակ**, փոխառություն է, հայերենում չունի համարժեք, իսկ

նույն բառի երկրորդ իմաստի համար գուգահեռ գործածվում է նաև հայերեն տարբերակը՝ **գուլֆ**/(**ծնկա**)-**գուլպա**:

Լիակատար համարժեքության դեպքում փոխառու լեզվի տարբերակները ծածկում են օտար բառի իմաստային և գործառական ամբողջ դաշտը: Օրինակ՝ **ինստանցիա** օտար բառը հայերենում ունի երեք իմաստ և երեք համարժեք՝ 1. **աստիճան** (**աստիճանակարգ**), 2. **ատյան**, 3. **պետական մարմին**: «Միջնորդություն է ներկայացվել քրեական գործի քննությունը այլ **ատյան** (ինստանցիա) տեղափոխելու պահանջով» (մամուլ), «Վարչապետից բարձր **ինստանցիա** կարծես թե չկա» (մամուլ), «Ժամանակն է, որ ստեղծվի մի բարձրակարգ ինստանցիա՝ մի **պետական մարմին**, որը ցանկալի բարձրության վրա կդնեք հայ դպրոցական գործը» (մամուլ): Թեև պիտի ասել, որ գրավոր խոսքում, ըստ համացանցային որոնման արդյունքների, տակավին լայն գործածություն ունի օտար բառը: Նմանապես՝ **քսերոքս** – 1. պատճեն, 2. պատճենահան, պատճենիչ, **սիստեմ** – 1. համակարգ, 2. եղանակ, **ռեպերտուար** – 1. խաղացանկ, 2. երգացանկ, 3. համերգացանկ, **ռեկլամացիա** – 1. բողոքագիր, 2. գովազդում, **սպեկուլյացիա** – 1. վերավաճառում, 2. չարաշահում և այլն:

Բառակապակցական համարժեքները միայն պայմանականորեն կարելի է համարժեքություն համարել, քանի որ օտար բառային մեկ միավորի դիմաց փոխառու լեզվում ունենք բառակապակցական միավոր. ըն-

դունված է դրանք անվանել նկարագրական թարգմանություններ: Սակայն օտար բառի գործածական մեծ հաճախականությունը, իմաստային ճշգրտությունը, բառակազմական կամ իմաստային համարժեքների իսպառ բացակայությունը, օտար տարբերակի արտասանական ընդգծված անհամապատասխանությունը փոխառու լեզվի արտասանական նորմերին և այլ գործոններ ոչ միայն հնարավոր, այլև անհրաժեշտ են դարձնում բառակապակցական համարժեքի գործածությունը: Օրինակ՝ **սուռոզաստ** օտար բառի երեք իմաստներից առաջին երկուսը հայերենում գործածվում են բառակապակցական համարժեքներով (1. փոխնակ մայր, 2. փոխարինող մանրակ), և միայն երրորդ՝ փոխաբերական իմաստն ունի բառային համարժեք (կեղծ, շինծու, անբնական), **պոլիֆոնիա**-ի առաջին իմաստը ունի համարժեք (բազմաձայնություն), երկրորդ իմաստը արտահայտված է բառակապակցությամբ (բազմաձայն ստեղծագործություն): Այլ օրինակներ՝ **վականսիա** – թափուր աշխատատեղ, **պերլուստրացիա** – գաղտնի ընթերցում (պետական մարմինների կողմից), **կոնսիլիում** – բժշկական խորհրդակցություն, **վարիկոզ** – անոթների լայնացում, **քոնթրոլպանել** – հսկիչ վահան:

Բառակապակցական համարժեքները արդի հայերենում շատ չեն, և դժվար չէ նկատել, որ դրանց բառային օտար տարբերակները իրենց հնչյունական-արտասանական բնավորությամբ ակնհայտորեն խորթ են հայերենի արտասանությանը և հնչական համակարգին, և քանի դեռ մեզանում չեն ստեղծվել դրանց

բառային համարժեքները⁶¹, ապա բառակապակցական միավորների գործածությունը կարող է կանոնական համարվել:

Անհամարժեքները (փոխառու լեզվում համարժեք չունեցող օտար բառերը) փոխառու լեզվի բառեր են, որոնք անվանում են փոխառու լեզուն կրող ժողովրդի կենցաղն ու ապրելակերպը, ազգային ավանդույթներն ու հատկանիշները: Դրանք մասնագիտական գրականության մեջ ունեն զանազան անվանումներ՝ **հատկաբառեր, հատկական փոխառություններ, էկզոտիզմներ, տարաշխարհիկ բառեր** և այլն: Իր հողվածներից մեկում էկզոտիզմները փոխառություններից և օտարաբանություններից տարբերակելու փորձ է արել Ա. Քամայյանը: «Էկզոտիզմների մեծ մասը, - գրում է նա, - ինչպես արդեն նշել ենք, ազգային ռեալիաներ են: Մրանք այն օտար բառերն են, որոնք արտահայտում են այնպիսի առարկա, երևույթ, հասկացություն, որ գոյություն չունեն փոխառող ազգի, ժողովրդի պատկերացումների, կյանքի, կենցաղի մեջ, և հետևաբար այդ բառերը չունեն համարժեքներ այդ լեզվում: Այս բառերը գրեթե երբեք չեն դառնում փոխառու լեզ-

⁶¹ Ի դեպ, ժամանակի ընթացքում նկարագրական թարգմանությունները հաճախ փոխարինվել են բառային հաջող համարժեքներով, ինչպես **амнистия** – ընդհանուր ներում → **համաներում**, **дефицит** – ընդհանուր վնաս → **պակասուրդ, товарный знак** – ապրանքային նշան → **ապրանքանիշ, сотовый телефон** → բջջային հեռախոս → **բջջային, военная арена** – ռազմական թատերաբեմ → **ռազմաբեմ** և այլն:

վի բառապաշարի մաս»⁶²:

Հատկական փոխառությունները «ցույց են տալիս այս կամ այն երկրին հատուկ երևույթներ, այս կամ այն ժողովրդին հատուկ սովորույթներ, կենցաղային սովորույթներ, իրեր, արտադրանքներ և այլն, և այլն»⁶³: Հարցը ավելի հիմնավոր ուսումնասիրության է արժանացել ռուս լեզվաբանության մեջ: Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից բառապաշարի այդ շերտի հատուկ քննարկումը չունի հիմնավորումներ, քանի որ այսպես թե այնպես գործ ունենք անհամարժեքների հետ (ինչպես՝ **պուրի, խաչապուրի, լախմաջո, սացիվի, ուխա, վիսկի, սենատոր, դումա, միլի մեջլիս, սարի, հետերա, գեյշա, դրամ, լումա, դոլար, ֆունտ, յուան, լարի, յուրդ, քյոշք, շալաշ, խուտոր, չաստուշկա, դուդուկ, շամիգե, բալալայկա, գարմոշկա** և այլն), և դրանց հայերեն տարբերակները չեն կարող այս դեպքում քննարկման առարկա դառնալ, քանի որ պարզապես գոյություն չունեն: Կարող են ընդամենը բացատրվել հայերենով՝ **բիլինա** (ռուս.) – ռուսական բանահյուսական ժանր, **գեյշա** (ճապ.) – հատուկ և ուսյալ պարուհի, «արվեստի մարդ»: տղամարդիկ վարձում են զվարճանալու համար, բայց նրանց միջև սեռական հարաբերություն տեղի չի ունենում, **շամիգե** (ճապ.) – անսովոր երաժշտական գործիք, որին այլ կերպ անվանում են նաև փոքրիկ ճապոնական կիթառ:

⁶² **Ա. Քամայան**, Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ, «ԲԵՀ. Բանասիրություն», Եր., 2015, № 2, էջ 67:

⁶³ **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 169:

Միշտ չէ, որ հայերեն համարժեքները արագ և վստահ հաստատվում են լեզվի բառապաշարում: Ավելի հաճախ դրանք անցնում են այսպես կոչված փորձության մի որոշակի ժամանակահատված. մրցության մեջ են մտնում օտար բառերի հետ, և որպես **մրցորդ համարժեքներ**՝ հաստատվում են լեզվի հիմնական բառապաշարում կամ չհաղթելու դեպքում դուրս են ընկնում բառապաշարից: Երբեմն այդ պայքարը լինում է տևական. հաստատվում են, եթե համապատասխանում են բառային նորմերին՝ տարածվածություն, համապատասխանություն բառակազմական օրինաչափություններին, արտադրողականություն, բառակազմական ճկունություն, հասկացության բովանդակությունը լիովին արտահայտելը և այլն: Լեզվի զարգացման յուրաքանչյուր շրջափուլ ունի իր մրցորդ փոխառություններն ու հայերեն մրցորդ համարժեքները: Արդի հայերենում, օրինակ, մրցության մեջ են և գրեթե հավասարաչափ գործածություն ունեն հետևյալ օտար և հայերեն բառերը՝ **ագրեման** – *համաձայնություն*, **ագրեսոր** – *նախահարձակ*, **անատոմիա** – *կազմախոսություն / կազմաբանություն*, **անիմացիա** – *շարժապատկեր*, **ամպլիտուդ** – *լայնույթ*, **անտենա** – *ալեհավաք / ալեցիր*, **դեդուկցիա** – *արտածում*, **դիսփլեյ** – *ցուցադրիչ*, **դոզա** – *դեղաչափ / չափ / չափաբաժին*, **լոտո** – *վիճակահատ*, **մեդիա** – *լրատվամիջոց*, **մետալուրգիա** – *մետաղագործություն*, **չաթ** – *գրուցարան*, **չիզբուրգեր** – *պանրաբրդուճ*, **սիմվոլիստ** – *խորհրդապաշտ*, **օնկոլոգ** – *ուռուցքաբան* և այլն: Թե ի վերջո դրանցից որը կհաղթի, որը քաղաքացիության իրավունք կստանա,

ցույց կտա լեզվի հետագա զարգացման ու կանոնարկման ընթացքը:

Ի վերջո, չափազանց դժվարին խնդիր է վստահորեն կանխորոշել հայերեն համարժեքների կամ, որ նույնն է, մրցորդ փոխառությունների «բախտը»: Անցյալում կամ նոր ժամանակներում գրողների, մտավորականների կամ լեզվաբանների կողմից կատարված բոլոր այդ կարգի փորձերը ունեցել են վրիպումներ: Նույնիսկ նրանք, ովքեր հակված են եղել դավանելու խիստ հավասարակշռված մոտեցումներ և տուրք չեն տվել այս կամ այն կողմին, ուղղորդված չեն պաշտպանել փոխառությունների կամ ազգային համապատասխանների իրավունքը, միննույնն է, կոնկրետ բառերի նախընտրություններում ունեցել են «սայթաքումներ».

Վ. Տերյանը, օրինակ, կարծում էր, որ անհարկի են թարգմանվում **պեչ, պալտո, վելոսիպեդ** բառերը, Հ. Թումանյանը, առարկելով իր ընդդիմախոսներին, որոնք մեղադրում էին նրան իբրև թե օտար բառերին անհարկի տուրք տալու մեջ, այնուամենայնիվ, փոխառություններ էր համարում **ինտելիգենտ, կուլտուրա, լեզենդ, պոեմ, սոնետ** բառերը, թեև դրանց հայերեն տարբերակներն արդեն գործածության մեջ կային մեր լեզվում, մասնավորապես արևմտահայ գրականության մեջ, Դ. Դեմիրճյանի համոզմամբ՝ **պատգամավոր**-ը իր տեղը զիջում է **դելեգատ**-ին, լեզվաբան Ս. Ղազարյանը առաջարկում էր գործածության մեջ թողնել **պարտիա, կոնստիտուցիա, սեսիա, ռեսպուբլիկա** օտար բառերը, քանի որ դրանք «արդեն լայն տարածում

են ստացել մեր լեզվի մեջ», Էդ. Աղայանը առավելությունը տալիս էր **կոմպոզիտոր, էվոյուցիա, տուրիստ, բիոլոգիզմ** բառերին՝ գտնելով, որ «ավելի լիարժեք ու համամարդկային են, քան նրանց հայերեն համարժեքները», Գ. Ջահուկյանը անթույլատրելի է համարում «լայն գործածություն ունեցող և հիմնականում ճշգրիտ գործածություն ունեցող տերմինների փոխարինումը նոր համարժեքներով»⁶⁴ և անհաջող է նկատում **կոմպոզիտոր, էվոյուցիա, տուրիստ, տուրիզմ** բառերի փոխարեն **երգահան, բարեշրջություն, զբոսաշրջիկ** և մանավանդ **զբոսաշրջություն** հայերեն բառերի գործածությունը:

Վերն ասվածը, իհարկե, չի նշանակում, որ հարցի վերաբերյալ այսօրինակ քննարկումները անհեռանկար են: Ընդհակառակը, լեզվի բնականոն զարգացմանը զուգընթաց՝ դրանք ուղղորդում են բառընտրությունը, կողմնորոշում են լեզվակիրառողին այս կամ այն տարբերակի ընտրության մեջ: Տարբերակները երբեմն «սպրում են» տևական կյանք, մինչև դրանցից մեկը կամ մյուսը ձեռք է բերում քաղաքացիության իրավունք, գրանցվում բառարաններում: **Մարգաղաշտ** տարբերակը, օրինակ, ամրապնդվեց վերջին տասնամյակներին՝ հունարենից փոխառված **ստադիոն**-ի 1600-ամյա գործածությունից⁶⁵ հետո, **կանգառ**-ը տասնամյակների մրցության մեջ է եղել **աստանովկա**-ի

⁶⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1971, № 9, էջ 96:

⁶⁵ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1837:

հետ, **լռիկ**-ը շուրջ հինգտասնամյա ճանապարհ անցավ և միայն վերջերս ստացավ ակտիվ կիրառություն, **խորհուրդ, հանրապետություն, կուսակցություն, հեղափոխություն** բառերը տասնամյակների ընթացքում միայն երկրորդ փուլի ընտրությամբ փոխարինեցին **սովետ, ռեսպուբլիկա, պարտիա, ռույուցիա** օտար բառերին, **զբոսաշրջիկ**-ը **տուրիստ**-ին դուրս մղեց գրեթե չորստասնամյա մրցությամբ: Այս ցանկը կարելի է երկար շարունակել: Եվ դա ցույց է տալիս, որ ի վերջո հաստատվում է բառապաշարի զարգացման տարիների փորձառությամբ ամրապնդված այն ճըմարտությունը, որ փոխառությունները տեղ ունեն ազգային լեզվում միայն այն դեպքում, եթե սպառվել են ազգային լեզվի՝ սեփական միջոցներով դրանց փոխարինելու բոլոր հնարավորությունները, հակառակ դեպքում ազգային համարժեքը պահպանում է հաստատվելու կամ վերահաստատվելու բոլոր հավանականությունները:

Այսպիսով: Արդի հայերենի բառային կազմի հարստացման հիմնական միջոցը շարունակում է մնալ հայերեն համարժեքների ստեղծումը: Այդ համարժեքները ունեն մի քանի հիմնական դրսևորումներ՝ բառակազմական, իմաստային, բառակապակցական, մրցորդ, լիակատար և մասնակի և այլն: Ներլեզվական որոշ գործոններ խոչընդոտում են հայերեն համարժեքների ստեղծումն ու ակտիվ գործադրությունը, ինչպես՝ օտար բառի իմաստը լիովին չծածկելը, տարածված չլինելը, անարտադրողականությունը, զուգահեռ տարբերակներով գործածությունը, ավանդույթի ուժը

և այլն: Բայց հայերեն համարժեքները, ինչպես ասացինք, ունեն մի շատ կարևոր առավելություն. հասկանալի են լեզվակիրառողին: Եվ եթե հայերեն համարժեքը դրա հետ մեկտեղ, այպես կոչված, բավարարում է նաև վերը նշված ներլեզվական գործոնները (տարածվածություն, կառուցվածքային համապատասխանություն, ճշգրտություն, ճկունություն և այլն), ապա դառնում է լեզվի բառային կազմի հարստացման ու մշակման անփոխարինելի գործիք:

2.2. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոխառությունը յուրաքանչյուր լեզվի բառապաշարի հարստացման ամենակենսական ուղիներից է: Այդ միջոցից լեզուները օգտվում են առավել կամ պակաս չափով: Հայերենը աշխարհի այն լեզուներից է, որոնք քիչ են դիմում փոխառությունների: Օտար լեզուներից փոխանցվող բառերը հայերենը հնարավորության սահմաններում փորձում է փոխարինել համարժեքներով: Ինչպես նշել ենք, այս վերաբերմունքը ունի իր պատճառները. թելադրվում է մեր ազգային կյանքի յուրահատկություններով (ուժացման վտանգը մըշտապես սպառնացել է մեր ազգային ինքնությանը, իսկ լեզուն դիմակայության ամենից հզոր զենքերից մեկն է, որ հնարավորինս հեռու պետք է պահել օտար անհարկի ազդեցություններից), հայերենի առանձնահատ-

կություններով (հայերենն ունի բառակազմական ճրկուն հնարավորություններ՝ սեփական բառամթերքով բառային կազմը հարստացնելու համար) և այլն:

Բայց այս դեպքում մեզ հետաքրքրում են կատարված կամ կատարվող փոխառությունների բնույթն ու բովանդակությունը, ընդգրկման ոլորտները և, առհասարակ, **օտար բառեր-հայերեն համարժեքներ** փոխհարաբերությունները:

Տերմինների գործածության հարցը հստակ է:

Փոխառությունները փոխառու լեզվից փոխառու լեզվին անցած օտար բառերն են. դրանք իրենց համարժեքները չունեն փոխառու լեզվում, բացատրվում են այդ լեզվով, մեր դեպքում՝ հայերենով, ինչպես՝ **գոմբի** – կենդանի էակ, որն ամբողջությամբ կորցրել է ինքնատիրապետումը կամ լիովին ղեկավարվում է այլ անձանց թելադրանքով, **պոլիգրաֆիա** – տեխնիկայի ճյուղ, որն ընդգրկում է տպագիր արտադրության և տպագրական գործի բոլոր ոլորտները, **վայբեր** – համակարգչի և բջջային հեռախոսների համար նախատեսված հատուկ ծրագիր անվճար զանգի, տեսազանգի, հաղորդագրությունների համար:

Օտարաբանությունները անհարկի փոխառություններ են, այսինքն՝ այն օտար բառերը, որոնք փոխառու լեզվում ունեն համարժեքներ, ինչպես՝ **տատու(ած)** – դաջվածք, **ստագնացիա** – լճացում, **սինդրոմ** – համախտանիշ, **ռեյտինգ** – վարկանիշ, **սայթ** – կայք և այլն:

Տարակարծություններ կան **օտար բառեր** տերմինի վե-

բաբերյալ: Այդ տերմինով երբեմն անվանվում են փոխառությունները, իսկ երբեմն էլ՝ օտարաբանությունները: Հարցի ուսումնասիրությամբ զբաղվողներից Ա. Հայրապետյանը իր հոդվածներից մեկում փորձում է ճշգրտել տերմինի գործածությունը. «Հայագիտության մեջ **փոխառություն** և **օտար բառ** եզրույթները նախկինում հոմանիշներ էին, սակայն վերջին տարիներին փորձ է արվում ճշգրտելու դրանց իմաստային սահմանները: Եթե բառը այլ լեզվից ուղղակի կամ անուղղակի եղանակով է անցել հայերենին, և դրա դիմաց հայերենը մայրենի բառ դեռևս չի ստեղծել, փոխառություն է, օրինակ՝ **դոլար, եվրո, դումա, բունդեսթագ, տաստու**, իսկ օտար է այն բառը, որն ունի արդեն ընդհանուր գործածություն կամ այդպիսի միտում ունեցող մայրենի բառ, օրինակ՝ **կոմսյուտեր** – համակարգիչ, **սեսիա** – նստաշրջան, **պրոցես** – գործընթաց, **բրիֆինգ** – ճեպագրույց, **օնլայն** – առցանց»⁶⁶: Այստեղ նույնացվում են **օտար բառ** և **օտարաբանություն** հասկացությունները: Փաստորեն առաջարկվում է **օտար բառ** տերմինը գործածել նեղ իմաստով: Մինչդեռ լայն առումով՝ օտար բառերը ներառում են նաև փոխառությունները: Իհարկե, արտաքին բոլոր փոխառությունները օտար բառեր են, բայց նաև, իհարկե, օտար բառերը միայն փոխառություններ չեն: Եվ, ըստ էության, այս տրամաբանությամբ է կառուցված նաև նույն հեղինակի բառարանը. նրա «Օտար բառերի բառարա-

⁶⁶ Ա. Հայրապետյան, Փոխառությունները որպես լեզվի հարըստացման գործառնություն անընդհատության դրսևորում, «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», Եր., 2018, № 2, էջ 69:

նը» ներառում է ն՛ փոխառություններ, և՛ օտարաբանություններ. **օտար բառեր** վերնագրային ձևակերպումը վերաբերում է փոխառություններին և օտարաբանություններին միասնաբար⁶⁷: Կարծում ենք՝ ճրջգրիտ մոտեցումը դա է. փոխառություններն ու օտարաբանությունները օտար լեզուներից, այսպես կոչված, ընդունող լեզվին անցած բառերն են, որոնք միասին հորջորջվում են **օտար բառեր**: Այդ երեք տերմինների փոխհարաբերությունը կարելի է սահմանել հետևյալ բանաձևով՝ **օտարաբանություններ + փոխառություններ = օտար բառեր**⁶⁸:

Հայերենը, ինչպես և ցանկացած լեզու, փոխառելով բառեր այլ լեզուներից, դրանք ենթարկում է որոշակի փոփոխությունների և հարմարեցնում է իր արտասանական-հնչյունական յուրահատկություններին: Այդ երևույթը ընդունված է կոչել **տառադարձություն**, որը իր հերթին ունի երկու կարգի դրսևորումներ՝ **գրադարձություն** (տառադարձում՝ ըստ գրության՝ Heineken – Հեյնեկեն, Einschtein – Էյնշթեյն) և **հնչադարձություն** (տառադարձում՝ ըստ հնչումի՝ արտասանության՝ Heineken – Հայնեկեն, Einschtein – Այնշթայն):

Մինչև վերջին տասնամյակները արևելահայերենը փո-

⁶⁷ Տե՛ս **Ա. Հայրապետյան**, Օտար բառերի բառարան, Եր., 2011:

⁶⁸ **Օտար բառեր** հասկացության լայն ըմբռնումը արևելահայերենում ենթադրում է նաև բառերի այլ խմբերի ու ենթախմբերի տարբերակում՝ փոխառություն, օտարաբանություն, էկզոտիզմ, օտարամոծություն և այլն: Տե՛ս **Ա. Քամայան**, Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ, «ԲԵՀ. բանասիրություն», Եր., 2015, № 2, էջ 66-80:

խառնություններ էր կատարում ռուսերենից կամ առավել ևս ռուսերենի միջնորդությամբ: Իշխում էր գրադարձության տեսակը, քանի որ մեխանիկորեն փոխանցում էր ռուսերենին հարմարեցված տարբերակը, իսկ դա հաճախ պարզապես խորթ էր հայերենի հրնչյունական համակարգին կամ տարբեր էր բնագրային լեզվի արտասանությունից, ինչպես՝ **Հէյնէկէն, Լէյպցիգ, Մարկ Տվէն, Տրումէն, Կարնէզի, մարկէտինգ, ատլաս, տեստ, տրիլէր, տրոմբ** և այլն:

Այսօր առավելապես իշխող է հնչադարձական տեսակը. հայերենը միտում ունի հարազատ մնալու փոխատու լեզվի արտասանական յուրահատկություններին՝ չխաթարելով և պահպանելով հայերենի արտասանական-հնչական յուրահատկությունները:

Կան դժվարություններ, և իհարկէ վաղուց ժամանակն է մշակելու և օրենսդրորեն ամրապնդելու հայերենի տառադարձության նոր սկզբունքները:

Տառադարձության յուրահատկությունները մեծապես պայմանավորում են նաև փոխառոյալ բառի ուղղագրությունը՝ կրկնակ բաղաձայնների ուղղագրություն (քիլլէր//քիլէր, վէթթինգ//վէթինգ, թրիլլէր//թրիլէր), խուլէրի՝ ձայնեղ հնչյուններով գրային վերարտադրություն (մոնիտորինգ//մոնիթորինգ, տեստ//թեստ, մարկէտինգ //մարքէթինգ) և այլն:

ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՍՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԻ: Այն հանգամանքը, որ փոխառությունները ակտիվանում են հատկապես հասարակական կյանքի ակտիվացմանը զուգահեռ, ենթադրել է տալիս, որ փո-

խառնությունների մեծ հոսք պիտի արձանագրվի հասարակական կյանքի այս կամ այն ակտիվ ոլորտ(ներ)ում: Հայերիս համար վերջին երեք տասնամյակը քաղաքական, տնտեսական լուրջ վերափոխումների ու զարգացումների շրջան էր: Տեղաշարժեր և զարգացումներ արձանագրվեցին նաև հաղորդակցության ոլորտի ոլորտներում՝ գիտության ու տեխնիկայի ոլորտի ճյուղերում՝ տեխնոլոգիաներ, տնտեսագիտություն, իրավագիտություն, բանկային գործ, ռազմագիտություն և այլն: Եվ փոխառությունների ամենից մեծ չափը բաժին է ընկնում հենց այդ ոլորտներին: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

1. Հասարակական-քաղաքական հարաբերությունների ոլորտ: Սա այն ոլորտն է, որը թեև ամենից զգայունն է փոփոխությունների նկատմամբ (հասարակական կյանքի փոփոխությունները ամենից առաջ քաղաքական կարգի փոփոխություններ են թելադրում), սակայն այդ ոլորտի բառային կազմի փոխառությունների բաժինը առանձնապես չի ակտիվանում, քանի որ քաղաքական դիսկուրսը առավել հակումներ է դրսևորում սեփական բառապաշարային նյութի կամ բառակազմական հնարների օգտագործման: Փոխառությունների մի զգալի մասը սովորաբար ունենում է կարճ կյանք, վերածվում է օտարաբանությունների. օտարաբանությունների մի մասի հաճախակի գործածությունը դրդում է դրանք հայացնելու և հանրահասկանալի դարձնելու. շատ շուտով այդ մասը փոխարինվում է հայերեն համարժեքներով: Օրինակ՝ անկախության տարիների սկզբներին արդեն հայերեն համար-

Ժեքներով փոխարինվեցին հասարակական-քաղաքական մի շարք տերմիններ՝ **դեմոկրատիա** – ժողովրդավարություն, **միտինգ** – հանրահավաք, **դեպորտացիա** – արտաքսում//վտարում, **կոնսերվատիվ** – պահպանողական, **մեմորանդում** – հուշագիր, **մոբիլիզացիա** – 1. համախմբում, 2. ռազմականացում, 3. զորահավաք, **ռեֆերենդում** – հանրաքվե, **լեզալ//լեզիտիմ** – օրինավոր, օրինական և այլն:

Երկար կյանք են ունենում քաղաքագիտական նեղ մասնագիտական տերմինները: «Իշխանության **դեմոնիզացիայի** մասին մեկ գիրք չէ, որ գրված է»: «**Մերիտոկրատիա**. Եթե ուզում ես հաջողության հասնել, աշխատանքի վերցրու լավագույններին»: «**Պլեբիսցիտի** (հասարակական կարծիքի վերլուծություն) անհրաժեշտություն կա»: «**Պլուտոկրատիան** (պետության քաղաքական կառուցվածք է, որի դեպքում պետությունը կառավարում են մեծ հարստություն ունեցող անձինք (դրամապետություն)), Հայաստանի պարագայում չունի որևէ հեռանկար» (ՋԼՄ): «Քասեմ Սոլեյմանին նշանակալի ֆիզուր էր իրանական **խթեբլիշմենթում**» (համացանց): Պատճառն այն է, որ այդ բառ-տերմինները սպասարկում են մասնագիտական նեղ միջավայրի գիտական հետաքրքրությունները, քիչ գործածական են և հատուկ միտում չունեն հանրահասկանալի դառնալու: Իրենք՝ այդ տերմինները գործածողները, նույնպես շահագրգռված չեն թարգմանելու կամ հայացնելու դրանք:

Այս ոլորտում գործածվող փոխառություններ են նաև հետևյալները՝ **թրոլինգ** – նորագույն տեխնոլոգիաների

կիրառման միջոցով և առանց խղճահարության / ազնվության սաղրել օգտատիրոջը, **խմայիչմենտ** – ընթացակարգ, որով երկրի օրենսդիր մարմինը պաշտոնապես մեղադրանք է առաջադրում կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներին (պաշտոնանկություն), **էսկալացիա** – ընդլայնում, ավելացում, սաստկացում, ուժգնացում, **գրինքարտ** – ԱՄՆ-ում բնակության թույլտվության համար տրվող քարտ, **դեմարշ** – դիվանագիտական հայտարարություն՝ միջոցառում՝ որևէ պետության վրա ներգործելու նպատակով (բողոք, ընդվզում), **լյուստրացիա** – քաղաքական գրաքննության ձև, օրենսդրական սահմանափակում, որը կիրառվում է իշխանափոխությունից հետո նախկին իշխանության կողմնակիցների իրավունքների սահմանափակման համար (գոհաբերմամբ մաքրագործում) և այլն:

2. Գիտության և տեխնոլոգիաների ոլորտ: Գիտության աննախընթաց զարգացումը վերջին տասնամյակներին լայն դուռ է բացել նորանոր տերմինների ստեղծման և բառապաշարի աննախադեպ հարստացման: Գիտության որոշակի ոլորտներ կամ ճյուղեր, որոնք անմիջականորեն են կապված հանրային կյանքի հետ, բնականաբար առանձնանում են բառային կազմի առավել ակտիվ փոփոխություններով, ինչպես, օրինակ, իրավագիտությունը, բժշկագիտությունը, տնտեսագիտությունը:

ա) Իրավագիտություն: Այս ենթաոլորտը առանձնացրել ենք: **Նախ**՝ որովհետև արագ զարգացող և տերմինային համակարգում մեծ տեղաշարժերի ենթարկվող

ուլորտ է: **Երկրորդ**՝ իրավագիտությունը առնչվում է ամենատարբեր ասպարեզների, և յուրաքանչյուր քիչ թե շատ կարևոր փոփոխությունն արտացոլում է գտնում այս գիտության կամ այս բնագավառի մեջ, և հետևաբար համապատասխանաբար զարգացումներ են ենթադրվում նաև գործառվող բառապաշարում: Եվ **երրորդ**՝ գիտության և գործունեության այն բնագավառն է, որտեղ մասնագետները ակնհայտորեն շահագրգռված են տերմինաբանության ճշգրտումների հարցում, նախանձախնդիր են բառի, արտահայտության օտար կամ հայերեն տարբերակի ճշգրիտ ընտրության ու գործածության մեջ: Այս ոլորտում օտար բառերի գործածության մեծ հոսք կա: Հայ իրավագիտական միտքը ուղղակի և սերտ կապի մեջ է միջազգային իրավագիտական մտքի հետ և փորձում է համաքայլ ընթանալ: Սա ենթադրում փոխառությունների՝ բնորոշումների և անվանումների ուժեղ ազդեցություններ: Ստորև ներկայացնում ենք օտար բառեր, որոնք առայժմ փոխառություններ են և անվերապահորեն են գործածվում իրավագիտության ոլորտում՝ որպես երևույթի ճշգրիտ, հստակ, արտադրողական, կենսունակ, հայերենի արտասանական բնավորությանը չհակասող միավորներ՝ **արբիտրաժ** – 1. վեճերի լուծման եղանակ, որի դեպքում կողմերը դիմում են օրենքով սահմանված կարգով կամ իրենց իսկ համաձայնությամբ ընտրված միջնորդ դատավորներին, իրավարարություն, **2.** պետությունների միջև վեճերի խաղաղ լուծման միջազգային մարմին, **սուբյեկտ** –

իրավագոր անձ, **նոտար** – նոտարական գործառնություններ վարող պաշտոնյա, **ռեցեպցիա** – ուրիշ երկրի իրավունքի փոխարինելը և կիրառելը, **վեթթինգ** – որևէ անձի կենսագրական տվյալների ստուգման գործընթաց, ինչը նախորդում է անձին աշխատանք առաջարկելուն, մրցանակ շնորհելուն կամ նրա նկատմամբ որոշում կայացնելուն. տեղեկություն հավաքելու հետ մեկտեղ ստուգվում են անձանց ակտիվներն ու եկամուտները՝ որոշելու համար դրանց օրինականությունը և այլն:

Այս և մի շարք այլ օտար բառերի գործածության իրավունքը առաջարկվող հայերեն տարբերակների նկատմամբ վկայվում է նաև ԱՐԵՎԱԿ-ի համատեքստային տվյալներով: Օրինակ՝ գանազան բառարաններում **ալիմենտ**-ի հայերեն տարբերակներ առաջարկվող *սայրուստավճար*, *սննդավճար*, *կենսավճար*, *խնամավճար* տերմինները իրենց օտար համարժեքի համեմատությամբ ունեն գործառական շատ ցածր կամ զրո գործակից, վիճակագրությունը այսպիսին է՝ **ալիմենտ**՝ 223 համատեքստ, **սայրուստավճար**՝ 1 համատեքստ, **սննդավճար**՝ 0 համատեքստ, **կենսավճար**՝ 0 խնամավճար՝ 0; **ալիբի**՝ 72 համատեքստ, այլուրեքություն՝ 4 համատեքստ; **էֆ(վ)թանազիա**՝ 2 համատեքստ, բարեսպանություն՝ 0:

Թեև պիտի ասել, որ իրավագիտության ոլորտում գործածվող շատ օտար բառեր փոխարինվել են հայերեն հաջող տարբերակներով՝ **ամնիստիա** – համաներում, **դիվերսիֆիկացիա** – բազմազանեցում//բազմատեսակացում (տնտգ.), **էքստրադիցիա** – արտահանձնում,

պարիտետ – իրավահավասարարություն, **կրիմինալ** – քրեական, **սուբորդինացիա** – աստիճանակարգություն, **օմբուդսմեն** – իրավապաշտպան, **սանկցիա** – պատժամիջոց, **իդենտիֆիկացիա** – նույնականացում:

բ) Բժշկագիտություն: Գիտության և գործունեության արագ զարգացող ոլորտ է: Արագորեն աճում է նաև այս ոլորտում գործածվող փոխառությունների քանակը: Վերջին տարիներին նկատելի է մի կարևոր միտում. հասկապես բժշկագիտությունը մեզանում աչքի է ընկել օտար բառերի գործածությամբ՝ պայմանավորված այդ գիտության, այսպես կոչված, միջազգային բնույթով և մասնագետների կրթական որակներով (բժշկագիտական շատ առարկաներ բուհերում դասավանդվում են օտար լեզուներով), մինչդեռ վերջին տարիներին հասկանալի պատճառներով մեծապես ակտիվացել է ոլորտին վերաբերող բառապաշարի հայկականացման միտումը: Թեև հաստատապես կարելի է պնդել, որ այս բնագավառում մեծ թիվ են կազմում նաև փոխառությունները: Որովհետև.

Դրանց մի մասի հայերեն համարժեքները գոյություն չունեն, ինչպես՝

• *Հիվանդության տեսակների անվանումներ՝ դաուն* – հիվանդություն անգլ. բժիշկ Լ. Դաունի անունից, **ալերգիա** – կենդանի օրգանիզմի զգայնությունը ալերգենների նկատմամբ, **աուտիզմ** – ուղեղի կանոնավոր զարգացման խանգարում՝ ուղեկցված շփման, խոսողության և կրկնվող վարքագծի ախտանիշներով, ի-

շիաս – նստանյարդի բորբոքում, **կուլապս** – սրտի գործունեության հանկարծակի անկում, **կորոնավիրուս** – սուր վարակիչ նոր հիվանդության տեսակ, **թրոմբ** – անոթներում առաջացող արյան մակարդուկ,

• *Դեղերի և բժշկությանն առնչվող այլ իրողություններ*ի անվանումներ՝ **դեկարիս** – նեմատոդոսների համար նախատեսված անտենալին թմրանյութ, **էպիկրիզ** – հիվանդության պատմության վերջում գետնեղված եզրակացություն, **ինհալացիա** – բուժական նպատակներով գոլորշի շնչելը, **լոգոպեդ** – խոսքային խանգարումները շտկող մասնագետ և այլն:

Մյուս մասի հայերեն համարժեքները անհաջող են. երկար են և անբարեհունչ կամ հասկացության իմաստը լիովին չեն արտահայտում, արտադրողական չեն, ինչպես՝ **դալտոնիզմ** – գունակուրություն, գունաշփոթություն (հիվանդություն, որի դեպքում անձը որոշ գույներ չի տարբերում), **պարոդոնտիտ** – հարատամնաբորբ (հարատամնային հյուսվածքի ախտահարում), **ալբինոս** – լսնամաշկ, գունագար (ի ծնե մաշկի պիգմենտների բացակայություն), **իմունիտետ** – վարակամերժություն, **կարիես** – ոսկրափուտ, **պերիոդոնտիտ** – շուրջատամնաբորբ (ատամների հիվանդություն), **շիզոֆրենիա** – մտահերձում և այլն:

Երրորդ մասը գործածվում է հայերեն տարբերակ(ներ)ին զուգահեռ, և տակավին դժվար է պնդել, որ օտար տարբերակը դուրս է մղված լեզվից, ինչպես՝ **ատրոֆիա** – հյուծում, ծյուրանք, **պրոթեզ** – դերանդամ, **դի-**

զենտերիա – թանջ, **դոզա** – դեղաչափ, դեղաբաժին, **անգինա** – բկաբորբ, նշաբորբ, **ինֆարկտ** – սրտախտ, սրտակաթված, **ամնեզիա** – անհիշողություն, **ինֆանտիլիզմ** – մանկայնություն, **լալոպաթիա** – խոսելախտ, **լարինգիտ** – կոկորդաբորբ, **դիֆտերիա** – բկացավ և այլն:

զ) Տնտեսագիտություն, ֆինանսներ և բանկային գործ: Սրանք, ըստ էության, գործունեության առանձին ոլորտներ են, սակայն խիստ տարանջատված չեն. մեծ ընդհանրություններ ունեն նաև գործառվող բառապաշարները: Ուստի ճիշտ կլինի դրանք միասնաբար քննարկել: Ըստ որում, մեր տպավորությամբ՝ տնտեսագիտական բառապաշարը մեզանում շատ ավելի մշակված ու այսպես ասած հայերենացված է, քան բանկային կազմի՝ վերը նշված կամ քննարկվող այլ շերտերը: Սա նշանակում է, որ օտար բառերի մի զգալի մասը այս ոլորտում փոխարինվել է հայերեն հաջող համարժեքներով, ինչպես՝ դիվիդենտ – **շահաբաժին**, ինվեստոր – **ներդրող**, ինվեստիցիա – **ներդրում**, օֆիս – **գրասենյակ**, դիստրիբյուտոր – **1. մատակարար**, **2. բաշխիչ**, պրիվատիզացիա – **մասնավորեցում**, էմբարգո – **բռնարգելք** և այլն: Մի շարք օտար բառեր մրցության մեջ են հայերեն տարբերակների հետ, ինչպես՝ **աուդիտ** – հաշվեստուգում, **օպտիմալացում** – լավարկում, **մոնիթորինգ** – մշտադիտարկում, դիտազննում, **մենեջեր** – կառավարիչ, **մարքեթինգ** – շուկայագիտություն, շուկայաբանություն և այլն: Բայց և այնպես, զարգացող տնտեսագիտական մտքի արագ ընթացքը ենթադրել է տալիս այս ոլորտում օտար բառերի առատ գործածություն, որոնց մի զգալի մասը,

այնուամենայնիվ, մնում է փոխառությունների դաշտում, ինչպես՝ **ռոյալթի** – ընդերքի մասհանումից պետական բյուջեի՝ տոկոս ստանալը, **օվերդրաֆտ** – բանկային հաշվին կցված անհատական վարկային գիծ, **օֆշոր** – արտոնյալ կամ չհարկվող կարգավիճակով գոտիներում ստեղծված ընկերություն, **ասկաստ** – դրամական օրինավոր հատկացումներից ապօրինի պայմանավորվածությամբ դրամի յուրացում, **գեշեֆթ** – ապօրինի գործարք, ձեռնտու գործարք, օրենքը շրջանցող բիզնես, **էմիսիոն** – թողարկային, արտարկային, **տաքսոնոմիա** – պարզից բարդ համակարգի նպատակների և արդյունքների աստիճանակարգային համակարգ, **մարժա** – որոշակի ժամանակահատվածներում ծավալված գործունեության արդյունքում ստացված դրամական միջոցներ, **անուիտետ** – ամսական հավասարաչափ մարումներ, **քլիրինգ** – 1. (բանկ.) բանկային անկանխիկ հաշվարկների համակարգ՝ փոխադարձ պահանջների և պարտավորությունների հաշվառման ճանապարհով (միջազգային շուկայում՝ արժութային քլիրինգ, ներքին շուկայում՝ միջազգային քլիրինգ), 2. հաշվարկների արարողություն բորսայում, որտեղ հաշվարկային պալատը բոլոր ժամկետային համաձայնագրերի վաճառողների առջև հանդես է գալիս համախմբված վաճառողի և համախմբված գնորդի դերում՝ դրանով իսկ երաշխավորելով կրնքված համաձայնագրերի կատարումը և մասնակիցներին կորստից ապահովագրելով և այլն:

3. Նորագույն տեխնոլոգիաներ: Հաղորդակցության համեմատաբար նոր բնագավառ է: Այստեղ օտար բա-

ների առատ գործածությունը պարզապես անխուսափելի է: Դրանց հայերեն համարժեքների ստեղծումը բարդանում է այնքանով, որ գործ ունենք նոր միջավայրի, նոր ոլորտի և հաճախ նաև տերմինային նոր մանրահամակարգի հետ: Տերմինները կիրառության մեջ դնողները առավելապես նեղ մասնագետներ են, և դրանց շրջանակն էլ շատ նեղ է: Տարածվելու, հանրային դառնալու դեպքում է, որ լեզվագործածողը փորձում է գտնել դրանց հայերեն համարժեքները (**ինֆորմատիկա** – տեղեկագիտություն, **տեխնոլոգիա** – արտադրաբանություն, **ինֆորմացիա** – տեղեկույթ, **սմարթֆոն** – ինտելիստ, **դաունլոդ** – ներբեռնում, **հարդվեր** – սարքաշար): Այս ոլորտի օտար բառերը ոչ մասնագիտական լսարանում դժվարություններ ունեն հանրայնանալու: Գործածվող օտար բառերը ներխուժում են որպես անմրցորդ տարբերակներ, և միայն որոշ ժամանակի ընթացքում դրանց համարժեքները կարող են հաղթել: Այս ոլորտի փոխառությունները տակավին ճանապարհ ունեն անցնելու և առայժմ մեր բառապաշարի անշրջելի շերտն են կազմում:

4. Համակարգչային ոլորտ: Նոր բնագավառ է, և օտար բառերի «գրոհը» անխուսափելի է բնագավառին առընչվող անվանումներում: Համակարգիչների նորանոր տեսակներ, սմարթֆոններ, գաջեթներ, սրանց համար ստեղծված նոր ծրագրեր, սրանց հետ կապված աշխատանքային գործընթացներ և այլինչ բնականաբար հայ իրականություն են մուտք գործում նախ և առաջ օտար անվանումներով՝ **կոմպյուտեր**, **ափղեյթ**,

սայթ, պլանշեթ, ֆեյսբուք, նոութբուք, բրաուզեր, անդու, վիրուս, անտիվիրուս, դիսփլեյ, էսէմէս, ֆլեշկա, սերվեր, օֆլայն և այլն: Սրանց մի մասը արագ գտնում է իր հայերեն համարժեքները, ինչպես՝ **կոմպյուտեր** – համակարգիչ, **ֆլեշկա** – կրիչ, **մաուս** – մկնիկ, **անդու** – հետքայլ, հետարկ(ում), **բրաուզ** – վերբեռնում, **բրաուզեր** – դիտարկիչ, **դաունլոդ** – ներբեռնում, **ինսերթ** – գետեղում, **ինստալյացիա** – տեղադրում, **սայթ** – կայք, **հաքեր** – ցանցահեն, **ստատուս** – կայքէջի / օրվա կարգախոս (նաև՝ **2.** (իրավբ.) կարգավիճակ, դրություն, **3.** դիրք), **քյանսլ** – չեղարկում, **օնլայն** – առցանց: Պատճառն այն է, որ ոլորտը շատ արագ հանրայնանում է և ինքնաբերաբար կամ հատուկ միտումով և մշակված լեզվաքաղաքականությամբ բառապաշարը, այսպես կոչված, հայացվում է, մեծ լսարանի համար բերվում է համընկալումների տարածություն:

Մյուս մասը մրցության մեջ է հայերեն տարբերակների հետ, ինչպես՝ **դիսփլեյ** – ցուցադրիչ, **էսէմէս** – հաղորդագրություն, **չաթ** – զրուցարան (առցանց), **ափդեյթ** – թարմացում, արդիացում, նորացում, **բլոգեր** – կայքավար, օրագրող, **մոնիտոր** – ցուցարկիչ, **սերվեր** – սպասարկիչ և այլն:

Մյուս մասը շարունակում է գործածության մեջ մնալ օտարալեզու տարբերակով, այսինքն՝ որպես փոխառություն, ինչպես՝ **պլանշեթ** – սենսորային համակարգչի տեսակ, **նոութբուք** – դյուրակիր համակարգիչ, **չիպ** – էլեկտրոնիկայում կիրառվող միկրոսխեմա, **այփադ** – համացանց-պլանշեթ, **օֆլայն** – նշում կապի

անջատած կարգավիճակի վրա, **դիսփիլեյ** – համակարգչի մաս, որի էկրանին գրվում՝ երևում է համակարգչի կատարած աշխատանքը՝ նրա կուտակած տեղեկատվությունը, էկրան, **ինֆորաֆիկա** – ինֆորմացիա հաղորդելու միջոց, որի նպատակն է գրաֆիկական պատկերների օգնությամբ հնարավորինս պարզ մատուցել բարդ տեղեկությունը, **քարթրիջ** – տպիչի ներկատուփ և այլն:

5. Ռազմական ոլորտ: Անկախության շրջանից հայոց ռազմական ինքնուրույն կյանքը զգալի աշխուժացում ապրեց՝ սկսած հայոց բանակի ձևավորումից մինչև ռազմական ակտիվ գործողություններ, փառավոր հաղթանակներ, ռազմական տեխնիկայի կատարելագործում և այլն: Սրանք իրենց հետ բերեցին ռազմական նորացված բառապաշար: Հայերենը հաջողությամբ ստեղծում է ռազմական նոր տերմինաբանություն: Բայց բազմաթիվ այլ բառեր (զենքերի, ռազմական տեխնիկայի ու սարքավորումների անվանումներ, գործողություն, աստիճան, կոչում նշանակող բառեր և այլն) մուտք են գործում հայերենի բառապաշար, կամ բառապաշարում արդեն իսկ արձանագրված շատ բառեր ձեռք են բերում գործառական մեծ ակտիվություն և դառնում համագործածական: Օտար տարբերակը քաղաքացիության այդ իրավունքը ստանում իր իմաստային և գործառական դրական հատկանիշների շնորհիվ. չի հակադրվում հայերենի արտասանական կանոններին, բարեհունչ է, կարճ է, գործառական տեսակետից՝ ճկուն և բառակազմորեն՝ ար-

տաղրողական: Օրինակ՝ **դիվերսիա**. արևմտահայերենի բառարաններում արձանագրվում է դրա **խափանարարություն** համարժեքը⁶⁹: Տասնամյակներ ծանոթ է արևելահայ հանրությանը, երբեմն գործածվել է մամուլում և այլևայլ գրականության մեջ, բայց այդպես էլ ձեռք չի բերել քաղաքացիության իրավունք: Օտար՝ փոխառված տարբերակը բառագուգորդումներում ճկուն է (դիվերսիոն գործողություններ, դիվերսիա կազմակերպել, դիվերսիոն խումբ և այլն): Հետաքրքիր են ԱՐԵՎԱԿ-ում արձանագրված տվյալները. 54 համատեքստից 53-ում գործածված է **դիվերսիա** բառը և միայն մեկում՝ **խափանարարություն**: Իհարկե, ժամանակի ընթացքում կարող է ստեղծվել հայերեն ավելի հաջող տարբերակ, կամ նույնիսկ կարող է գործառական ակտիվություն ստանալ հայերեն տարբերակը: Մեկ այլ օրինակ՝ օտար **շտաբ** բառը իր երեք իմաստներով էլ գործածվում է հայերենում՝ **1.** գորքերի կամ կուսակցության ղեկավարման կենտրոն (կենտրոնակայան), **2.** դրա գտնվելու վայրը, **3.** այդ ռազմական կամ քաղաքական մարմնի անձնակազմը (սպայակույտ⁷⁰): Փակագծերում բերված հայերեն տարբերակները չեն դիմանում մրցության և չեն վաստակում գործածության իրավունք:

Ըստ որում, հայերեն առանձին տարբերակներ տասնամյակներ է՝ մրցության մեջ են օտար բառերի հետ, և տակավին դժվար է ասել՝ մոտ ապագայում դրանցից

⁶⁹ Ա. Մարգարյան, Արևմտահայերենի բառարան, Եր., 1991:

⁷⁰ Տե՛ս Ա. Տեր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 2, Պէրոյթ, 1992:

որը կհաղթի, ինչպես՝ **դեսանտ** – 1. ռազմական գործողություններ վարելու համար հակառակորդի տարածքը ռազմանավից կամ ինքնաթիռից իջեցված զորք, 2. հակառակորդի տարածքում զորք իջեցնելը⁷¹: Հայերեն **զորեջք** և **իջագոր** տարբերակները արձանագրված են առանձին ուղեցույցներում և բառացանկերում⁷², սակայն չունեն գործառական ակտիվություն: Ըստ որում, առաջին տարբերակը՝ **զորեջք**, արևմտահայերենում գործածական բառ է և որպես հայերեն համարժեք՝ նախընտրելի (զորք կամ զորքեր իջեցնելը): Երկրորդ տարբերակը է՛լ ավելի սակավ գործածություն ունի: Այն կազմված է **հեծելագոր** (=հեծյալ զորք), **հետևակագոր** / **հետևագոր** (=հետևակ զորք) բառերի համաբանությամբ. **իջագոր** (=թշնամու տարածքում իջեցնելու համար նախատեսված զորք): Այսօր այս իմաստի համար առավելապես գործածվում է **դեսանտային զորք(եր)** բառակապակցությունը: Այժմ ռազմական տերմինաբանության մեջ գործածական է փոխառյալ բառը՝ **դեսանտ**: Այդպիսի բառերից են նաև **ագրեսիա** – (նախա)հարձակում, **ագրեսոր** – նախահարձակ, հարձակվող, **ագրեսիվ** – հարձակողական օտար բառերը: Ռազմական ոլորտի փոխառություններ են՝ **գեներալիտետ** (գինուժի գեներալների ողջ կազմը), **էսկալացիա** (1. հարձակում, գրոհ՝ ամրոցների, ամրությունների վրա, 2. (փխբ.) ռազմական գործողությունների ծավալում՝ բորբոքում), **կուրսանտ** (գինվորական դրպ-

⁷¹ Տե՛ս Ա. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Եր., 2011:

⁷² Տե՛ս Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Բառագիտություն, Եր., 2016, էջ 249: «Ուղեցույց հայոց լեզվի», Եր., 2017, էջ 72:

րոցի սան), **կորպուս** (գորաբանակ) և այլն:

6. Մարզական ոլորտ: Արագ զարգացող բնագավառ է: Նոր մարզաձևեր, սարքավորումներ, մարզական խաղերի և սպորտային միջոցառումների նոր տեսակներ ու ձևեր. այս ամենը բուռն ներխուժում է հասարակության կյանք: Եվ դրանք հիմնականում դրսից՝ օտար ազգերից փոխառված իրողություններ են: Բնականաբար փոխառվում են նաև դրանց անվանումները: Հայերենը իր հնարավորությունների շրջանակներում փորձում է դրանք բերել հայերեն բառապաշարի դաշտ: Հաճախ դա հաջողվում է: Բայց փոխառվող բառաթերքը այնքան հարուստ ու բազմազան է, որ լեզուն օբյեկտիվորեն ի վիճակի չէ միանգամից լուծելու խնդիրը: Մարզական շատ տերմիններ վերցվում են նույնությամբ՝ իհարկե հարմարեցվելով հայերենին, մի քանիսը մրցության մեջ են մտնում հայերեն համարժեքների հետ: Հայերեն շատ համարժեքներ էլ, ինչպես ասվեց, ի սկզբանե հաղթում են և տեղ գրավում գործածական բառերի շարքում:

Մարզական ոլորտում գործածվում են և տակավին՝ փոխառություններ կամ մրցորդ փոխառություն են հետևյալները՝ **սկիֆ** – մրցանավակի տեսակ, **կեռ** – մարզակոշիկի տեսակ, **էքստրիմ** – վտանգներով լի մարզաձև / զբաղմունք, որի նպատակը սուր զգացողություններ ունենալն է, **բադմինթոն** – փետրագնդակ, **սերֆինգ** – ալեսահք, **սքեյթ** – անվատախտակ և այլն: Թեև պիտի ասել, որ հայերեն որոշ տարբերակների գործածական հաճախականության վերաբերյալ ԱՐԵՎԱԿ-ի տվյալները բնավ էլ հուսադրող չեն: Խիստ հազվադեպ

գործածություն ունեն, օրինակ, **շպազատ** օտար բառի հայերեն երեք տարբերակներն էլ՝ **լարան**, **առասանակ**, **առատուկ**: Քիչ գործածություն ունեն նաև **անվատախտակ**, **մեծավարպետ**, **փետրագնդակ**, **գնդախաղ** համարժեքները:

7. Արվեստի ոլորտ: Չենք կարող ասել, որ այս ոլորտում ակտիվ են փոխառությունները: Քանի որ ոլորտը ինքնին ակտիվ զարգացման և առաջընթացի նշաններ առանձնապես չի դրսևորում: Արվեստի նոր ուղղություններ, նոր գործիքակազմ, նկարագրության նոր տերմինաբանություն և այլն. սրանք են այն հիմնական գործոնները, որոնք «պարտադրում» են նոր օտար բառերի մուտքը հայերեն: Իսկ այդ գործոնները կամ, ավելի ստույգ, հանգամանքները իրականում այնքան էլ պարտադրող չեն մեզանում: Այնուամենայնիվ, կա փոխառված տերմինների մի որոշակի շերտ, որը մեր արդի բառապաշարում իր ուրույն տեղն ունի, ինչպես՝ **դեկոր** (**բեմազարդ** համարժեքը խիստ սակավ գործածություն ունի. ԱՐԵՎԱԿ-ում չի արձանագրված դրա գործածության դեպք⁷³): **Վոկալ** բառի հայերեն համարժեքներ են նշվում **ձայնային**, **երգային** բառերը⁷⁴, սակայն նույն ԱՐԵՎԱԿ-ի փաստերով դրանք գրեթե գործածական չեն (**ձայնային**-ը փոքրիշատե գործածվում

⁷³ Բառը արձանագրված չէ նոր բառերի բառարաններում. տե՛ս **Փ. Մեյթիխանյան**, Նոր բառերի բացատրական բառարան, Եր., 1996: **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002: «Նոր բառեր», Ա, Բ, Գ, Դ պրակներ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., 2015, 2016, 2017, 2018:

⁷⁴ «Ուղեցույց հայոց լեզվի», Եր., 2017, էջ 127:

է, իսկ **երգային**-ը **վոկալ** նշանակությունը չունի): **Կոլաժ** օտար բառը, որը նշանակում է տեխնիկական հնարք կերպարվեստում. հիմնաշերտի վրա տարբեր գույն և ֆակտուրա ունեցող նյութեր փակցնելը, ունի հայերեն տարբերակներ՝ **կցոնք**, **կցապատկեր**, **կցակերտվածք**, որոնք, սակայն, գործածական չեն: Առանձին դեպքերում օտար բառը, չնայած այն հանգամանքին, որ հնչյունական և արտասանական որակներով շատ հեռու է գրական հայերենի արտասանական նորմերից, մրցության մեջ պահպանում է իր գոյության իրավունքը, քանի որ հայերեն տարբերակը լիովին չի արտահայտում հասկացության բովանդակությունը: Օրինակ՝ անգլերենից փոխառված **սաունթրեք** բառը հայերենում փորձում ենք փոխարինել **կինտերգ** կամ **կինտմեդեդի** տարբերակով: Մինչդեռ հայերեն տարբերակը իմաստային անհամարժեքություն ունի. **սաունթրեք**-ը կինոնկարի գլխավոր երգն է, իսկ ֆիլմում կարող են հնչել բազմաթիվ այլ երգեր, որոնք **կինտերգ** են, բայց **սաունթրեք** չեն: Թեև, ինչպես ասվեց, օտար **սաունթրեք** բառը ունի ձայնավորական գույզորդում և խուլ հնչյունների կուտակում, որը խորթ է հայերենի արտասանության նորմերին:

Արվեստի կամ մշակույթի ոլորտում տակավին գործածվող փոխառություններ են հետևյալները՝ **գրոտեսկ** – արտառոց չափազանցություն (սահմանազանցում), **դիջեյ** – երաժշտական հաղորդավար, որը ունկընդիրներին մատուցում է երաժշտական փոփոխված կամ անփոփոխ կատարումներ, **անշլագ** – մշակութային միջոցառման բոլոր տոմսերը վաճառված

լինելու փաստը, **թոքշոու** – հեռուստագրույց ճանաչված որևէ գործչի հետ (գրուցահանդես), **էքսպրոմտ** – արագագիր, հանկարծաստեղծություն, հեղաստեղծում, **բենեֆիս** – հայտնի արտիստի նվիրված տոնահանդես, ներկայացում (նվիրահանդես), **հիթ** – հանրահայտ դարձած ֆիլմ, երգ, հոլովակ, **կոմիքս** – երգիծական նկարաշարով երկ, **կարաոկե** – 1. որևէ երգի ոչ արհեստավարժ կատարում (նվագերգ), 2. ժամանցի վայր, **թրիվեր** – հետաքրքրաշարժ ֆիլմ կամ գրական երկ (կինոպատում) և այլն:

8. Այլ ոլորտներ և կենցաղ: Ուտելիքների և առհասարակ սննդի հետ առնչվող իրողությունների, հագուստների, կենցաղի առարկաների անվանումները ծագում կամ փոխառու լեզու են մուտք գործում առավելապես այլ ազգերի հետ շփումների արդյունքում: Գաղտնիք չէ, որ անչափ մեծացել են այդպիսի շփումների հնարավորությունները: Նկատի ունենք նաև այդ ոլորտներին առնչվող առարկաների մուտքը մեր կենցաղ: Օտար տարբերակները հաճախ բնագրային լեզվում մշակված, կարճ, դիպուկ, հասկացության իմաստը հստակորեն արտահայտող անվանումներ են: Հայերեն տարբերակների ամենամեծ առավելությունը այս դեպքում թերևս լեզվակիրառողի համար հասկանալի, մատչելի լինելն է: Դժվարություններ են ծագում ստեղծելու դիպուկ համարժեքներ, քանի որ ամենօրյա գործածության այդ բառերը պետք է ունենան համագործածական բառի հատկանիշներ. լինեն հանրահասկանալի, կարճ, բառակազմորեն ճկուն, ունենան կապակցելիության բարձր աստիճան և այլն: Բայց, իհար-

կէ, միշտ չէ, որ դա հաջողվում է, և ուստի տակավին կենսունակ և գործածական են մնում օտար բառերը.

• *Ուտելիք և սնունդ կամ դրանց հետ առնչվող իրողություններ անվանող փոխառություններ՝ չիպս* – բարակ շերտով կարտոֆիլ՝ պատրաստված զանազան համեմունքներով, *գրիլ* – 1. խորովելու սարք (խորովոց), 2. այդ սարքում խորոված թռչնամիս, *կեքս* – թխվածքի տեսակ, *հոթդոգ* – նրբերշիկով հաց, *սոուս* – զանազան կերակուրների հետ օգտագործվող զանգված, *սուշի* – հում ձկով պատրաստվող ճապոնական ուտեստ, *սթեյք* – տապակած միս, *լանչ* (բիզնես լանչ) – ակրատ (երկրորդ նախաճաշ), *կրեկեր* – հրուշակեղեն՝ պատրաստված այուրից և յուղից, *բրիկետ* – սնունդամթերքի և այլնի աղյուսածն կտոր և այլն:

• *Ջանազան սարքեր և սարքավորումներ, տեխնիկական միջոցներ անվանող փոխառություններ՝ կոնդիցիոներ* – մազերի կամ դեմքի խնամքի միջոց, *թոստեր* – հացի բարակ շերտերը չորացնող և կարմրացնող սարք, *բլենդեր* – խոհանոցային էլեկտրական սարք, որով մանրացվում են մրգեր, բանջարեղեն և այլն (խառնիչ), *դետեկտոր* – կիսահաղորդչային սարք, որը բարձր հաճախականության տատանումները փոխակերպում է ցածր հաճախականության լսելի կամ տեսանելի ազդանշանի (հայտնաբերիչ), *էկվալայզեր* – մանրակ ձայնարկիչ սարքերում, որն ապահովում է մաքուր, հնչեղ ձայն:

• *Կրթությանը և ուսումնական գործին առնչվող փոխառություններ՝ բակալավր* – շատ երկրներում համա-

լսարանական կրթության առաջին աստիճանը, **մագիստրատուրա** – որոշ երկրներում համալսարանական կրթության երկրորդ աստիճանը տվող կրթական համակարգ, **դիպլոմանիկ** – ավարտական (դիպլոմային) աշխատանք գրող ուսանող:

- *Հագուստ իմաստային դաշտին վերաբերող փոխառություններ*՝ **կապուշոն** – հագուստին հարմարեցված գլխարկ, **տունիկա** – կանանց հագուստի տեսակ, **դեկոլտե** – լանջաբացվածք, **ժակետ** – երկարաթև տաք վերնագգեստ, **ժիլետ** – անթև վերնագգեստ (բաճկոնակ) և այլն:

- *Շինարարությանն առնչվող իրողությունների փոխառյալ անվանումներ*՝ **շվեյեր** – պողպատյա հեծան, **շպոն** – տաշեղ, **գրունտ** – 1. բնահող, գետին: 2. հիմնաներկ, **լաք** – լուծույթ, որը հեղուկ վիճակում քսում են որևէ առարկայի մակերեսին փայլ հաղորդելու համար, **դյուբել** – առարկա, որը սուր մասով դրվում է պատի մեջ, բաց կողմից պտուտակը ձգվում է դրա մեջ:

- *Հարդարանքի և խնամքի առարկաների փոխառյալ անվանումներ*՝ **շամպուն** – մազերը լվանալու հեղուկ օճառ, օճառահեղուկ, **լիֆտինգ** – դեմքի մաշկի ձգում, կնճիռների վերացում, **լոսյոն** – մաշկի խնամքի կոսմետիկ միջոց:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն օտար բառերը, որոնք բազմիմաստ են. դրանք հայերենում հանդես են գալիս երկու տարբերակով. փոխառություն են՝ ա) բոլոր իմաստներով, բ) մեկ կամ ավելի իմաստներով, իսկ այլ իմաստ(ներ)ով՝

օտարաբանություն կամ մրցորդ փոխառություն: Օրինակ՝ **թերապիա** բառը երկու իմաստներով էլ գործածվում է որպես փոխառություն՝ **1. (բժշկ.) ներքին հիվանդությունների բուժումն ուսումնասիրող գիտություն, 2. ներքին հիվանդությունների բուժում (բուժագիտություն):** Ըստ որում, երկրորդ իմաստի հայերեն համարժեքը՝ որպես հաջողված տարբերակ, կարող է հանդես գալ որպես օտար **թերապիա** բառի փոխարինիչ: Կամ՝ **մոդուլ** բառը տերմինային արժեք ունի երկու իմաստներով՝ **1. (ֆիզ.) գործակից, 2. (մաթ.) բացարձակ մեծություն:**

Այս խմբի բառերից են նաև հետևյալները՝ **էքստրակտ** – **1.** մրգերից կամ բանջարեղենից քամելով ստացված հյութ՝ մուգ, հանուկ, **2.** բուժական պատրաստուկ՝ նրբաթուրմ, **դիֆուզոր** – **1.** մազերը գանգրացնելու սարք, **2.** քիմիական խողովակի հատվածամաս..., **3.** մեխանիկական տատանողական համակարգի մաս, **գել** – **1.** մարմնի հեղուկ օձառ, **2.** բժշկական կոսմետիկ միջոց դեմքի, մազերի, մաշկի խնամքի համար, **գրիլյաժ** – **1.** շաքարահյութով բոված ընկույզ, **2.** այդ միջուկով պատրաստված շոկոլադ, **միդի** – **1.** հագուստի միջին երկարություն, **2.** կանանց՝ միջին երկարության զգեստ, **ինֆորմատիկ** – **1.** տեղեկագետ, **2.** տեղեկագիտական, **լաբորանտ** – **1.** լաբորատորիայի աշխատող, **2.** գիտաուսումնական հաստատության աշխատակից, **կոոպերատիվ** – **1.** խումբ կամ կազմակերպություն, որն աշխատում է տնտեսական համընդհանուր նպատակների շուրջ, **2.** աշխատանքի կազմակերպման ձև, **դիզել** – **1.** վառելանյութ, **2.** ներքին

այրման շարժիչ (գերմ. ինժ. Ռ. Դիզելի անունով), **դեֆոլտ** – 1. (քղբգ.) պարտականությունների չկատարում, 2. (իրավբ.) դատարան չներկայանալը, 3. ինչ-որ բանի բացակայություն, պակասություն, 4. (սպորտ.) մրցումներից դուրս գալը, 5. (տնտեսգ.) – իրավագանցում, օրենքով սահմանված պահանջների չկատարում, սնանկացում և այլն:

Այս խմբի բառերից են նաև հետևյալները՝ **իներտ, կուրս, բռնուս, կոլորիտ, դուբլ, բյուլետեն, դիպլոմատ, գոլֆ** և այլն: Օրինակ՝

Կուրս բառի վեց իմաստներից միայն մեկը՝ առաջին իմաստն է արտահայտվում օտար բառով՝ փոխառությամբ (**կուրս**՝ ուսումնառության փուլ): Մյուս հինգ իմաստները ունեն հայերեն համարժեքներ՝ 2. դասընթաց, 3. փոխարժեք, 4. ուղընթացք, 5. բուժընթաց, 6. քաղաքականություն:

Բռնուս բառի երեք իմաստներից մեկ իմաստի համար ունենք համարժեք՝ պարզևավճար, մյուս երկուսի դեպքում (2. գնի իջեցում, 3. միավորների որոշակի քանակ) գործածվում է **բռնուս** օտար բառը:

Կորպուս բառի առաջին երկու իմաստների համար հայերենը ունի համարժեքներ՝ 1. մասնաշենք, 2. հիմնակմախք, իսկ երրորդ և չորրորդ իմաստների համար (3. գորաբանակ, 4. համացանցային տեքստային շտեմարան, 5. մարմին) տակավին գործածվում է օտար՝ **կորպուս** տարբերակը:

Նմանապես՝ **դիպլոմատ** 1. → դիվանագետ, 2. ← պա-

յուսակի տեսակ: **3.** (փխբ.) → խորամանկ, զգուշավոր, ճարպիկ, **բյուլետեն** → **1.** անաշխատունակության թերթիկ, **2.** ← տեղեկաթերթ, **3.** տեղեկագիր, **դուբլ** ← **1.** (կինո) միննույն տեսարանի մեկից ավելի նկարահանում, **2.** նկարահանված տարբերակներից յուրաքանչյուրը, **3.** (մարզ.) կրկնագույ, **գույՖ** ← **1.** գնդախաղի տեսակ, **2.** ↔ (ծնկա)գուլպա, **կոլորիտ** **1.** ← գույների ներդաշնակություն, **2.** (փխբ.) ↔ բներանգ, **3.** ↔ միջավայր, **ռակուրս** **1.** ← պատկերված առարկաների հեռանկարային կրճատում, **2.** փխբ.՝ → տեսանկյուն, դիտանկյուն, **ռացիոնալ** **1.** → բանական, տրամաբանական, **2.** (մաթ.) ← հաշվելի, **3.** → հիմնավոր, **4.** նպատակահարմար և այլն:

Գործածական հաճախականություն ունեցող փոխառությունները ձեռք են բերում փոխառու լեզվին հատուկ հատկանիշներ՝ ենթարկվելով բառակազմական և քերականական փոփոխությունների. կարող են բաղադրություններ կազմել, հոլովվել, հոգնակի կազմել, խոնարհվել և այլն: Այսինքն՝ տեղի է ունենում օտար բառի լեզվական յուրացում: Օրինակ՝ «*Թողեք հասարակությունը տարուներ ունենա*», «*Բացահայտվել են հաքերության բազմաթիվ դեպքեր*», «*Ամսական հավասարաչափ (անուիտետային) մարումների դեպքում վարկի մարումները հաշվարկվում են հետևյալ բանաձևի համաձայն $R = P \times r / (1 - 1 / 1 \dots$* », «*Չսպումի և ստուգման նախավերթթինգային միջոցները կարող են արդյունավետ չլինել*» (համացանց): Մերձավոր Արևելքում ապաւսկալացիայի նշանները դառնում են ակնհայտ (ՁԼՄ):

Փոխառությունների գործածության ոլորտները արդի հայերենում գործնականում անսահմանափակ են: Վերը նշվածներից բացի՝ դրանք ներառում են նաև հաղորդակցման ու կենցաղավարության այլևայլ բնագավառներ: Մենք փորձեցինք անդրադառնալ հաղորդակցման առավել ակտիվ ոլորտներում գործառվող փոխառություններին:

Այսպիսով, լեզվի զարգացումը բնականաբար ենթադրում է նաև այդ լեզվի բառային կազմի զարգացում և հարստացում: Հիմնական միջոցներից մեկը փոխառություններն են: Այդ գործընթացում էական դեր են կատարում նաև արտալեզվական գործոնները՝ հասարակական կյանքի զարգացումներ, շփումը տարբեր ժողովուրդների հետ, ներազդման մեծ դաշտ ունեցող լեզուների անխուսափելի ազդեցություններ և այլն: Զարգացման տարբեր շրջաններում այդ գործընթացը տարբեր արդյունավետությամբ է ընթանում՝ պայմանավորված գործոնների ազդեցության առավել կամ նվազ ուժով: Հայերենի արդի շրջանում այդ ուժը էապես մեծացել է: Դա առավել կամ պակաս չափով է դրսևորվում նաև ըստ հաղորդակցության ոլորտների: Ազդեցության առավել մեծ գոտիներ ունեն որոշակի բնագավառներ՝ գիտության ու տեխնիկայի որոշակի ճյուղեր՝ նորագույն տեխնոլոգիաներ և համակարգչային գործ, բժշկագիտություն, տնտեսագիտություն, իրավագիտություն, բանկային գործ, ռազմագիտություն, մշակույթի և մարզական ոլորտներ, կենցաղավարություն և այլն: Արդի հայերենի բառապաշարում

ըստ այդ ոլորտների ձևավորվում են փոխառությունների իմաստային խմբեր, որոնք տակավին ունեն անփոխարինելի դեր և կարևոր նշանակություն խոսքային բնականոն հաղորդակցությունը ապահովելու գործում:

2.3. ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բառապաշարի կատարելագործումը դրսևորվում է ոչ միայն բառեր փոխառելու և կազմելու հնարավորություններով, այլև իմաստային տեղաշարժերով: Որքան էլ բառակազմական միջոցները ճկուն գործեն, այսուհանդերձ բառապաշարի իմաստային զարգացման, այսպես ասած, ներքին այլ ռեսուրսներ նույնպես ակտիվ են և նպաստում են բառապաշարի արդիականացման ու զարգացման գործընթացներին:

Իմաստափոխության վերաբերյալ անդրադարձները շատ են⁷⁵, սակայն հարցը միշտ է քննարկության արժանի. կենսապայմանների մերօրյա զարգացումներում

⁷⁵ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965: Էդ. Աղաջան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984: Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982: Ա. Մարտիրոսյան, Բառիմաստի իմաստային զարգացումը հայերենում, ՀՊՄՀ գիտական նյութերի ժողովածու, Եր., 2014: Լ. Մելքոնյան, Բառապաշարային տեղաշարժերը արդի հայերենում (ատենախոս.), Եր., 2014: Ա. Սուրբիայան, Ք. Սուրբիայան, Մ. Տելեքյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2017 և այլն:

բառիմաստի աննկատելի փոփոխությունները կուտակվում են և դառնում բազմաթիվ իրողություններ անվանելու անխուսափելի միջոցներ: Հայտնի իրողություն է, որ բառերի իմաստային փոփոխությունները հիմնականում տեղի են ունենում բառագործածության գործընթացում և գերազանցապես փոխաբերական ու փոխանվանական գործածությունների, դրանց զանազան դրսևորումների հետևանք են:

Ձեռնպահ ենք մնում իմաստային փոփոխությունների տեսակներին, արտա- և ներլեզվական պատճառներին ու հիմունքներին անդրադառնալուց⁷⁶. դրանք հիմնավոր արտացոլված են հարցին վերաբերող գրեթե բոլոր աշխատություններում: Մի նկատառում միայն. իմաստափոխության հայտնի գործոնների շարքին պետք է դասվեն ևս մի քանիսը՝ ա) **լեզվի տնտեսման**

⁷⁶ Իմաստափոխության տեսակները չեն տրվելու նաև առանձին բառերի փոփոխված իմաստները ներկայացնելիս: Նախ՝ առավել կարևորում ենք նոր իմաստների հստակ արձանագրումը (համապատասխան օրինակներով)՝ անկախ այն հանգամանքից, թե այդ փոփոխությունները իմաստի ընդլայնման, նեղացման, թե՛ պատճենման հետևանք են, ապա՝ չենք ցանկանում նյութն անտեղի ծանրաբեռնել: Միայն նշենք, որ ներկայացվելիք բառերի հիմնական մասի նոր իմաստները **իմաստային պատճենման** հետևանք են: Սրա պատճառները առավելաբար արտալեզվական են. գերազանցապես արտերկրում ստեղծված նյութական և հոգևոր նվաճումների իրացումը լեզվական մակարդակում ուղեկցվում է նաև բառիմաստների լիակատար կամ մասնակի պատճենումներով: Թեկուզ և պատճենումներ են, այնուամենայնիվ դրանք նոր և գոյության իրավունք ստացած իմաստներ են, հետևաբար դրանց լեզվական արձանագրումը անհրաժեշտ է:

միտումը, բ) բառի գործածության տեղը՝ **միջավայրը**, գ) տվյալ միջավայրում **բառային** այնպիսի **գուգակցումը**, որի հետ կապակցելիությունն է հենց դառնում նոր իմաստի հաստատման հիմքը:

Առաջինի դեպքում խոսողը հաղորդակցության ժամանակ (հաճախ չգիտակցված) ընտրում է այնպիսի բառամիավոր, որն այդ պահին, պայմանավորված խոսքի արագ տեմպով, ամենից հարմարն է միտքն արտահայտելու համար: Անշուշտ, այստեղ դերակատարություն ունեն առարկաների արտաքին կամ ներքին նմանությունը, գործառական ընդհանրությունը և այլն, սակայն, ըստ էության, խոսքի տնտեսման միտումն է պայմանավորում բառիմաստային նոր «համընկնումը» նոր իրողությանը: Անկարևոր է ճշտել, օրինակ, թե առաջին անգամ ինչպես և կամ ով հղացավ **պատ** բառը գործածել որպես համացանցում անձնական էջը, կայքէջը (նաև անձնական էջի սկզբնամասը) մեկ բառով անվանող միավոր՝ **ֆեյսբուքյան / թվիթերի / կայքի պատ**: (Իմաստային պատճենում է): Համացանցային որոնումները ցույց են տալիս, որ բառը այս նոր իմաստով սոցիալաթակներում սկսել է գործածվել 2009 թ., ապա թափանցել է ՋԼՄ-ների լեզու և ներկայումս հանրահասկանալի է բոլորի համար, ինչպես՝ «Հեղափոխության մասին տրաֆարետները **ՖԲ-ի պատին** շպպացնելով չի...»⁷⁷, «Հայաստանի ամենահայտնի հեռուստաքննադատ Գևորգ Ալթունյանը շա-

⁷⁷ Օգտատիրոջ էջից. հղումը՝ ըստ <https://www.ilur.am/news/view/5938.html>: Այսուհետև ՋԼՄ-ների և կայքերի հղումները կտրրվեն շարադրանքում՝ փակագծերում:

շարունակում է իր **պատը** զարդանախշել ճոխ մեքենաների լուսանկարներով...» (<https://hetq.am/hy/article/5600>), «...վարակված համակարգչից օգտատիրոջ անունից կայքի **պատին**, ֆեյսբուքյան ընկերներին ու իմֆերին ուղարկվում են... հղումներ...» (<https://artsakhpress.am/arm/news/57166/>) և այլն: Կարծում ենք՝ **անձնական էջ**-ի փոխարեն **պատ** բառը գործածելիս այլ գործոններին համընթաց գործել է նաև լեզվի տընտեսման միտումը:

Երկրորդը՝ լեզվական միջավայրը, առավել ճշգրտող գործոն է. հաճախակի են բառապաշարի տարբեր շերտերի փոխներթափանցումները, ինչի հետևանքով գործածության որոշակի ոլորտում և որոշակի բառագուգորդման մեջ բառը սկսում է հանդես գալ մի նոր իմաստով: Ըստ էության, **բառային զուգակցման** գործոնը ածանցվում է հենց միջավայրային գործոնից: Կիրառության փոփոխված տարածքում բառը իմաստային մի ներքին առնչակցությամբ ձևավորում է մի նոր կապակցություն, որում բաղադրիչները փոխլրացաբար ի հայտ են բերում նոր բառագործածություն՝ նոր նշանակությամբ:

Միջավայրային գործոնի դերը առավել ընդգծվում է հատկապես կյանքի աշխույժ զարգացող ոլորտներում:

Տարատեսակ նոր իրողությունները և փնտրվող նշանակությունները արտահայտելու համար բառակերտումները բավարար չեն. իմաստային փոփոխությունները լրացնում են բացը: Կարևոր է լեզվական միջա-

վայրի ընդգրկման և տարածման աստիճանը: Սովորաբար բառերը իմաստափոխության են ենթարկվում շատ գործածվելու և տարածվելու հետևանքով: Այս առումով ներկայումս բառիմաստի՝ ամենից շատ փոփոխությունները կատարվում են տեղեկատվական տեխնոլոգիաների, քաղաքագիտական, տնտեսագիտական խոսույթներում, որոնք, նաև համաշխարհայնացման միտումներով պայմանավորված, առավել հանրայնացված են: Բառապաշարի տարբեր շերտերից երբեմն ակամա ընտրված բառամիավորներն իրենց արտառոց նշանակություններով կարճ ժամանակում տվյալ ոլորտի համար դառնում են սովորական: Օրինակ՝ գիտության ոլորտում երկար ժամանակ է գործածվում է **բանալի բառ** կայուն կապակցությունը: **Բանալի** բառի դիմաց արդի հայերենի բառարաններն արձանագրում են չորսից ինը իմաստ, այդ թվում՝ փոխաբերական, ինչպես՝ «1. Կողպեք՝ փականք բանալու հարմարանք: 2. Չանագան մեխանիզմներ գործի գցելու՝ լարելու հարմարանք: **Ժամացույցի բ.:** 3. Երաժշտական գործիքներ լարելու՝ ձգելու հարմարանք: **Դաշնամուրի բ.:**...»⁷⁸: Սակայն այդ իմաստներից ոչ մեկում **բանալի**-ն չունի արդի՝ **ցանցային որոնման միջոց / գործիք** նշանակությունը (նկատի չունենք ինֆորմատիկայում գործածվող նույնանուն տերմինը):

⁷⁸ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1, Եր., 1969: **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976: Այսուհետև բառիմաստները տրվելու են ըստ նշված բառարանների:

Ուստի հիմք ընդունելով բառամիավորի գործածության միջավայրը՝ առանձնացրել ենք արդի արևելահայերենում իմաստափոխված և ամենից հաճախ գործածվող բառերը⁷⁹: Ընտրվել են հատկապես այն ոլորտները, որոնք բնորոշվում են իմաստափոխված բառերի քիչ թե շատ առատությամբ:

Ա. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ: Բնորոշվում է գերարագ զարգացմամբ, հանրային մեծ ընդգրկումով և անընդհատ հայտնվող նորույթները անվանելու անհրաժեշտությամբ: Այսպես:

ԱՐԿՂ – ունի հետևյալ իմաստները՝ *տախտակից սարքած մեծ քառանկյունի աման՝ սնդուկ՝ զանազան բաներ մեջը լցնելու և պահելու համար, սեղանի դարակ, գզրոց, ոչ մեծ տուփ՝ զարդեր և զանազան մանր, տուփ, զանձարկղ* և այլն: Միանգամայն նոր իմաստ ունի **մուտքի արկղ** կապակցության մեջ. նշանակում է փոստարկղ՝ **էլնամակներ հավաքելու տեղը**, ինչպես՝ նաև **տարատեսակ ֆայլեր պահելու տեղ՝ արկղ՝ թղթապանակ**: Օրինակ՝ «Ձեր համակարգչի միջոցով Gmail **մուտքի արկղ** ստեղծելու կարգը պահանջում է, որ դուք բացեք ձեր սիրած ինտերնետային զննարկի-

⁷⁹ **Արդի** տերմինը գործածում ենք ոչ ավանդական նշանակությամբ. նկատի ունենք վերջին երկու տասնամյակը: Օրինակները քաղված են ՋԼՄ-ներից, մասնագիտական նորագույն աշխատություններից, երբեմն նաև բանավոր խոսքից: Նոր իմաստները մեծ մասամբ բացատրվում են համատեքստի հիման վրա:

*Աստղանիշով տրվում են այն բառերը, որոնք իմաստափոխվել են տարբեր ոլորտներում:

չը» (<https://paradacreativa.es/hy/como-crear-una-bandeja-de-entrada-de-gmail/>), «**Թղթապանակը** արկղ է, որի մեջ տեղադրվում են ֆայլերը» (<https://hamakargich.ru/norek.php?harc=fayl>):

ԳՈՐԾԻՔ* – այս բառն ունի ուղիղ և փոխաբերական մի քանի իմաստներ՝ *որևէ աշխատանք կատարելու սարք, նվագարան, ուրիշի ազդեցության ենթարկված և նրա թելադրանքով գործող մարդ, որևէ բան իրականացնելու միջոց՝ հնարավորություն*: Վերջին մեկ-երկու տասնամյակներում այս բառը լայնորեն գործածվում է տարբեր խոսույթներում: Տեղեկատվական տեխնոլոգիաների տերմինաբանության մեջ գործիք բառը ունի տարբեր նշանակություններ: Դրանով անվանվում են սպասարկող միջոցները, ծրագրերը, կարգավորման միջոցները և այլն: Օրինակ՝ «...թե ինչպես են աշխատակիցները հատուկ համակարգի ներքին կարգավորումների համար ստեղծված **գործիքներով** մուտք գործել օգտատերերի անձնական տվյալների տիրույթ» (<https://news.cybergates.org/am/>), «Microsoft ընկերության Intune for Education **գործիքը** շուտով հասանելի կլինի Հայաստանի դպրոցների համար» («Հրապարակ»):

ԳՑԵԼ – արտահայտում է մոտ երկու տասնյակ իմաստներ-և բաղադրում է տասնյակ դարձվածքներ, ինչպես՝ *նետել, շարտել, ձեռքից բաց թողնել, անփութորեն դնել, վրան առնել՝ ծածկել, փռել, երկարացնել, ձեռք գցել, առաջ գցել, աչք գցել, խոսք գցել, սեղան գցել, վիճակ գցել* և այլն: Այս ոլորտում այն գործածվում է **որևէ կայքում տեղեկատվություն, նկար, տեսանյութ**

տեղադրելու նշանակությամբ, ինչպես՝ **նկար գցել, գիրք գցել** և այլն: Առավելաբար խոսակցական երանգ ունի: Օրինակ՝ «**Նկարներ է գցում** ֆեյսբուք, մարդկանց է մատնացույց անում....» (օգտատիրոջ էջից), «**Նկարը գցել** այստեղ՝ լուսանկարի վանդակում» (<https://www.araratbank.am/hr/index.php>), «Ցնցող **տեսանյութ է գցել** իր յութուբյան էջում» (օգտատիրոջ էջից):

ԴՆԵԼ – կրկին բազմիմաստ բառ է, ունի մոտ երեսուն իմաստ, դարձվածային միավորների բաղադրիչ է, ինչպես, օրինակ՝ *որևէ առարկա տեղավորել՝ գետեղել ուրիշ առարկայի վրա կամ մեջ, պահպանման տալ, մատուցել, ներկայացնել, նստեցնել, ավելացնել, թաղել, բանակ դնել, բույն դնել, գին դնել* և այլն: **Գցել** բայի նման ձեռք է բերել նույն նշանակությունը՝ **որևէ կայքում տեղեկատվություն, նկար, տեսանյութ տեղադրել**: Այս իմաստով առավելաբար գործածվում է խոսակցական ոճում և կայքէջերի լեզվում: Օրինակ՝ «Նոր երգս **դրել եմ** յութուբում....» (օգտատիրոջ էջից), «Ինչպես լուսանկարը **դնել** հիմնական էկրանին....» (<https://newtravelers.ru/>):

ԴԱՇՏ* – արձանագրված է ութ իմաստ՝ *հարթավայր, մշակովի տարածություն՝ հանդ, արոտավայր, հողատարածություն, ասպարեզ, տարածությունը, որի սահմաններում գործում է որևէ ուժ* և այլն: ՏՏ ոլորտում այս բառը գործածվում է այլ նշանակությամբ՝ **տեղեկություն լրացնելու տող, տվյալների դաշտ, աղյուսակների դաշտ, թվային դաշտ**, ինչպես՝ «Էլեկտրոնային փոստի հաղորդագրություն առաքելու պատուհանի Сс (копия) **դաշտում** կարելի է մի քանի հաս-

ցն ներմուծել...» (Ս. Ավետիսյան, Ս. Դանիելյան, Ինֆորմատիկա, 8-րդ դասարան, 2013), «Start գլխավոր մենյուի որոնման **դաշտում** ներմուծեք ձեր հիշած ֆայլի անունը...» (ն. տ.):

ԶՐՈՒՑԱՐԱՆ – տրվում են *գրուցելու տեղ, գիրք, տաղավար* իմաստները: Ներկայումս **գրուցարան**-ը **չաթ** բառի համարժեքն է, որը, ըստ էության, **հաղորդակցման էլեկտրոնային հարթակ** է: Օրինակ՝ «WatsApp-ի **գրուցարանում** այժմ կարելի է նայել Instagram-ի և Facebook-ի տեսահոլովակները» (<https://ittrend.am/2018/05/09/whatsapp-11/>), «Նախարարի ասուլիսից հետո մոտավորապես 1000 նամակ ենք ստացել, առցանց **գրուցարանի** միջոցով պատասխանել ենք մոտ 700 նամակներին» (<https://www.aravot.am/2020/03/19/1100884/>):

ԷՋ – ունի *գրքի, տետրի էջ, կյանքի որևէ հատված, դար, նոր շրջան, կող, երես, կյանքի դրվագ, անցք* և այլ նշանակություններ: Սրանց ավելացել են նաև երկու նոր իմաստներ՝ **կայքէջ** և **անհատական էջ** սոցցանցերում: Օրինակ՝ «28-ամյա կնոջը մեղադրանք է առաջադրվել՝ նախկին ամուսնու սոցիալական կայքի **անհատական էջ** ապօրինի մուտք գործելու և տեղեկությունը պատճենահանելու համար» (<http://investigative.am/news/view/sockayqi-anhatakan-ej-aporini-mutk-gorcel.html>), «Կազմակերպությունն ինքն է որոշելու, թե իր պաշտոնական **էջն** ինչ բաժիններ ու բովանդակություն ունենա, և **էջի** պատին ինչպիսի տեղեկատվություն տարածվի» (<https://www.dasaran.am/apps/page/intro>):

ԹՂԹԱՊԱՆԱԿ – ունի *պորտֆել, թղթածրար, գրպանի պահանակ՝ դրամ, զանազան թղթեր պահելու համար* նշանակություններ: Այս ոլորտում գործածվում է **տարբեր ֆայլեր (նիշքեր) պահելու տեղ** իմաստով, ինչպես՝ «Այդ խմբերն էլ, որոնք պարունակում են այս կամ այն նպատակին ուղղված ֆայլերի անվանումները, կոչվում են **թղթապանակներ (Folder)**» (<https://www.imdproc.am/>):

ԹՎԱՅԻՆ* – նշանակում է *թվերին հաստուկ, թվով արտահայտվող՝ նշանակվող*: Ներկայումս բառը, ընդլայնելով իր նշանակությունը, ձեռք է բերել գործածության լայն հնարավորություններ: Հաշվողական տեխնիկայի բնագավառում այս տերմինն ունի *ինֆորմացիան էլեկտրոնային համակարգերի միջոցով երկակի՝ մեկերի և գրոների կողի փոխարկող* իմաստը, ինչպես՝ **թվային համակարգեր, թվային փոխակերպումներ**: Մակայն այն ապատերմինացել է. առօրյա խոսքում ձեռք է բերել նաև այլ նշանակություններ՝ **նորագույն, լավ, կատարելագործված՝ թվային տնտեսություն, թվային սարք, թվային հեռուստատեսություն** և այլն: Օրինակ՝ «**Թվային հատությունները** կարևոր նշանակություն ունեն ոչ միայն ՏՀՏ մասնագետների կամ **թվային փոխակերպում** վերապրող ընկերությունների համար, այլև արագորեն կենսական նշանակություն են ստանում յուրաքանչյուր անհատի համար, ովքեր ցանկանում են բարեհաջող կերպով մաս կազմել **թվային տնտեսությանը** և *հասարակությանը*» («Իրատես»):

ԺԱՊԱՎԵՆ – մի քանի իմաստներին զուգահեռ (*մազե-*

ըը կապելու կտորի նեղ շերտ, մեկուսիչ ժապավեն և այլն)՝ բառը ձեռք է բերել մի այլ նշանակություն ևս: **Ժապավեն** անվանում են **որևէ կայքէջի լրահոսը կամ սոցիալական էջի օրվա գործողությունների ամբողջությունը**: Օրինակ՝ «Գործակալության օրվա **ժապավենը** կազմված է լինում մոտավորապես 180 լուրից, որոնք արտացոլում են և՛ տեղական, և՛ միջազգային իրադարձությունները» (<https://armenpress.am/>), «Բավական է նայել օգտատիրոջ էջի գործողությունների **ժապավենը**, և ամեն ինչ պարզ է» (<https://media.am/>):

ԿԱՐԳԱՆՈՍ – բառարանն արձանագրում է մեկ իմաստ՝ *նշանաբան*: Այս տիրույթում բառը գործածվում է հետևյալ նշանակությամբ. սոցիալական կայքերում օգտատիրոջ ընտրած կամ գրած մի միտք է, արտահայտություն (ստատուս. օգտատերը այն կարող է անընդհատ թարմացնել), որը բոլորովին էլ նշանաբանի և կամ բուն կարգախոսի իմաստ ու գործառույթ չունի: Այն տվյալ պահին օգտատիրոջ ապրումն է, մտորումը, առցանց տիրույթի ընկերներին ուղղված կոչ, մեջբերում որևէ հայտնի անձի խոսքից, նշանային և տեքստային միջոցների համադրություն և այլն: Եվ հենց սրանով էլ էապես տարբերվում է **կարգախոս**-ի ունեցած նշանակությունից: Օրինակ՝ «Մարդը ստեղծված է այն գրքերից, որոնք կարդացել է». սա ֆեյսբուքյան «Գրքամոլ» էջի **կարգախոսն** է...» (<https://grqamo.l.am/article/aravot-eritasardakan/>), «Օրվա մեջ 10 ստատուս (**կարգախոս**) փոխելու փոխարեն մի քիչ քեզ փոխիր» (օգտատիրոջ էջից):

ԿԻՄՎԵԼ – *կես դառնալ, կես արվել, բաժանվել* իմաստ-

ներին ավելացել է նորը. այս բայով անվանում են սոց-
ցանցերի օգտատերերի՝ **տարբեր կայքերից և էջերից**
իրենց էջերում նյութեր, տեղեկատվություն դնելը՝ կի-
սելը: Օրինակ՝ «ՀՀ արտակարգ դրության պարես
Տիգրան Ավինյանը ֆեյսբուքյան իր էջում **կիսվել է տե-**
սանյութով» (<https://www.aravot.am/2020/05/16/1111900/>), «Երգի վրաստանյան տարբերակով **կիսվել են** հա-
զարավոր օգտատերեր» (<https://www.aliq.ge/>):

ՀԱՍՑԵ – ունի երկու նշանակություն՝ *նամակի՝ ծան-
րոցի և այլնի առաքման տեղն ու ստացողը ցույց տվող*
մակագրություն, մեկի բնակության տեղը: Նշվածնե-
րին ավելացել է **էլեկտրոնային հասցե** նշանակությու-
նը: Օրինակ՝ «Էլեկտրոնային փոստով հաղորդագրու-
թյուն առաքելիս շատ կարևոր է **էլեկտրոնային հաս-**
ցեի ճիշտ ձևակերպումը» (<https://www.imdproc.am/>):

ՀԱԹԱԿ* – բառարաններն արձանագրում են մեկ ի-
մաստ՝ *փոքրիկ տափարակ տեղ՝ սրահակ:* Այս բառի
իմաստը զգալիորեն ընդլայնվել է. տարբեր ոլորտնե-
րում այն գործածվում է **միջավայր, տարածք, ցանց,**
ուրրտ նշանակություններով՝ **սոցիալական / համա-**
ցանցային / վիրտուալ/ էլեկտրոնային / թվային հար-
թակ, ինչպես՝ «Սոցիալական ցանց՝ **համացանցային**
հարթակ, ծառայություն կամ կայք, որը նախատեսված
է սոցիալական փոխհարաբերությունների կառուց-
ման համար» (<https://hy.wikipedia.org/wiki/>), «Դուք
մուտք եք գործել ազդարարման միասնական **էլեկտ-**
րոնային հարթակ» (<https://www.azdararir.am/am/>), «Աշ-
խարհը գրաված **սոցիալական հարթակների** շրջա-
նում իր ուրույն ու յուրահատուկ տեղն է սկսում

գրադեցնել all.me-ն. նորարարական, զարգացող **թվային հարթակ**, որն իր մեջ ներառում է սոցիալական ցանց (meNetwork), վճարային համակարգ (mePay) և շուտով նաև **առևտրային հարթակ (meMarket)**» (<http://www.panorama.am/am/news/2019/04/29/All-me/2107336>):

ՇՏԵՄԱՐԱՆ – արտահայտում է *հացահատիկներ՝ ալյուր և այլն պահելու շենք՝ շինություն, պահեստ, ամբար, որևէ բանով շատ հարուստ վայր* իմաստները: Բառիմաստի ընդլայնման միջոցով այն վերջին մի քանի տասնամյակներում գործածվում է նաև **համացանցում որևէ ոլորտի վերաբերյալ տեղեկությունների բազա՝ պահեստ** նշանակությամբ: Հիմնական բառագուգորդումներն են՝ **թվային / էլեկտրոնային / տվյալների / ձևաթղթերի / էլեկտրոնային պաշարների շտեմարան** և այլն: Օրինակ՝ «Հաստատել առևտրի իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենաների միջև ցանցային կապուղիների միջոցով համակարգչային տեղեկատվական **տվյալների շտեմարանի** ներդրման և շահագործման կարգը՝ համաձայն հավելվածի» (<https://www.gov.am/files/meetings/2009/1417.pdf>), «Գիտական գրադարանը, մատուցելով ավանդական ծառայություններ, պատրաստել է սեփական **էլեկտրոնային շտեմարան...**» (<https://hy.wikipedia.org/wiki/>):

ՊԱՏՈՒՀԱՆ* – *լուսամուտ, պատուհանի գոգ, երդիկ, պատի մեջ սարքած նեղ պահարան, դասախոսի, ուսուցչի պարապ ժամ* և այլ իմաստներին հավելվել է այլ՝ տերմինային նշանակություն. «**Համակարգչային**

պատուհանը էկրանի վրա շրջանակի մեջ առնված հատուկ կառուցվածքով տիրույթ է, որը նախատեսված է համակարգչային օբյեկտներ ներառելու և դրանց հետ որոշ գործողություններ կատարելու համար» (<https://www.imdproc.am/>):

ՄԱԼԻԿ – իմաստներն են՝ *փոքր սալ, սալաձև կտոր, զանազան մթերքների քառանկյունի կտոր*: Համակարգչային (ոչ միայն) ոլորտում լայն գործածություն ունի նոր իմաստով՝ **մայրական / մայր սալիկ՝ դետալ, որին միացվում են համակարգչի բոլոր լարերը** և այլն, ինչպես՝ «Մայրական սալիկի վրա կան զանազան գծեր և ամրակցումներ...» (<https://edgars2014.wordpress.com/>):

ՄԵՂԱՆ/ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԵՂԱՆ – արձանագրված են մոտ մեկ տասնյակից ավելի իմաստներ՝ *սեղան, կերակուր, հացկերույթ, զոհարան, (մաթ.) քառանկյուն* և այլն, բազում դարձվածքների (նաև այլ կայուն բառակապակցությունների) բաղադրիչ է՝ **սեղան նստել, սեղանը տաքացավ, սեղան զցել, սեղանի թենիս** և այլն: Նշվածներից բացի՝ այս ոլորտում համակարգչի, այսպես ասած, հիմնական էկրանը անվանվում է սեղան կամ աշխատանքային սեղան. «Օպերացիոն համակարգի բեռնավորումից հետո մոնիտորի էկրանին բերվող միջավայրն անվանում են **աշխատանքային սեղան** (Desktop)» (<https://www.imdproc.am/>):

ՑԱՆՑ* – բազմիմաստ բառ է. բառարաններում նշվում է տասնհինգ իմաստ, որոնցից են՝ *ուռկան, մետաղալարերից հյուսվածք, նույնպիսի հյուսվածքով պարկ՝*

պայուսակ, միմյանց ներհյուսված միատեսակ բաների ցանցանման ամբողջություն, ճանապարհների ցանց, ուսումնական հաստատությունների ցանց և այլն: Այս իմաստներին զուգահեռ բառը գործածվում է նաև **համացանց / համակարգչային ցանց** և **վիրտուալ մասնավոր ցանց** նշանակություններով, ինչպես՝ «Համացանց, **համակարգչային ցանցերի** փոխկապակցված համաշխարհային համակարգ, որն օգտագործում է համացանցային արձանագրության (TCP/IP) հավաքակազմը» (<https://hy.wikipedia.org...>), «**Վիրտուալ մասնավոր ցանցը**՝ VPN-ը, այն ծառայությունն է, որը ստեղծում է ձեր սարքից կողմնորված կապակցություն դեպի VPN սերվեր...» (<https://www.webhostingsecretrevealed.net/hy/the-a-to-z-vpn-guide/>):

Այս բառարմատով ընդհանրապես SS ոլորտում հաճախ են նոր բառեր ու կայուն կապակցություններ կերտվում, ինչպես՝ **ցանցային, ցանցահեն, առցանց, ցանցային սպասարկում / ծառայություններ / օպերատոր** և այլն:

ՓԱԹԵԹ* – մի քանի իմաստներին (*կապոց, ծրար, փաթույթ, տրցակ*) ավելացել է մի ուրիշ նշանակություն ևս՝ **մի քանի ծառայությունների համակցություն**, ինչպես, օրինակ՝ **ինտերնետ-փաթեթ, սակագնային փաթեթ**. «ՎիվաՄեյը ներկայացնում է նոր **ինտերնետ-փաթեթ** հետվճարային բաժանորդների համար» (mts.am), «Նոր «ՄԱՐԶԱՅԻՆ» **սակագնային փաթեթ** հատուկ ՄԱՐԶԵՐԻ բնակիչների համար» (www.rtarmenia.am):

ՔԱՇԵԼ – հինգ տասնյակից ավելի իմաստների կողքին (*ձգել, քաշ տալ, ամփոփել, հավաքել, իր հետևից տանել, հեռացնել, դուրս բերել, ձգելով հանել, կլանել, անց կացնել մի բանի վրա* և այլն) բառը մոտ երկու տասնամյակ է գործածվում է նաև **համացանցից (նաև տեխնիկական այլ միջոցներից) որևէ նյութ ներբեռնել** նշանակությամբ: Իհարկե, արդի հայերենում այդ գործողության համար ստեղծվել է հենց **ներբեռնել** նորակազմությունը, որը հաստատուն տարածվել և գործածվում է գրական խոսքում: Մակայն խոսակցական լեզվում այս իմաստի համար հաճախ կիրառվում է **քաշել**-ը, ինչպես՝ «Շատ եմ խնդրում, կասե՞ք՝ որտեղից **քաշեմ** գիրքը» (օգտաստիրոջ էջից), «Նոր երգերը կարող եք **քաշել** հետևյալ հղումով» (ն. տ.):

Բ. Քաղաքագիտական ոլորտ: Ողջ աշխարհում բացառիկ արագությամբ զարգանում է քաղաքական խոսույթը: Ինչպես մի առիթով նշել ենք, սա խորապես համաշխարհայնացման և հասարակական ու քաղաքական հարաբերությունների զգալի տեղաշարժերի հետևանք է: Քաղաքական ամենօրյա զարգացումները, ԶԼՄ-ների ակտիվությունը, ինչպես նաև սոցիալաթակներում հանրության մեծ ներգրավվածությունը այս ոլորտին վերաբերող քննարկումներում մեծ ազդեցություն են ունենում լեզվական զարգացումների, մասնավորապես բառապաշարի վրա: Այստեղ հաճախ է անհրաժեշտություն լինում նոր իրողություններ անվանելու: Բացի այդ՝ բանավոր խոսքի իրացումներում ասելիքը զորացնելու, խոսքն առավել պատկերավոր, ազդեցիկ ձևակերպելու և այլ նպատակ-

ներով քաղաքական խոսույթում հաճախ են կատարվում բառային անսովոր գուգակցումներ, ինչի հետևանքով բառերը ժամանակի ընթացքում իմաստափոխվում են և կայուն գործածվում նոր իմաստներով: Այսպես:

ԱԼԳՈՐԻԹՄ – ինչպես հայտնի է, տերմինը գործածվում է մաթեմատիկայում և ինֆորմատիկայում: Այստեղ ալգորիթմը.... հաշվարկային քայլ առ քայլ գործընթաց է: Կիրառվում է հաշվարկներում, տվյալների մշակման և մտահանգումների ավտոմատացման ժամանակ: Ավելի ճշգրիտ, ալգորիթմը ֆունկցիայի հաշվարկման որոշակի լավ սահմանված արդյունավետ մեթոդ է⁸⁰: Նշվում է նաև, որ պարտադիր չէ՝ ալգորիթմը անպայման առնչվի ծրագրավորմանը: Այն, օրինակ, կարող է լինել ուտեստի բաղադրատոմս⁸¹:

Բառը սկսել է լայնորեն գործածվել նաև քաղաքականության և քաղաքագիտության մեջ ընդհանրապես քայլերի հաշվարկված գործընթաց / ուղենշային գործողությունների համակարգ նշանակությամբ, ինչպես՝ «Մեր քաղաքական գործիչները հասկացան, որ քաղաքականությունը խաղ չէ՝ զրոյական արդյունքով: ...Ըստ բանախոսի՝ գործողությունների ալգորիթմը հետևյալն է. համագործակցություն, որը ստեղծում է վստահություն, վստահությունից դեպի զարգացում, զարգացումից դեպի առաջընթաց» (<https://www>.

⁸⁰ Այս մասին տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%AC%D5%A3%D5%B8%D6%80%D5%AB%D5%A9%D5%B4>

⁸¹ Տե՛ս նույն տեղը:

panorama.am/am/news/2008/07/21/markarov/1312366),
«Քաղաքական տեխնոլոգիաները հասկացությունը:
Տեխնոլոգիաները որպես քաղաքական գործունեության ուղենիշ (**ալգորիթմ**)» (<https://paara.am/wp-content/uploads/2012/06/Qaxaqakanutyanyan-tesutyun.pdf>):

ԱՅՑԵՔԱՐՏ* – նորակազմություն է, ստեղծվել և ակտիվ գործառվում է վերջին 2-3 տասնամյակներում: Նշանակում է *անձի կամ հիմնարկի մասին կոնտակտային համատեղ տեղեկությունների (անուն-ազգանուն անվանում, հասցե և այլն) կրիչ*: Կարճ ժամանակում բառիմաստն ընդլայնվել է: Ներկայումս այդպես անվանում են նաև որևէ ոլորտում **այն տարբերակող, յուրահատուկ հատկանիշը, որով այդ առարկան կամ իրողությունը առանձնանում է և հայտնի է**: Իհարկե, այս իմաստով գործածվում է ոչ միայն քաղաքագիտական ոլորտում. այստեղ պարզապես առավել հաճախակի է հանդիպում: Օրինակ՝ «...մեր արտաքին քաղաքականության **այցեքարտը** ժողովրդավարությունն է» (<https://www.detector.am/posts/democracy>), «Մշակույթը մեր երկրի **այցեքարտն** է եղել բոլոր ժամանակներում»:

ԱՎԱԳԱՆԻ – արդի հայերենի բառարաններում այս բառը տրված է **պատմ.** նշումով, այսինքն՝ հնաբանություն է. նշանակել է *բարձր ազնվականների դաս, պաշտական մեծամեծեր*: Սակայն լեզվի արդի փուլում բառը վերաիմաստավորվել է. դրանով անվանվում է **տեղական ինքնակառավարման մարմինը**: Օրինակ՝ ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ **ավագանին** ընտրվում է ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և

կազմված է 65 անդամից» ([https:// www.yerevan.am/am/avagani/](https://www.yerevan.am/am/avagani/)):

ԳԵՏԻՆ* – *երկրի երեսի շերտը, ցամաք, մակերևույթ, երկրագունդ, հող, հատակ, հիմունք* իմաստներին զուգահեռ՝ բառը կիրառվում է նաև նոր նշանակությամբ: Տարբեր բառային զուգորդումներում ձեռք է բերել **պատճառ (շարժառիթ), հարթակ** իմաստները, ինչպես՝ «...վերջին ժամանակաշրջանում հետևելով ՖԲ էջերում տեղի ունեցող մարաթոնին՝ *քաղաքական և ազգային գետնի* վրա տեղի ունեցող զզվոտոցին...» (<https://www.yerkir.am/news/view/197670.html>), «Ցանկացած էական քաղաքական միջամտության նշանակության տեսանկյունից արդիության (modernity) մեջ տարածված համոզմունք կար, որ առաջինը պետք է տեղի ունենար *սոցիալական գետնի* վրա...» (<http://ysu.am/files/02NMkrtchyan-1503910563-.pdf>): Այս առումով իմաստափոխված բառի գործածությունները գրեթե նույնանում են **հող** բառի փոխաբերական կիրառություններին (դավաճանության հողի վրա, քաղաքական հողի վրա և այլն), ինչը արևմտահայերենի ազդեցության արդյունք է:

ԴԱՇՏ* – այս բառի իմաստներին անդրադարձել ենք. քաղաքական խոսույթում գործածվում է **ասպարեզ, ոլորտ, միջավայր** նշանակություններով՝ **քաղաքական դաշտ**: Տվյալ ոլորտը անվանող բառի հետ զուգորդվելով՝ այս իմաստով լայնորեն գործածվում է ամենատարբեր ոլորտներում՝ **օրենսդրական / իրավական / կրթական / տնտեսական / ներդրումների / հոգեբանական / միջանձնային հարաբերությունների**

դաշտ և այլն: Բերենք մի քանի օրինակ՝ «Տիգրան Սարգսյանը առաջիկայում հնարավոր է՝ վերադառնա ՀՀ *քաղաքական դաշտ*՝ նոր ուժի տեսքով» (<http://politik.am>), «Հայաստանի տնտեսությունն ի վիճակի է տարեկան 4-4.5 միլիարդ դոլարի *ներդրումների դաշտ* ապահովել» (<https://artsakhpress.am/>), «Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրներն են՝ ներդրումային միջավայրի բարելավումը, *օրենսդրական դաշտի* կատարելագործումը...» (<https://www.mfa.am/hy/doing-b-usiness-in-armenia/>):

ԽՈՂՈՎԱԿ – բառարանում նշվող իմաստներն են՝ *զլանաձև, սնամեջ առարկա, որ ծառայում է իբրև հեղուկատար, գազատար և այլ հարմարանք, փող, փողրակ, թիթեղյա նույնպիսի հարմարանք վառարանի ծխնելույզի և այլնի համար, մարմնի սնամեջ անոթ՝ փող, բույսի ցողունի սնամեջ տարածություն* և այլն: Նշվում են նաև *ուղի, անցում* իմաստները, որոնք փոխաբերաբար գործածվում են միայն արևմտահայերենում: Քաղաքական խոսույթում վերջին մեկ-երկու տասնամյակում **խողովակ**-ը (նաև՝ **դիվանագիտական խողովակ**) ստացել է իմաստային նոր նրբերանգ: Այն նշանակում է **քաղաքական, դիվանագիտական որևէ հարցի քննարկման, կարգավորման ուղի**, որը հիմնված է նաև ներքին՝ չերևացող հարաբերությունների վրա: Օրինակ՝ «...ունենք բավականին լավ եղանակներ, ձևաչափեր և **խողովակներ**՝ աշխատելու միմյանց հետ այս բազմաթիվ զգայուն օրակարգերի շուրջ» (<https://www.mfa.am/hy/inter-views-articles-and->

comments/2019/05/11/armn2/9548), «Դրանց ընդունումը կանխելու նպատակով այս օրերին Երևանն օգտագործում է ոչ միայն իր դիվանագիտական **խողովակները**, այլև Սփյուռքի ռեսուրսները, ինչպես նաև խորհրդարանական դիվանագիտության հնարավորությունները» (<https://arminfo.info/index.cfm?objectid=11648DA0-B85D-11E5-81B80EB7C0D21663>):

ԽՈՍՆԱԿ – ունի մի քանի իմաստներ, որոնց մեծ մասը տրվում է **հնց**. նշումով՝ *խոսուն, ճարտար, լավ հրնչվող՝ նվազվող, սոխակ, աքաղաղ* և այլն: Մոտ երկու տասնամյակ է՝ այս բառը լայնորեն գործածվում է մի քանի նշանակություններով՝ **ՀՀ Ազգային ժողովի նախագահ՝ խոսնակ, ինչպես նաև մամուլի քարտուղար: Օրինակ՝ «ՀՀ Ազգային ժողովի նախագահը ՀՀ Ազգային ժողովի խոսնակն է»** (<https://hy.wikipedia.org>), «ԱԳ նախարարության մամուլի **խոսնակ** Աննա Նաղդալյանի ասուլիսը» (<https://hetq.am/hy/article/111019>):

ՀԱՐԹԱԿ* – այս ոլորտում նույնպես բառը հանդես է գալիս **միջավայր, ոլորտ** նշանակությամբ, ինչպես, օրինակ՝ **քաղաքական հարթակ**՝ «Կարծում եմ՝ իշխանությունը պետք է մեր հասարակությանը պարտադրի մրցակցային **քաղաքական հարթակ** ձևավորել» (<https://www.1in.am/2672451.html>), «Ցուցարարները առաջարկում են հոսանքի թանկացման դեմ պայքարը տեղափոխել **քաղաքական հարթակ**» (<https://news.am/arm/news/275695.html>):

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ – աշխարհագրության, երկրաբանության, օդերևութաբանության (ոչ միայն) մեջ

գործածվող տերմին է: **Քարտեզ** բառը այստեղ գործածված է իր բուն նշանակությամբ: Վերջին տարիներին կապակցությունը ձեռք է բերել նոր և ինչ-որ առումով անսպասելի նշանակություն. **Ճանապարհային քարտեզ** զուգորդությունը քաղաքական խոսույթում վերածվել է կայուն կապակցության՝ նշանակելով **հաջորդական գործողությունների / քայլերի մշակված ծրագիր**: Կիրառության այս դաշտից էլ նոր նշանակությամբ ներթափանցում է այլևայլ ոլորտներ: Օրինակ՝ «Հայաստանում նախատեսվում է մշակել ներդրումային քաղաքականության բարելավման **ճանապարհային քարտեզ**» (<https://finport.am/fullnews.php?id=40128&lang=1>), «Այս փաստաթուղթը հանդիսանում է Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) միացյալ գործողությունների ծրագիր կամ **ճանապարհային քարտեզ**...» («ԵՄ – Հայաստան Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության Համաձայնագիր: **Ճանապարհային քարտեզ**», Եր., 2018):

ՃԵՂՔՈՒՄ* – բառարաններում տրվում են **ձեռքել, ձեռքվել** իմաստները. դրանք են՝ *պատռել, երկու մասի բաժանել, կտրել, անցնել, պառակտել*: Քաղաքական խոսույթում բառը վերաիմաստավորվել է՝ ստանալով **երկարատև և դժվար աշխատանքից հետո կարևոր արդյունքների ձեռքբերում** իմաստը: Հաճախ գործածվում է **ձեռքում / ձեռքում մտցնել բանակցություններում** բառակապակցությունը, ինչպես՝ «Մեպտեմբերին սպասվող Սարգսյան-Ալի հանդիպումը

կարող է **ճեղքում մտցնել բանակցություններում**» (<https://factor.am/10303.html>), «ԱՄՆ-ն Իրանի միջուկային ծրագրի շուրջ նոր բանակցություններում **ճեղքում** չի ակնկալում» (<https://armenpress.am/arm/news/740582.html>):

ՊՍՏՈՒՀԱՆ* – վերը տրված իմաստներից և իմաստային փոփոխությունից բացի՝ քաղաքական, իրավական և այլ ոլորտներում նույնպես արձանագրվում է նոր իմաստի հավելում՝ հարցի ամբողջական լուծում վարչական մեկ օղակում՝ **մեկ պատուհանի սկզբունք / համակարգ / քաղաքականություն**, ինչպես՝ «Սոցիալական ապահովության ոլորտում նույնպես կկիրառվի **մեկ պատուհանի սկզբունքը**» (<https://www.gov.am/am/press-conference/item/9386/>), «...մշակվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքը ձևավորելու փուլում կառուցապատողների կողմից տեխնիկական պայմանների ստացման (կոմունալ ծառայությունների միացման) համար **«Մեկ պատուհանի»** համակարգի ներդրման հետ կապված օրենսդրական փոփոխությունների փաթեթ» (<https://www.gov.am/files/library/74.pdf>):

ՍՏՎԵՐՍՅՒՆ* – *ստվերին հատուկ, աղոտ, նուրբ* իմաստներից գատ՝ այլ նշում չկա բառարաններում: Քաղաքագիտության մեջ գործածվում է **ստվերային կառավարություն** կայուն կապակցությունը: Բացատրվում է հետևյալ կերպ. ընդդիմադիր կամ իշխանափոխություն նախաձեռնող քաղաքական ուժը ձևավորում է երկիրը կառավարող պաշտոնյաների իր կազմը: Օրինակ՝ «Նախագահական ընտրությունների

արդյունքները վիճարկող ընդդիմադիր Բաֆֆի Հովհաննիսյանի աջակիցները Երևանի Ազատության հրապարակում.... հանրային քննարկում անցկացրին, որի ժամանակ ընդդիմադիր առաջնորդին առաջարկեցին **ստվերային կառավարություն** կազմել» (<https://www.azatutyun.am/a/24931516.html>), «...մենք վարչապետի մեր թեկնածուին առաջադրում ենք և նրան լիազորում ենք ձևավորել **ստվերային կառավարություն**, որպեսզի առավել կոնկրետացնենք իշխանափոխությանն ուղղված.... քաղաքական գործընթացը» (<https://www.armtimes.com/hy/article/92806>):

ՓԱԹԵԹ* – այս ոլորտում նույնպես ձեռք է բերել նոր իմաստ: Այն նշանակում է հասարակության որոշակի շերտերին հատկացվող **համախումբ միջոցառումների ամբողջություն**: Օրինակ՝ «Սոցիալական **փաթեթը** ՀՀ պետական մարմիններում և կրթության, մշակույթի, գիտության ու սոցիալական պաշտպանության ոլորտների պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշխատողների և (կամ) նրանց անմիջական ընտանիքների անդամների առողջական կրթական և այլ խնդիրների ապահովման միջոցառումների համախումբ է՝ աշխատողների մոտիվացման և աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով» (https://iravaban.net/1971_65.html):

ՓԱԹԵԹԱՅԻՆ* – ունի *փաթեթին հատուկ, փաթեթի համար օգտագործվող, փաթեթման գործով զբաղվող* իմաստները: Այս բառը՝ որպես տերմին, փոփոխված իմաստով լեզվագործածության մեջ է մտել 1997 թ. և նշանակում է արցախյան հակամարտությունը կար-

զավորող մեթոդաբանություններից մեկը, այսինքն՝ **փաթեթային տարբերակը** միաժամանակ կարգավորվում է ն՛ կարգավիճակի, ն՛ հակամարտության հետևանքների խնդիրները: Մակայն **փաթեթային** բառը չմնաց միայն խոսքային այս միջավայրում. որպես **մի քանի իրողությունների համախումբ** անվանող միավոր՝ ներկայումս գործածվում է քաղաքական տարբեր հարթակներում, ինչպես՝ «**Փաթեթային** փոփոխություններով սահմանվում են Երևանի քաղաքապետարանի մրցութային և ատեստավորման հանձնաժողովների ձևավորման առանձնահատկությունները...» ([http://www.parliament.am/news.php?catid=2&NewsID=3308&year=%7B\\$Year%7D&month=%7B\\$Month%7D&day=%7B\\$Day%7D](http://www.parliament.am/news.php?catid=2&NewsID=3308&year=%7B$Year%7D&month=%7B$Month%7D&day=%7B$Day%7D)), «Սոցիալական վիճակի բարելավման համար պետք է ներդրվեն **փաթեթային** ծառայություններ» («Հրապարակ»):

Գ. Տնտեսագիտական ոլորտ: Համաշխարհային տարատեսակ զարգացումներում գերակա ուղղություն է, աչքի է ընկնում նորանոր ծավալումներով: Այս ոլորտը ևս բավականին արագ համալրվում է նոր բառերով, կայուն կապակցություններով և նոր բառիմաստներով:

ԱՐՁԱԿՈՒՐԴ – վկայված է մի քանի իմաստներով՝ *աշխատանքից՝ ծառայությունից որոշակի ժամանակով արձակելը՝ հանգստի, բուժման և այլնի համար, ուսումնական պարապմունքների ժամանակավոր դադարեցում, արձակուրդային ժամանակահատված:* Տնտեսագիտության մեջ ստացել է նոր նշանակություն՝ **վարկառուին տրված հնարավորություն՝ որո-**

**շակի ժամկետով վարկի մարումը հետաձգելու՝ «Ար-
ձակուրդ** են սահմանել հետևյալ բանկերը. «Ակբա-
Կրեդիտ Ագրիկոլ» բանկը մարտի 16-ից մինչև ապրիլի
30-ը ներառյալ չվճարված վարկերի նկատմամբ
տույժ-տուգանք չի կիրառի» (<https://hetq.am/hy/article/114583>), «Ե՞րբ է լրանում վարկային **արձակուրդի**
ժամկետը ՀՀ 17 բանկերում» (<https://iravaban.net/272588.html>):

ԳԻԾ – բազմիմաստ բառ է, ունի քսանից ավելի ի-
մաստներ, որոնցից են՝ *մի կետից մյուսը տարած խազ, մակերեսի երկարություն, երկարությամբ ձգվող ա-
ռարկաների շարք, ռելսային ուղի, երթուղի, ջրատար, դիրքեր, սահմանագիծ* և այլն: Տնտեսագիտության
տարբեր ենթալոբրտներում փոփոխված իմաստը ար-
տահայտվում է **վարկային գիծ** կապակցության մեջ,
այն է՝ վարկառուի հանդեպ բանկի ունեցած իրա-
վաբանորեն ձևակերպված պարտավորությունն է
որոշակի ժամանակաշրջանում սահմանված առավե-
լագույն գումարի սահմաններում նրան վարկեր տրա-
մադրելու, ինչպես՝ «Եթե Դուք **վարկային գիծ** եք վերց-
նում, ապա Դուք գիտեք, որ ունեք հստակ գումար օգ-
տագործելու հնարավորություն» (<https://xelamitvark.am>):

ԴԻՐՔ – ունի *դրվածք, գորքի դասավորության տեղը
ռազմադաշտում, մարդու գրաված տեղ՝ աստիճան,
պաշտոն, մարմնի վիճակ, ռազմական ամրություն՝
կառուցում* և այլն: Մի շարք դարձվածքների բաղադ-
րիչ է՝ *դիրք ընդունել, դիրք բռնել, դիրքերը զիջել* և

այլն: Տնտեսագիտության մեջ բառը որոշակի բառագուգորդումներում ձեռք է բերել նոր իմաստ. **արժուրթային դիրք**, որը բանկի՝ տվյալ արժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է⁸²: Օրինակ՝ «Հայաստանի **արժուրթային դիրքը** աստիճանաբար թուլանում է» (<https://www.aravot.am/2018/08/01/973187/>), «Արժուրթային դիրքի նորմատիվի խստացումը չի ազդի HSBC Հայաստան բանկի ավանդների քաղաքականության վրա» (<http://www.armbanks.am/hy/2010/04/07/9765/>):

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ* – այս իմաստով համարժեք է **թվային** բառի նոր իմաստին. ունի **առցանց / վիրտուալ** նշանակությունը, ինչպես՝ **Էլեկտրոնային գործարք / փող / առևտուր / բանկ**: Օրինակ՝ «**Էլեկտրոնային փողը** տեխնիկայի (համակարգիչ, բջջային հեռախոս և այլն) միջոցով, էլեկտրոնային եղանակով փոխանակվող արժեքն է» (<https://abcfinance.am/financialservices/emoney.html>), «**Էլեկտրոնային առևտուր**. համացանցի միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեություն կամ ցանկացած գործարք, որը իրականացվում է էլեկտրոնային եղանակով...» (<http://www.irtek.am/views2/home.aspx?lang=hy-am>)

ԹԱՂՈՒՄ – ունի *հուղարկավորություն, թաղման արարողությունների ամբողջություն* իմաստները: Այս

⁸² Տե՛ս **Ա. Մարկոսյան, Տ. Դավթյան**, Ամենագործածական տրնտեսագիտական տերմինների բացատրական բառարան, Եր., 2008: Այս ոլորտի բառերի իմաստները այսուհետև տրվում են նշվ. բառարանով:

ուրրտում բառը գործածվում է հետևյալ նշանակությամբ՝ **հետագա օգտագործման համար ոչ պիտանի թափոնի վերջնական տեղադրումը հատուկ առանձնացված տեղերում**, ինչպես՝ «Արտադրության և սպառման **թափոնների թաղումը** ենթադրում է անսահմանափակ ժամկետով դրանց տեղադրումը նշանակված վայրում» (ՀՀ Կառավարության 2012 թ. ապրիլի 26-ի նիստի N 16 արձանագրային որոշում):

ԹՂԹԱԿԻՑ – արտահայտում է մի քանի իմաստներ՝ *լրագրող, հոդվածագիր, մեկի հետ նամակագրություն ունեցող անձ, թղթակից անդամ՝ ակադեմիական կոչում*: Այս ուրրտում նոր իմաստը երևան է գալիս **թղթակից / թղթակցային բանկ** արտահայտության մեջ. նշանակում է այն բանկը, որը **ֆինանսական գործառնություններ է իրականացնում մեկ այլ բանկի հետ՝ ըստ համաձայնագրի**, ինչպես՝ «**Թղթակից բանկի** անունով հաշիվը բացվում է վերջինիս կողմից ստորև նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում...» (<http://www.irtek.am/views/act.a.spx?aid=9977>):

ԹՎԱՅԻՆ* – վերը նշված ուրրտներից բացի՝ այս տիրույթում նույնպես **թվային**-ը հանդես է գալիս նոր նշանակությամբ, ինչպես, օրինակ՝ **թվային բանկ, թվային հաճախորդ, թվային նախաձեռնություն, թվային գործարք** և այլն: Օրինակ՝ **թվային բանկ** նշանակում է *առանց բանկ հաճախելու համացանցի միջոցով անկանխիկ բանկային գործարքների իրականացումը*, կամ՝ **թվային հաճախորդ**-ը այդ գործարքներից օգտվողն է: Օրինակ՝ «Հաղթող **թվային բանկերը**

ընտրվել են հետևյալ չափանիշների հիման վրա՝
• թվային հաճախորդների ներգրավման և սպասարկման հուսալի ռազմավարություն, • **թվային հաճախորդների** թվաքանակի աճ, ...**թվային նախաձեռնությունների** արդյունքում ստացված զգալի օգուտների վկայություններ» (<https://www.evocabank.am/news/view/global-finance2018.html>):

ԶԲԱՂՎԱԾ – արդի հայերենի բառարաններում այս բառաձևը չունի բառարանային գրանցում, այսինքն՝ **զբաղվել** բայի հարակատար դերբայն է, ոչ ավելին: Մինչդեռ այս ոլորտում տեղի է ունեցել խոսքիմասային անցում՝ իմաստի փոփոխությամբ: Բառաձևը դարձել է նաև գոյական և նշանակում է **վարձու և ոչ վարձու աշխատող անձ**: Օրինակ՝ «**Զբաղված** համարվում է անձը (ըստ ԱՄԿ սահմանման), ով հետազոտվող շաբաթում ունեցել է վարձու կամ ոչ վարձու աշխատանք....» (<https://www.armstat.am/file/article/trud0910.pdf>), «...**զբաղվածների** թվի ավելացումը ուղեկցվել է ՀՆԱ ծավալի նվազմամբ....» (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=101624>):

ԼՎԱՑՈՒՄ – բացատրվում է **լվանալ** բայով՝ *մաքրել, կեղտը հանել, նախատինքը մաքրել, ողողել, քշել-տանել, նախատել*: Այս ոլորտում ձեռք բերված իմաստները երկուսն են՝ **ա)** ապօրինի և հանցագործ ճանապարհով կուտակած փողերը անցկացնել այլ երկրներ կամ ապահով բանկեր և օգտագործել, **բ)** անօրինական եղանակով կուտակված փողի հետ կապված գործառնություններ, որոնց նպատակն է թաքցնել դրամագումարի առաջացման կամ նշանակվածության աղ-

բյուրը, դրան տալ օրինական բնույթ: Այս իմաստները երևան են գալիս փողերի լվացում կապակցության մեջ: Օրինակ՝ «Այն փուլում, երբ բանկի ղեկավարությունը կասկածներ է ունեցել, որ այդ հաշիվների միջոցով **փողերի լվացում** է կատարվում, սառեցրել է դրանք» (<https://infocom.am/>), «Ընկերությունը, Կարգը սահմանելիս, հիմնվել է **փողերի լվացման** և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) կանխարգելման...» (<https://web.idram.am/new/am/pag e/96>):

ՇՈՒԿԱ – բառարանում՝ որպես տնտեսագիտական տերմին, բառը (ապրանքաշրջանառության ոլորտ) բացատրվում է միայն *ներքին՝ արտաքին՝ համաշխարհային շուկա* իմաստային զուգորդումներով: Ներկայումս, սակայն, **շուկա** բառը՝ որպես տերմին, էապես ընդլայնել է իր կապակցելիության հնարավորությունները: Երկու և ավելի տասնամյակ է՝ սովորական կիրառություններ են **արժույթի շուկա, ապրանքային շուկա, արժեթղթերի առաջնային շուկա, արժեթղթերի երկրորդային շուկա, ազատ շուկա, տեղական շուկա, հայաստանյան շուկա, իրացման շուկա** և այլ կապակցություններ: Ընդ որու, սրանցից յուրաքանչյուրը ունի առանձին բացատրություն, ինչը վկայում է, որ միևնույն բառամիավորը, պայմանավորված կապակցվող միավորի փոփոխությամբ, որոշակիորեն փոխում է իր նրբիմաստը: Օրինակ՝

• **Ապրանքային շուկա** – երկրի տարածքում որոշակի ապրանքի և փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմանները որոշվում են գնորդի կողմից համապատասխան տարածքում

ապրանքի ձեռքբերման տնտեսական հնարավորություններով և նպատակահարմարությամբ:

• **Արժեթղթերի առաջնային շուկա** – թողարկողը ներդրողներին է վաճառում նոր թողարկված արժեթղթերը, և ի տարբերություն արժեթղթերի երկրորդային շուկայի՝ այն արժեթղթի իրացման գործնթացի առաջնային փուլն է:

ՄՏՎԵՐ* – բառարաններում տրվում է մոտ քսան իմաստ՝ *արևի ճառագայթներից գերծ տարածություն, խավար, մթություն, որևէ մակերևույթի՝ առարկայի և այլնի վրա ընկնող մթնագույն անդրադարձում, թեթևակի մուգ գունավորում* և այլն: Մի շարք դարձվածքների բաղադրիչ է՝ *ստվեր գցել, ստվեր ձգել, մեկի ստվերը դառնալ, ստվերի պես* և այլն: Վերջին տարիներին տնտեսագիտական խոսույթում **ստվերը** գործունեության ձև է, որը դուրս է պետական վերահսկողությունից և չի արտացոլվում պետական վիճակագրության մեջ: Օրինակ՝ «Եթե ես հիմա ասեմ, որ մենք կարճ ժամանակ՝ 2 ամիս հետո, 6 ամիս հետո, ոչ մի **ստվեր** չենք ունենալու, ես թերևս ազնիվ չեմ լինի հանրության ու ձեր առջև, բայց **ստվերի** դեմ պայքարելու արդյունավետ միջոցներ ու արդյունավետ գործիքակազմ մենք ունենք» (<https://www.yerkir.am/news/view/150875.html>):

ՄՏՎԵՐԱՅԻՆ* – տնտեսագիտության մեջ 1990-ականներից գործածվում են **ստվերային տնտեսություն, ստվերային գոտի** կապակցությունները, որոնցում

ստվերային-ը գործածվում է **թաքցնող, քողարկող** նշանակությամբ: Օրինակ՝ «**Ստվերային տնտեսություն** է համարվում տնտեսական այն գործունեությունը, որը գտնվում է պետական հաշվառումից և կարգավորումից դուրս, այդ իսկ պատճառով չի արտացոլվում պետական վիճակագրության մեջ» (<https://hy.wikipedia.org/wiki/>), «**Ստվերային տնտեսության** հետևանքով մեծանում են երկրում առկա կոռուպցիոն ռիսկերը» (<http://etd.asj-oa.am/4554/>):

ՑԱՆՑ* – բառի նոր իմաստներից մեկը դրսևորվում է այս ոլորտում. **առևտրի / խանութների / ռեստորանների / սրճարանների / սպասարկման ցանց**: Նույն ընկերության հիմնած և միննույն անվանումով գործող սպասարկման որևէ ոլորտի համախումբը, ինչպես՝ «ՍԹԱԸ **առևտրային ցանցը** շնորհակալագիր է ստացել Աշխատանքի տոնավաճառին մասնակցելու համար» (<http://www.panarmenian.net/arm/news/5688> 2/), «Սեզաֆրեդո» **սրճարանների ցանց** և այլն:

Դ. Կոսմետոլոգիայի և դրան առնչակից (ՄՊԱ) ոլորտներ: Կենսագործունեության բնագավառներից թերևս ամենաերիտասարդն է և բուռն զարգացում է ապրում: Նորագույն տեխնոլոգիաները այս ոլորտում հասել են բազմապիսի նվաճումների: Այս ոլորտներում կան մեծ քանակությամբ նորաբանություններ՝ թե՛ նորագույն փոխառություններ, թե՛ նորակազմություններ և թե՛ նոր իմաստափոխություններ: Բհարկե, խոսքային այս միջավայրերում վերը նշված ոլորտների համեմատությամբ շատ են օտար բառերը՝ նորագույն փոխառու-

թյունները: Սակայն կան նաև իմաստային անցումներ, որոնցից առավել գործածականները ներկայացնենք ստորև:

ԴԻՄԱԿ – ունի մի քանի իմաստ՝ *մարդու, կենդանու դեմքի նմանությամբ պատրաստված հարմարանք, որ դնում են դեմքին որոշ խաղերի ժամանակ, անճանաչելի դառնալու՝ ծպտվելու համար դեմքի վերևի մասը պատող, աչքերի մասը բաց թողնված ծածկոց, արտաքին կեղծ ձևացում, որի տակ թաքցվում է իսկական էությունը, հակազգահ՝ դեմքը ծածկող մասը* և այլն: Այս բառը նաև մի քանի դարձվածքների բաղադրիչ է, ինչպես՝ *դիմակ դնել, դիմակը հանել, դիմակը պատրո(վ)ել, դիմակն ընկնել, դիմակը վար առնել* և այլն: **Դիմակ դնել** դարձվածքը բացատրվում է *կեղծել, իսկական էությունը թաքցնել* իմաստներով:

Այլ են ՄՊԱ ոլորտում այս միավորների իմաստները: Առաջին իմաստով նշանակում է **տարբեր նյութերից պատրաստուկ՝** նախատեսված դեմքի, ձեռքերի մաշկի խնամքի համար: Երկրորդով անվանում է այդ **պատրաստուկի կիրառությունը**: Օրինակ՝ «Ընդհանրապես, բանանով, խնձորով, թուրինջով պատրաստված **դիմակները** շատ օգտակար են մաշկի համար» (<https://www.iammedia.am/>), «Ձեռքերի գեղեցկությունն ու հարթությունն ապահովելու համար NEWS.amSTYLE-ը ձեզ է առաջարկում **ձեռքերի դիմակի** երկու բաղադրատոմս» (<https://style.news.am/arm/news/57665/di-makner-dzerqeri-hamar.html>), «Առաջին հինգ օրերին խորհուրդ է տրվում **դիմակը դնել** ամեն օր, այնուհետև

շաբաթական երկու անգամ» (<https://www.dasaran.am/apps/wiki/view/id/6215>):

ԹԱԼԻՄՄԱՆ – մենիմաստ բառ է, անվանում է *ստարկա, որը, ըստ հավատալիքային պատկերացումների, այն կրողին կամ պահողին հաջողություն է բերում, պաշտպանում է վտանգներից, փորձանքներից*։ Քրննարկվող ոլորտում նկատվում է իմաստային անսպասելի անցում։ Դիմահարդարման մեջ **թալիսմանը աչքը ընդգծող միջոց** է, ինչպես՝ «...երես դժվար է հրաժարվել դրանցից, արժե փոխարինել սև մատիտը, ստվերներն ու **թալիսմանը** շագանակագույն անալոգներով» (<https://kidness-shop.ru/hy/deti/makiyazh-za-50-let->), «Աչքերի գույնն ավելի պայծառ ու խոր դարձնելու համար... կօգնեն գունավոր **թալիսմանները**» (<https://smilez.ru/hy/rody/cvetnaya-tush-dlya-resnic-kak-pravilno-ispolzovat/>):

ԼԻՅՔ – արդի հայերենի բառարաններում վկայված է տասնհինգ իմաստ՝ *լցվածք, այն, ինչ լցված է մի բանի տեղ կամ մի բանի մեջ, ասեղնագործված ուռուցիկ զարդի կամ տառի տակի կարը, մարմնի կենսագործունեության համար անհրաժեշտ սնունդ, փամփուշտ, արկ* և այլն։ Լեզվի արդի փուլում **լիցք** են անվանում նաև քիմիական նյութերի միջոցով **եղունգների արհեստական երկարացումը / աճեցումը**։ Օրինակ՝ «Ուշադրություն՝ գելը, շելակը և **լիցքերը** հեռացվում են հատուկ տեխնոլոգիայով և հատուկ նյութերի միջոցով» (<https://imtun.am>), «Եղունգների **լիցք** ակրիլով և գելով» (<https://biglemon.am/hy/Ani-nail-salo-n-exungneri-licq-gel-akril-zexchov>):

ԿԱԹ – հայտնի է հետևյալ իմաստներով՝ *յուղ և սպիտակուց պարունակող սննդարար սպիտակ հեղուկ, կաթնատու կենդանիներից ստացվող նույն հեղուկը, որ գործածվում է որպես սննդամթերք, մի շարք բույսերի մեջ պարունակվող սպիտակ հեղուկ, սպիտակ գույն, փայլ, շոդ*: Վերջին մեկ-երկու տասնամյակներում բառը գործածվում է ևս մեկ նշանակությամբ՝ **կոսմետիկ կաթ** (դեմքն ու աչքերը մաքրելու խնամքի միջոց, երբեմն հանդիպում է նաև **կաթիկ** ձևով (ռուսերենից բառացի թարգմանությամբ՝ **молочко**): Օրինակ՝ «Կոսմետիկա օգտագործող յուրաքանչյուր աղջիկ շատ լավ գիտի դեմքի մաշկի համար նախատեսված կոսմետիկ **կաթի** «գինը»» (<https://style.news.am/arm/news/10927/demqi-maqrox-kat-tnayin-paymanneru.m.html>): «Մաքրող կոսմետիկ **կաթ**. սա ամենից շատ կիրառվող միջոցն է դեմակիաժի համար» (<https://www.doctors.am/inchpes-maq-rel-shpary>):

ՇԻՃՈՒԿ – ունի հետևյալ իմաստները՝ *մակարդված արյան և ավիշի հեղուկ նստվածք՝ բուժամիջոց, մակարդված կաթի հեղուկային մասը, որ մնում է պանրային նյութերը հանելուց հետո, մածոնից զատվող ջուրը*: Այս բառը ՄՊԱ ոլորտում մի քանի տարվա կենսագրություն ունի. նշանակում է **մզվածք՝ պատրաստուկ**՝ մի քանի բաղադրիչներից՝ նախատեսված դեմքի, պարանոցի, մազերի խնամքի համար: Օրինակ՝ «Երիտասարդացնող **շիճուկ** դեմքի և պարանոցի համար. օգտագործման եղանակը...» (<https://am.oriflame>

.com/), «Դեմքը խոնավացնող **շիճուկ**` մաշկի բոլոր տեսակների համար» (ն. տ.):

ՄԵՐՈՒՑՔ – ունի *եփած կաթի սեր, հասարակության ընտիր`աչքի ընկնող մասը* իմաստները: Այս ոլորտում **սերուցք** է անվանվում դեմքը շպարից մաքրելու միջոցներից մեկը: Օրինակ` «**Մաքրող սերուցք**. ըստ էության, սա նույն կաթն է, սակայն բաղադրությամբ ավելի թանձր և ավելի յուղոտ է. խորհուրդ է տրվում շատ չոր և զգայուն մաշկի համար» (<https://www.doctors.am/inchpes-maqrel-shpary>):

ՄՏՎԵՐ* – վերը նշված իմաստներին զուգահեռ քըննարկվող ոլորտում բառը իմաստային փոխառության հետևանքով արտահայտում է շպարվելու միջոցի` **աչքի ներկի** իմաստ: Օրինակ` «Ընտրեք մետաղական մոխրագույն **ստվերներ** և նրանց հետ բարակ գիծ նկարեք աչքի ամենափոքր անկյունից...» (<https://hy.hydroponicsbc.com/>): Ի դեպ, այս իմաստի համար արդի հայերենում տասնամյակներ կիրառվում էր **ստվերաներկ** կազմությունը: Սակայն լեզվի տնտեսման միտումի ազդեցությամբ վերջին տարիներին սկսել է գործածվել առավել կարճ` **ստվեր** տարբերակը:

Անշուշտ, բոլոր ոլորտներում էլ կան իմաստային անցումներ: Բնական է, որ հարցը ամբողջապես հնարավոր չէ սպառել միայն մի քանի ոլորտում կատարված իմաստային տեղաշարժերի նկարագրությամբ և կամ ծավալային այսպիսի շրջանակում: Թերևս առավել ճշմարիտ ճանապարհ կարող է լինել ոչ միայն նորակազմություններ, այլև իմաստային նորաբանություն-

րակազմությունների, այլև իմաստային նորաբանությունների բազրքույկներ կամ բառացանկեր կազմելը, ինչը որոշակիորեն կլրացնի էական բացը: Ի վերջո, մեր լեզվի արդիիայերենյան բառապաշարը հարաբերականորեն ամբողջությամբ արտացոլող բառարաններն արդեն կեսդարյա պատմություն ունեն, և այս համատեքստում բառերի ձեռք բերած նոր իմաստների ամրագրումը լավագույն դեպքում սահմանափակվում է առանձին հոդվածների շրջանակներում. իմաստները հաճախ ճշգրտվում են այս կամ այն համատեքստի հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|------------|
| Երկու խոսք..... | 3 |
| ՄԱՍ 1. | |
| Նորմավորում և զարգացման միտումներ | 5 |
| 1.1. «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»-ի որոշումները և արդի գրական հայերենի նորմը. բառային կազմ | 6 |
| 1.2. Արդի հայերենի բառապաշարի զարգացման միտումները | 17 |
| 1.3. Բառապաշարի շերտաբանական դասակարգման խնդիրը. հայերենի բառային հիմնական կազմ | 34 |
| 1.4. Արդի հայերենի լեզվական նորմը և կապերի գործածությունը | 65 |
| ՄԱՍ 2. | |
| Հայոց լեզվի բառային կազմի հարստացման հիմնախնդիրներ | 85 |
| 2.1. Օտար բառեր և հայերեն համարժեքներ | 87 |
| 2.2. Փոխառություններ | 107 |
| 2.3. Իմաստավորություն | 136 |

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Յու. Ավետիսյան, Լ. Թեյլան, Լ. Սարգսյան

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

- ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ
- ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հրատարակչական խմբագիր՝ Ա. Հովակիմյան
Համակարգչային շարվածք և խմբագրում՝ Հ. Եսայան
Կազմի ձևավորում՝ Ա. Պատվականյան
Հրատ. սրբագրում՝ Ս. Դավթյան

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 28.07.2020:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 10.875:
Տպաքանակը՝ 100:
ԵՊՀ հրատարակչություն
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



ՆՐԱՏԱՐԱԿՆԵՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2020
publishing.ysu.am